

15208

Գործակացութիւն
հիշատակութեան 6/Կ

891.99

2-66

1884



891
2-66 ր. հ.

Ա. Ա. զիրաւութեան

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Մի պատկեր վաճառականական կեանքից

ԵՒ

ՀՐԴԵԿ ՆԱՏԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Բագուկ մշակների կեանքից:

100%
3/248

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԲԵԼ ԱՊՐԵՍԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
ՑԱՆԿԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՑՊԱՐԱՆ
ՕՐԵԼԵԱՆ ՓՈՎՈՅ, 5

1884

3358

ԽՈՐԻՆ ՑԱՐԳԱՆՔՈՎ ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ

Պ. ՐԱՖՖԻԻ զրականական գործունէութեան

ՔՍԱՆ ՈՒ ՀԻՆԳԱՄԵԱՅ ՅՈՒԷԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՇԻՐՎԱՆԶՈՒԴԻ,

2003

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Декабря 1883 г.

Типографія И. Мартиросіанца. Орбелян. ул., д. № 5

մահապատճեն առաջ առ առ առ առ առ առ առ
ու առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

Ընթերցող հասարակութեան այն համակրութիւնը,
որին «Մշակի» մէջ տպագրուելու ժամանակ ար-
ժանացաւ. «Գործակատարի Յիշատակարանից» աշխա-
տութիւնը, առիթ տուեց մեզ տպագրել տալ նորան
և առանձին գրքոյի ով, Երիտասարդ գրչի այդ առաջին
աշխատութիւնը հայ գրականութեան աղքատիկ գան-
ձարանի մէջ ձգելով, երջանելի կ'համարենք մեզ, եթէ
դորանով մի փոքրիկ ծառայութիւն արել էինք մեր
մանուկ գրականութեան:

Կարդալու սէր, ընթերցանութիւն ժողովրդի մէջ
տարածելու համար ամենից նպատակայարժար է տալ
նըան այնպիսի վիպական գրուածքներ, որոնք և՛ գրա-
ւէին նըանց, և՛ ցոլացնէին լրէինց մէջ նորա կեանքի
լաւ և վաս կողմէր:

Եթէ տխուր հանգամանքներ արգելք եղան մեզ
մեր խոստման համաձայն անցեալ տասի տալ մեր
բաժանորդներին «Կըկնակի Խոտական Հաշուեպա-
հութիւն» անունով գրքոյի ընէ մենք տալով մեր
գլխաւորակչս վաճառական և գործակատար բաժա-
նորդներին երկու նոցա կեանքից վեր առած գրքոյի-

ներ, յոյս ունինք ո՞ր այդ դէպքում յարգելի պարոնները չ'էին տրտնջալու մեր ընարութեան մէջ։

Նուտով մենք նոցա կ'տանք և երրորդ գրքոյիկ, կամ գարձեալ մի վէպիկ նոցա կեանքից և կամ մի համառօտ «Հօահանգ հաշուեպահութեան»։

Ներկայ գրքոյիկ միջ մենք առանձին թերթիկներում տնկագրեցինք ըստ ցանկութեան մեր բաժանորդների և նորա անուններ։ Միայն կ'ներեն մեզ եթէ մենք նրանց տակագսել չտուեցինք ուղղակի գրքոյիկ մէջ. ոչ մի եւրոպական գրքի մէջ մենք տիգափսի ցուցակների չ'ենք հանդեպում։

Արէլ Ապէէսեան

Գ Ո Ր Ծ Ա Կ Ս Ո Ր Ւ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի Ց

I.



ազար ութ հարիւր վաթսուն և ութ
 թուտկանի գարնանալին մի պարզ և
 գեղեցիկ օրերից մէկն էր, երբ ես Շ.
 քաղաքում աւարտեցի իմ ուսման ըն-
 թացքը հոչակառ տէր-Վահակի ու-
 սումնաբանում։ Այդ օրը ինձ համար
 այնքան նշանաւոր էր, ես ինձ այնքան ուրախ և
 բաղդաւոր էի զգում, որ նրա ամենալին մէկ ժամը
 պիտի տպաւորված մնայ յիշողութեանս մէջ մինչեւ
 իմ կեանքի վերջը։ Չորս տարի շարունակ տէր-Վահակի
 ձեռքում տանջվելուց յետոյ, չորս տարի նրա բաժրա-
 րոսական ֆալախիայի տակ չարչարվելուց յետոյ, բնա-
 կան է, որ ինձ անսսահման բաղդաւոր պիտի համարէի
 այդ օրը, երբ վԵրջապէս ազատվել էի անիմով տէր-
 տէրի ինկվեղեցիալից, էլ ինչ երկարացնեմ, ես թեեր
 չունէի, որ ուրախութիւնից թուչի, երբ հօրս գնած մի
 Փունտ թէյը յանձնելով տէր հօրը իբր շնորհակալու-

թեան նշան ինձ տուած կըթութեան համար, վերջին անգամ համբուրեցի նրա կոշտ և զարհուրելի ձեռքը ու դուրս թռայ ուսումնարանից:

Ես մեր տան հերոոն էի այդ օրը, ոչ ոք իմ եղայրներեց կամ քոյրերեց երաւունք չունէր որ և եցէ կերպով կազել իմ քէֆին: Ամենքը դէպի ինձ սիրով և յարգանքով էին վերաբերվում և ինչպէս կարող էին չը յարգել, քանի որ նրանց մէջ ամենակրթվածը և ամենագիտունը ես էի: Քանի որ ամբողջ Ճարտասանութեւնը և Նարեկը գլխեց մինչեւ վերջը անցել էի: Բոլոր հաւաքված իմ շուրջը փայփայում էին ինձ: Մայրս իսկոյն ինձ համար սկսեց պատրաստել իմ սիրած կերպակուը, հայրս խոստացաւ հինգ այն օրը գնել ինձ համար մի նոր բաճկոն (արխալուղ): Մի խօսքով մեր ընտանիքի մէջ այդ օրը անխտել ամենքի սիրոյ և փաղաքշութեան առարկան ես էի: Ամենքը ինձնով էին զրադված, ամենքը աշխատում էին ինձ հաճոյանաւ ամենայն կերպ: Իսկ ես, ինչպէս վայելում է հերոսին, աշխատում էի պահել ինձ խիստ լուրջ և վեհանձն լցված սեպհական արժանաւորութեան զգացմունքներով:

Հայրս չը նայելով իր աղքատութեան՝ այդ օրը խիստ առատաձեռն էր դառել, նա հրամայեց մօրս՝ քացի իմ սիրեցեալ կերակուրեց, պատրաստել և մի ուրիշ տեսակ կերակուր:

Վերել մեր բարեկամներեց մի քանիսին՝ իր անդրանիկ որդու ուսման առիթով կատարվող ուրախութեան մասնակից լինելու, մի և նոյն ժամանակ խորհրդակցելու նրա ապագայի վերաբերմամբ:

— Հարկաւոր է, այ կնեկ, հինգ այսօր որոշել, թէ այսուհետեւ ինչով պիտի պարապվի Խաչին: Ծեծիր երկաթը քանի որ նա տաք է» ասում է առածք: Պէտք է թոյլ տալ, որ նա մի օր անգամ անգործ մնայ, կարող է ծուլանալ ու այնուհետեւ գժուալ կը լինի նրա համար մի գործի կազել:

Մայրս համաձայն չէր հօրս այդ մտքի հետ: Նա ուզում էր, որ ես գոնեա մի ամելս տանը հանգիստ ապրէի և փորձեց հակառակել նրա կամքին, բայց ինչպէս կարող չը իմ հօրս նման մարդու ասածին կինը հակառակել: Նա այնպէս գոռաց լեզք կնոջ վրա, որ նա տեղն ու տեղը լուց ստվիրութեամբ, ինչպէս ամենայն ժամանակ: Իսկ ինչ վերաբերում էր ինձ, ես այդ օրը այնքան ուրախութենից շուարած էի, որ չը գիտէի թէ ինչ մտածեմ: Ես բաւական էի միայն նրանով, որ վերջապէս ապատուել էի տէս Վահակի Փալախկալից:

Այսպէս թէ այնպէս մօտեցաւ կէսօրվայ ժամանակը: Ճաշը արդէն պատրաստ էր: Որովհետեւ այն ժամանակ մեր քաղաքում միմիայն հարուստների տներուն էին գտնվում աթոռներ, ոեղաններ և ուրիշ եւրօպական կահ կարասիք, իսկ աղքատները դեռ ապրում

էին հին աստվական եղանակով, այդ պատճառով մենք ևս իրակ աղքատ ընտանիք՝ ապօռում էինք վերջին եղանակով։ Մայրս մեր բաւական ընդարձակ սենեակի շատակի վրա տարածելով կտակագոյն սփռոցը, ծածկեց նրա երեսը զանազան տեսակ համեստ, էժանագին, բայց համեղ ուստեղեքներով և մրգեղիններով։ Հայրս սպ սում էր հերթերին, իսկ ես անհամբերութիւնից քեզ էր մնում, որ տրաքվէի։ Այդ օրը ուրախութիւնից շատ դէս ու դէն վազվզելով, ոգնել էի և սաստիկ քաղցել։ Ես գայլի ախորժակով սպասում էի այն ըուլէին, եթ պիտի վերջապէս ձեռքս հասցնէի իմ սիրեցեալ կերպին։

Վերջապէս հերթերը եկան և ամենքը, առանց երկարացնելու, ծալսատակ շարվեցին փափուկ մինդարների վրա սեղանի շուրջը։ Հայրս ինձ հրամայեց ոտք վրա ծառայութիւններ անել։

Նշանաւոր էր այդ օրը։ Ես այն ժամանակից մինչև այսօր ևս չեմ մտաբերում իմ կեանքում մի այնպիսի զուարձալի օր, չը նայելով որ այժմ բազմապատիկ բաղդատոր հանգամանքներում եմ ապօռում։ Հերթերը մի մի բաժակ օղիով շնորհաւուեցին հօրս իր որդու վերաբերութեամբ, իսկ ինձ օրհնեցին հազար տեսակ օրհնանքներով։ Մի քանիսը նրանցից ինձ շատ խրատներ տուին իմ ասլագայ կեանքը խելօքութեամբ և խոհեմութեամբ մասին։ Եմ այդ խրատներից միայն

մէկն եմ յիշում, նա ինձ վրա խիստ խորը տպաւորութիւն արաւ և ես երբէք չեմ մոռանայ այդ խրատը։ Նա մինչեւ այսօր եղել է իմ կեանքի զեկավարը, նոյնը պիտի մնայ և մինչեւ իմ մահը։ Խրատողը մեր հարեւան մանրավաճառ Թողոսն էր. մի, ինչպէս պատմում էին, թէ շատ խրամանկ և խարդախ, բայց չափազանց լաելօք մարդ։

—Ո՛ւր որ լինես, ինչ գործի որ կալչես—ասաց նա—աշխատիք քեզանից մեծերի հաւատարմութիւնը գրաւել գէտի քեզ խոնարհութեամբ, բառութեամբ։ Առաջին քո հոգսը լինի մեծերից աչքում սիրելի գառնալ փազաքշելով, կեղծաւորելով, շողոքքութելով։ Չը թոյլ տաս, որ քեզ խարեն, բայց աշխատիք որ ամենայն ժամանակ ինքդ ուրիշներին խարես քո խելքով։ Այնտեղ, ուր տեսնես թէ մի կուէկի անգամ շահ ունես, ամենայն միջոց գործ գեր այդ շահը ըը կորցնելու։ Վնաս չունի, հարկաւոր եղած ժամանակ սուտ էլ տաս, միայն թէ մէջտեղ շահ ունենաս։ Վելչապէս միշտ մտաբերիք Քըիստովի այն պատուէրը թէ «եղէք խորամանկ ինչպէս օձ, իսկ միամիտ ինչպէս աղաւնի»։

Այս խրատը խիստ երկար ու բարակ էր, զարդարուած զանազան առակներով։ Բայց ես աւելորդ եմ համարում նրան ամբողջովին գրել այստեղ, որովհետեւ ես գործնական մարդ եմ և ժամանակ չունեմ իմ յիշաւակարանը լցնել զանազան մանրամասնութիւններով։

Ես այդ յիշատակարանը սկսել եմ նրա համար, որ նրա մէջ գրեծ այն, ինչ որ իմ կեանքի մէջ եղել է նշանաւոր և հետաքրքիս, որպէս զի մի ժամանակ իմ որդեքս կարդան և իմանան, թէ ինչպէս մարդ է եղել երանց հայրը:

Ճաշը վերջանալուց յետոյ՝ հայրս իսկոյն և ելք առանց երկարացնելու խօսք բացեց հեւրերի հետ իմ ապագայի մասին: Սկսվեց երկար ու բարակ խորհրդակցութիւն: Որովհետեւ հեւրերի գլուխները գինով մի փոքր տաքացել էին,—այդ պատճառով իմ ապագայի հարցը դարձաւ նրանց համար խիստ վիճաբանութեան առարկայ: Աս մի կողմ քաշված լուռ ու մունջ խորին ուշադրութեամբ ականջ էի դնում նրանց խօսակցութեան: Հայրս յաւտնեց այն մետքը, թէ մտադիր է ինձ որ և եցէ արհեստի տալ, բայց չը գիտէ որն է արհեստներից աւելի մաքուրը և մի և նոյն ժամանակ արդինաւէտը: Մեր հեւրերի թւում կար մի դարբին, որի որդին ինձանից մի տարի առաջ աւարտելով սւսումը նոյն աշոր վահակի մօտ՝ պարապում էր իր հօր արհեստով: Այդ մարդը խորհուրդ էր տալիս հօրս, որ նա ինձ նոյնակս տայ երկաթագործ թեան որ և իցէ ձիւղը սովորելու: Բայց մանրավաճառ Թորոսը, որի առաւած խրատը վերի գրեցի, խիստ ընդդիմացաւ դարբնի այդ մտքին: Նա ասաց, որ արհեստը դատարկ բան է, թէ նա փոր չէ կշտացնում, բայց միայն մարդու կեանքը մաշում է և օրինակ բե-

րեց նոյն իսկ իր արհեստի նշանակութիւնը պաշտպանող գարբնին:

— Դու ինքդ, պ. Մարութ—դարձաւ նա դարբնին—մեր քաղաքի մէջ ամենաառաջին արհեստաւորն ես համարվում, բայց լինչ ես առաջացրել մինչև այսօր, որ կեանքիդ մեծ մասը արդէն անցել է: Ինչ ես առաջացրել, ասա աեսնեմ, որ ուրիշներին էլ խորհուրդ ես տալիս արհեստ սովորելու շարունակեց նա տաքացած: Զը նայելով որ անդադար ծանը մուրճը ձեռքումդ, կըակի առաջ, արիւն քրտինքի մէջ տաք երկաթ ձեծելով գիշեր ցերեկ չարչարվում ես—քո ընտանիքը շաբաթական գոնէ մի անգամ տաք կերակուրի երես չէս տեսնում: Զէ, ես հակառակ եմ ամենայն տեսակ արհեստներին և եթէ ես որդի ունենալի, թէկուզ ինձ սպանէին, ես նրան չէլ թողնի, որ արհեստաւոր դառնար: Արհեստը բացի նրանից, որ նիւթապէս չէ ապահովում մարդուս, նա մինչև անգամ թթացնում էլ է նրան: Ինչը է նմանում արհեստաւորը մի հասարակութեան կամ հանդիսի մէջ, եթէ ոչ դարմանով լցրած մի տոպրակի: Նա ոչ կանոնաւոր կերպով խոսել գիտէ, ոչ քաղաքավարի շարժիկը և ոչ էլ իրան անձը մաքուր պահել: Արհեստը մարդուս չէ կըթում, այլ մի տեսակ կենդանի է դարձնում:

Այդ կծու նկատողութիւնը արհեստի վերաբերութեամբ մանրավաճառ Թորոսը կարծես թէ հէնց գիտ-

մամբ էր անում, որ լսեղք գարբնին վիրաւորի։ Դարբինը խիստ ամօթխած մարդ էր, նա լսելով այդ կոշտ խօսքերը՝ կարմրեց և ոչինչ չը կարողացաւ պատասխանել։

Երեսում էր, որ ինքը ևս զգում էր իր ոչնչութեանը հարստ հակառակորդի առաջ։

Հայրս երկար վիճաբանութեան վերջ դնելու և հարցը միանգամից վճռելու համար՝ հարցըց։

—Այժմ, պարոններ—ասացէք, ինչ խորհուրդ էք տալիս իմ խաչի համար, ինչ պարապմունքի տամ նրան, որ ապագայում մարդ դառնայ։

—Վաճառականութեան—պատասխանեց ամենից առաջ մանրավաճառ Թորոսը։

—Բայց վաճառականութեան համար չէ որ դրամագլուխ է հարկաւոր, իսկ ես, ինչպէս դուք գիտէք, մի աղքատ մարդ եմ։

—Փոյթ չէ, առոք մի հարուստ վաճառականի խանութ գործակատարի պաշտօնով, նա այնտեղ առետուրը քեւ թէ շատ սովորելուց յետոյ, ինքը կարող է վերջ և վերջոյ սովորել փող ձեռք բերելու հնարը և ժամանակով վաճառական դառնալ, միայն հարկաւոր է երկար համբերութեան ունենալ։

—Այդ ինչպէս կարելի է, դարձեալ ես չեմ հասկանում թէ դատարկ ձեռքով նա ինչ կարող է անել—հետաքրքրվեց հայրս չը կարողանալով Թորոսի խօսքերց մի բան հասկանալ։

—Աշխարհում անկարելի բան չը կայ—հակառակեց մանրավաճառը։ Ես ինքս տասը տասի մի մանրավաճառի մօտ գործակատար եմ եղել գատարկ ձեռքով և ինչպէս տեսնում էք՝ ինքս այսօր մանրավաճառ եմ եւ, փառք Աստուծոյ, մօտ տասը հազարի կարողութեան ունեմ։ Բայց ես գեռ ոչինչ, համեմատելով ուրիշների հետ։ Մակի տուէք մեր քաջագի նոյն իսկ ամենաերկելի վաճառականներին, նրանցից ո՞ր մէկն է մեք գրալանով եղել առաջ։ Ամենքն էլ իրանց ժամանակին գործակատարներ կամ խանութի ծառաներ են եղել, իսկ այժմ ամեն մէկը հարկեր հազարների առևտուր է անում։ Վաճառականութեանը մի այնպիսի պարապմունք է, որ ինքն է սովորեցնում սիրողին փող աշխատելու հնարը։ Հարկաւոր է միայն գտնել նրա գաղտնիքը, այնուհետեւ ամենտին ինչ ինքն ըստ ինքեան հեշտանում է։

—Եւ ինչ գաղտնիք է, այդ պարոն Թորոս—հարցին բոլորը գեիթէ միաբերան։

—Ձեզ համար արդէն ուշ է հասկանալ այդ գաղտնիքը, ձեր ժամանակը արգէն անցել է, իսկ Խաչին կարող է շուտով հասկանալ։ Թող միայն սիրով կաչե այդ գործին, և թող սրանից առաջ իմ առւած խրաները իր ականջում միշտ պահի և երբէք չը մոռանայ, այնուհետեւ այդ գաղտնիքը նրա համար հեշտութեամբ կը պարզմի։

Մինչգեռ սրանք այդ վիճաբանութեան մէջ էին,

Ես ես սկսել էի արդէն մտքումս խորհել իմ ապագայի մասին։ Մանրավաճառ Թորոսի խօսքերը ինձ համար խխտ խորհրդաւոր էին։ Ես չէի հասկանում այդ խօսքերի նշանակութիւնը։ «Այն թինչ գաղտնիք է, որը կարող եմ ես գտնել վաճառականութեան մէջ» մտածում էի ինքս ինձ։ Այդ գաղտնիքը սկսեց ինձ խխտ հետաքրքրել, այնպէս որ փոքր էր մնում, որ ես համարձակվէի բերան բանալ և խնդրել հօրս, որ նա հետեւ Թորոսի խորհրդին և թոյլ տայ ինձ մտնել գործակատար մի վաճառականի մօտ, որպէս զի իմանամ թէ ինչումն է կայանում փող ձեռք բերելու գաղտնիքը։ Բայց ես թնշապէս կարող էի բերան բանալ ինձանլց մեծերի մօտ։ Այդ կը լինէր իմ կողմից մի աններելի յանդքնութիւն և ես հեշտ չէի պրծնի իմ հօր ձեռքից։ Բարեբաղդաբար, առանց իմ միջամտութեան, բանը փոխվեց իմ ցանկացածի համաձայն։ Երկար վիճաբանութիւններից յետոյ ամենքը, և հարկ է, ըացի գարբին Մարութից, որը մինչև վերջը լուսութիւն էր պահում, — համաձայնեցին, որ ինձ համար լաւ կը լինի մտնել վաճառականական ասպարէզ, քան թէ որ և եցէ արհեստ սովորել։ Հայրս վճռեց ինձ յանձնել մեր քաղաքի այդ ժամանակայ ամենայայտնի վաճառական Աղա Գուլամեանցների մանութակտութայի մագագինշ գործակատարի պաշտօնով։

Թէ՛ ես չը գիտէի այն ժամանակ թէ թինչ ասել

է վաճառականի գործակատար և ինչումն է կարանում նրա պարապմունքը, բայց խխտ ուրախացայ հօրս այդ վճռով։ Առաջին՝ ինձ հետաքրքրում էր մանրավաճառ Թորոսի ասած գաղտնիքը և երկրորդ՝ որ ձշմարիտը խոստվանած երբէք ես հակումն չունէի դէպի որ և լեցէ արհեստ։ Ձշմարիտ է, ես այն ժամանակ խխտ տհաս էի, որ կարողանատի ձեշտ գաղափար ունենալ արհեստների նշանակութեան մասին, որովհետեւ իմ տասն և եօթ տարին գեռ չէր լրացել, սակայն իմ ուղեղը այնքան էլ անզարգացած չէր, որ ըստ կարողանայի գէլթ հասարակ համեմատութիւններ անել։ Ես նոյն ըսուէն սկսեցի մտքումս համեմատել գարբին Մարութին՝ մանրավաճառ Թորոսի հետ, ակամայ երկակայելով իմ ապագան իրականացած այդ երկու մարդկանց մէջ։ Մէկը սրանցից իմ աշքի առաջ՝ կանգնած էր առողջ, չափ, ինքը մաքուր, հագուստը նոյնակս մաքուր և նոր, փորբ կուշտ, գրպանը մեշք լվե, յարգտնիքը և պատիւր հասարակութեան մէջ համեմատաբար աւելի։ Որին, խօսելու ժամանակ, ամենքը ուշադրութեամբ ականչ էին գնում, թէկ խօսէր իմարութիւն, որը հանգէտներում իր ընկերների մէջ առաջին տեղն էր նստում, ինչպէս և նոյն օրը մեր տանը։ — Սա մանրավաճառ Թորոսին էր։ Իսկ միւսը նրա մօտ կոշտ ու կոպէտ, մեշտ տիսուր, դէմքը նեհար և ժամանակից առաջ պշկած, վեցը և երեսը սեացած, ձեռքերը քարի նման կոպտա-

ցած։ Մեշտ կեզտաս և անվայելուց հագուստի մէջ, որը հասարակութեան մէջ, ինչպէս և նոյն օրը մեր տանը, ոչ մի յարգանք և համակրութեան չէր վայելում։ Որին խօսելու ժամանակ ոչ ոք չէ կամենում լսել և շատ անդամ ծիծաղի առարկայ է դառնում։ Որը գիշեր ու ցերեկ ֆեղիկասէս աշխատում է տնալին կենդանուց աւելի, բայց և այնպէս հազիւ հազ է կարողանում իր ընտանիքը կերակրել։—Սա դարբին Մարութին էր։ Որքան զանազանութիւն սրա և առաջնի մէջ։

Հասկանալի է, որ այդ երկուսից առաջինի կեանքը նախանձելի էր և եթէ մէկը նոյն ըոսէին ինձ հարցնէր, թէ «Խաչի, ո՞րը կը կամենաս լինել. մանրավաճառ Թորոսը թէ դարբին Մարութը,» պարզ է որ առանց երկար մտածելու ցը ցանկանացի լինել առաջինի տեղ։ Յուդ պատճառով ես խիստ ուրախացաւ երբ հայրս ինձ գլուխ։

—Խաչի, քո վիճակդ որոշվեց. վաղվանից քեզ պիտի յանձնեմ վաճառական Աղա Գուլամեանցների մագաղինը։ Այնուեղ գու գործակատար պիտի լինես։ Սրի, Թորոս աղի և միւսների ձեռքը համբուրիր, նրանց բարի և անկեղծ խորհրդի փոխարէն։

Ես խօնասրութեամբ կատարեցի հօրս կամքը, բուռքի ձեռքը մի առ մի հերթով համբուրելով. Խոստովանում եմ, որ երբ հերթը հասաւ դարբին Մարութին, ես հազիւ հազ կարողացաւ զսպել իմ գգուստները տես-

նելով նրա կեղտի ծալքելով ծածկված ձեռքը։ Ես դժուարութեամբ իմ շրթունքների ծայրերը հասցը նրա կոսկիտ մատերին։ Մանրավաճառ Թորոսը ձակատս համբուրելով և օրհնելով, մի անդամ ևս կըկնեց եր խըատը։

—Խոնարհ և հլու հպատակի կը լինես Աղա Գուլամեանցներին, կը կատարես այն, ինչոր կը հրամայեն։ Զը խարվես, բայց աշխատիր խարել, միայն զգուշութեամբ և խոհնեմութեամբ, որ չը պարզվի։ Թեքվիր և ծռվիր ինչպէս օձ, բայց միամիտ ձեւացրու քեզ ինչպէս ոչխար և դու շուտով կը մտնես Աղա Գուլամեանցների գրպանը։

II.

Ուրախութենից գրեթէ ամբողջ գիշերը շարունակ անկողնիս մէջ տրորվում էի այս ու այն կողմը, ստեղծելով երևակալութեանս մէջ հազար տեսակ պատկերներ իմ ասլագայ կեանքից և մտածելով զանազան տեսակ ծրագիրներ այս կեանքի ուղղութեան մասին։ Լուսաղէմին քունը յաղթեց ինձ և ես մի երկու ժամ քնեցի։

Արեգակը բաւական բարձրացել էր։ Եթի ես զարթեցի շատակով վեր թռայ անկողնից, երեսս լուսցի և սկսեցի շորերս հագնել որպէս զի պատրաստ լինեմ հօրս առաջին հրաւէրին, որի հետ ես այն օրը պիտի գնալի

Աղա Գուլամնեանցների մագագինը: Հայրս հինց առաջին
երեկուեան, մեր հիւրերը քրվելուց յետոյ արդէն գնա-
ցել էր մագագին և այնտեղ իմ մասին խօսել:

Թէ ինչ պայմաններով ես պիտի ծառաւիչի Աղա
Գուլամնեանցների մօտ, որքան ոռջիկ պիտի ստանայի,
այդ ինձ ըստ յայտնեց հայրս: Միայն երբ մենք հասանք
մագագինը և նա իմ ձեռքս բռնելով յանձնեց Մակար
աղին, այսքանը լսեցի նրաբերանց իմ մասին:

— Այսուհետեւ; Մակար աղա, այլ ևս սա իմ որդին
չէ, այլ քոնը, յանձնում եմ նրան ոտով գլխով քեզ:
Վարվիթ նրա հետ, ինչպէս դու գիտես, միայն թէ ժա-
մանակով մարդ դառնայ քո ձեռքում:

— Մարդ դառնալը կախված է իրանից: Եթէ խո-
նարհ, դոչազ, խօսք լսող կը լինի, և հարկէ, ժամանա-
կով մի կտոր հացի տէր կը դարձնեմ, իսկ եթէ ոչ
մեղքը եր վզին: Իմ ձեռքում շատերն են մարդ դառել
և շատերն էլ մարդ դառնալու մօտիկ են, եթէ քո որ-
դին էլ լաւ կը ծառաւի ինձ, իմ հրամաններս խոնար-
հութեամբ կը կատարի, կարող է ժամանակով նրանց
նման լինել:

Աղա Գուլամնեանցը այդ խօսքերը արտասանեց մի
այնպիսի անդուս ինքնավստահութեամբ և աներկրայ
եղանակով, որ ես գգում էի, թէ կանգնած եմ մի գերբ-
նական ոյժի առաջ, որը յերաւի, եթէ ուզենայ կարող
է ամենայն ինչ անել ինձ համար:

Հայրս գլուխ տուեց ու հեռացաւ, ես մնացի մա-
գագինում:

Մագագին ասված բանը մի լայն և ընդարձակ
խանութ էր չորս մեծ գոներով և մի քանի պատու-
հաններով: Նա լիքն էր զանազան տեսակ թանկագին
և էժանագին ապրանքներով սկսած ամենաընտելը ար-
տասահմանեան նուրբ գործուածներից մինչև Ռուսաս-
տանի ամենահասարակ կտորները: Դեռ մինչև այն օքը
կեանքումս տեսած ըստ լինելով այդչափ հարստութիւն
միատեղ՝ ես բերանս բաց՝ շուարածի նման, նայում էի
այս ու այն կողմը ինչպէս մի գիւղական մանուկ, որ ա-
ռաջին անգամ մտնելով քաղաք, աչքերը ճլրգած ըստ
գիտէ բարձրացին տներից որ մէկի վրա դադարեցնէ իր
ուշադրութիւնը: Բայց ամենից աւելի գրաւեցին իմ ու-
շագրութիւնը զաստօվկայի վրա շարած ապակեայ պա-
հարանների մէջ կանոնաւոր կերպով դասաւորած զա-
նազան տեսակ ոսկեղինները և թանկագին քարեղին-
ները, որոնց գրաւել փայլը կարծես թէ մի տեսակ կա-
խարդական զօրութիւնով կաշկանդում էր իմ ուշք ու
միտքը: Առաջին անգամ այստեղ գրգռվեցին իմ մէջ
շահասկրական զգացմունքները և ես սկսեցի իմ մտքում
նախանձել աղա Գուլամնեանցներին, որոնց բաղդր պար-
գեել էր այդչափ հարստութիւն: «Ախ, եթէ իմը լինէր
այդ հարստութիւնը — սկսեցի մտածել ինքս ինձ նայե-
լով ագահ աչքերով թանկագին իրեղիններով լի պա-

Հարանների վրա—որքան բաղդաւոր կարող էի լինել ես: Գոնէ միայն այսքան ոսկեղինների կէսը ունենայի, ասդեօք ինչեր չէի կարող անել նրանցով: Ի հարկէ, եթէ իմը լինէր, ամենից առաջ ձեռք կը բերէի մի քանի ձեռք լաւ հագուստներ թէ ինձ համար և թէ իմ ընտանիքի համար: Կարող էի մինչև անգամ խանութքանալ ու ինքս էլ վաճառական գառնալ, տարեկան մի անգամ ուրիշների պէս Ռուսաստան գնալ, շատ լաւ-լաւ քաղաքներ տեսնել:

Մինչդեռ ես այդ մտածմունքների տակ իմ պատանեկան երեակալութեան մէջ կառուցանում էի մէկը միւսից շքեղ օդային ամրոցներ, յանկարծ,—ոչ իբականութիւն,—մէկ էլ տեսնեմ մէկը շնչիս մի ապակ տուեց: Յետ նայեցի տեսնեմ Մակար աղան է:

—Ի՞նչ ես հայվանի պէս ռեխզ ծռել ու նայում, արի այստեղ:

Այս ասելով, նա կոպտութեամբ բռնեց իմ թերեց և քաշեց զաստօյկայի ներսի կողմը, ուր շարված էին մի քանի գործակատարներ մաքուր հագնված:

—Գրիգոր այս տղան այսօրվանց մտել է ինձ մօտ ծառայելու: Լաւ մտիկ արա սրան, անս մագաղնում ինչ նրա անելու գործ կայ յանձնիր, որ կատարի: Կարդալ գրել գետէ, կարող է հաշիմներ արտագրել, բայց առ այժմ հարկաւոր չէ նրան այսպիսի գործեր յանձնել, թող մի քանի ժամանակ ուրիշ բաներով պարապվե մինչև որ տեսնենք ինչպիսի պտուղ է:

Աղա Գուլամեանցը այս ասում էր գործակատարներից մէկին, մի կարճահասակ 22—24 տարեկան երետասարդեւ:

Մագաղնի առաջ, փողոցի վրա, գործակատարներից մի քանիսը զբաղված էին Ռուսաստանից նոր ստացած ապրանքների հակեր բանալով: Գրեգորը ինձ պատուիրեց մի ուրիշ փոքրիկ տղայի հետ—որը ինչպէս երեւում էր մագաղնում մանր գործեր էր կատարում.— բացիած կտորները ներս բերել և հաւաքել մագաղնի մի անկիւնում: Ես մի կողմ ձգեցի գդակս և սկսեցի կատարել այդ առաջին պատուէրը: Որպէս զի իմ զօշաղութիւնս ցոյց տամ Մակար աղին. որը այդ ժամանակ կանգնած մտիկ էր անում ապրանքներին. ես ըսկեցի որքան կարող էի եռանդով գործել: Մինչդեռ ինձ հետ կրող միւս տղան ամենայն անգամ վերցնում էր երկու կամ երեք կտոր ապրանք, ես աշխատում էի երկու անգամ նրանց աւելի բարձրացնել և երկու անգամ արագ վագել: Ես կարծում էի թէ շուտով Մակարաղայի բերանից կը լսեմ մի գովասանական խօսք իմ աշխատասիրութեան մասին, բայց սխալվեցի: Մակարաղան ոչ միայն ինձ չը գովեց, այլ մինչև անգամ ուշադրութիւն էլ չէր գարձնում ինձ վրա: Ես մտարերելով մանրավաճառ թորոսի խրատը թէ «համբերիր», չը վհատվեցի և սկսեցի աւելի ու աւելի եռանդով գործել: Կէսօրվայ ժամանակ էր: Եղանակը չը նայելով որ

գարնանային էր, սակայն շոքը անտանելի էր. քրտինքը, շատ վազված էր, սկսեց երեսովս աղքեւը նման թափվել. Ձեռքերս, որ մինչև այն օրը սովորած չէին երկար աշխատութեան. շատ ապրանք կրելուց բոլորովին թուլացան, ոտքերս շատ գնալ և գալուց յոգնեցին և ծալծըլում էին. Բայց ես ուշադրութիւն չէի դարձնում. այլ որքան կարելի էր աշխատում էլ մինչև վերջը քաջութեամբ կատարել ինձ յանձնված գործը. Առաջին օրն էր, հարկաւոր էր աշխատասիրութիւն ցոյց տալ:

Վերջապէս ապրանքները վերջացան:—Ես Գրիգորի պատուէրով, կանացի զգուշութեամբ հաւաքելով հակերից մնացած թոկերի կտորտանքը, վիսիաթները մի կողմ գնելով և մաքրելով մագաղինի առաջը սփռված յարդեց, ձեռքերս ու երեսս լուացի ու իմ տեղը կանգնեցի:

Մագաղինում գործակատարներից ամեն մէկը ունէր իր նշանակուած տեղը: Գրիգորը, իբրև ամենամեծ գործակատար, բռնած ունէր ամենա առաջին տեղը, այն է, դրամարկղի մօս: Նա աղա Գուլամեանցների խանութի գանձապահն էր: Նա էր ստանում փող մուշտարիներից և նշանակում հաշվամատեաններում, նոյնակս նրա ձեռին էր մագաղինի բոլոր ծախքը: Գրիգորից հեռու աստիճանաբար կանգնած էին մնացեալ գործակատարները թւով չորս հոգի: Մէկը ոսկեղէնների մօս, միւսը մի քանի քայլ հետո սրանից մանուփակտուրայի

ապրանքների թանկագլն կառըների մօս, երբորդը և չորրորդը համեմատաբար էժանագին ապրանքների կողմ: Ազա Մակարը ինձ հրամայեց տեղ բռնել սրանց բոլորի վերջում և պատուիրեց ամենավերջին գործակատարին, որ ինձ սովորեցնէ առևտուրի եղանակը, այսինքն մուշտաբիների հետ խօսելու և վարվելու ձեր, չեթ կամ ուրիշ կտորներ չափելու արուեստը և այլն:

Իոկ ինչ վերաբերում է այն պատանուն, որը ինձ հետ դրակց ներս ապրանք էր կրում, նա կանգնած էր գաստոյկայից գուրս գէսի դրան կողմը: «Ուրեմն մի բան նկատել է իմ մէջ Մարկար-աղան, որ հէնց առաջին օրը ինձ իրաւունք է տալիս մտնել գաստոյկայի ներսը»—մտածեցի ես: Ես նկատեցի դրան մօս կանգնող պատանու դէմքի վրա դժգոհութեան ժափտ և իսկոյն հասկացայ, որ նա ինձ նախանձում էր:

Իրեկնադէմին աղա Գուլամեանցը վերադառնալով շուկայից՝ հրամայեց մագաղինը կողմել: Գործակատարները կատարել արագութեամբ կատարեցին նրա հրամանը և մի ըստէում բոլորս գըսում շարվեցինք նրա շուրջը: Ես ամենայն կերպ աշխատում էի աղա Գուլամեանցի աչքին երեալ, նրա ուշադրութիւնը ինձ վրա պահել: ՄԵ քանի պատուէրներ տալով նա արձակեց բոլորին, իսկ ինձ հրամայեց իրան հետ գնալ:

Օրը գեռ այնքան չէր մթնել: Ցերեկվայ շոքեց յետոյ երեկոյեան զովարար օղը թափանցելով ի՞մ թո-

քերի մէջ կազմես, թէ մի տեսակ գուրելան և թարեցուցիչ հեղուկ էր տարածվում իմ յոդնածութենից թուլացած զղերի մէջ։ Ես գնում էր աղա Գուլամեանցի ետևից ի նշան խոնարհութեան մի քանի քայլ հեռու աղահելով ինձ նրանց։ Ուտքերս հազիւ հազ էր առաջ շարժում ամբողջ օրը ոտքի վրա անցնելուց յետոյ։ Ժամանակ առ ժամանակ աղա Գուլամեանցը իր գլուխը բարձրացնելով և երեսը շուռ տալով՝ յետ էր մտիկ տալիս, բայց ոչ թէ ինձ վրա, այլ հեռաւ, կարծես թէ կամենալով իր հայեացքով շափել մեր անցած ճանապարհը։ Մեր անցած փողոցը քաղաքի գլխաւոր շուկան էր, որին տեղացիները անուանում էին Գուրջի-բազար։ Այստեղ տիրում էր սաստիկ աղմուկ և դղրդոց։ Մըգավաճառ թուրք խանութպանները, անկանոն կերպով պաշարելով խանութների առաջը գանազան տեսակ մըրգգեղիներով, իրանց երկարաձիգ արխալուզների վիշերը դէպի յետ ծալած, թէքերը հաւաքած մինչև արմունկները, կիսավայրենի ձայներով գոռում ու բղաւում էին հբաւիրելով անցուգաղձ տնողներին էժան գներով գնել թարմ մըգեղիններ։

Եկէք, այ անցնող աղաներ էժան եմ ծախում ախտուի թարմ սալորը, ֆունտը երկու կոպէլ, ֆունտը երկու կոպէլ—լսլում էր մի կողմից։

Այստեղ եկէք, ինձ մօտ վազէք, այ էժանտգին ապրանք սիրող աղքատներ, հասած թուլթ, համեղ

թուլթ, հինգ ֆունտը երկու կոպէլով եմ ծախում։ Եկէք, թառաշ առէք, այ խելք ունեցող աղքատներ—գոռում էր միւսոր։

Թուլթ ծախողի գոռոցը անհետեանք չը մնաց, ես նկատեցի, որ վայտի վրա յենլով մօտենում էր նրան մի միջահասակ մարդ։ Նրա բոլորովին Ճերմակած մազերը և ղանդաղ քայլափոխսութիւնը հաստատում էին, որ ահա այսօր, վաղը նա կը մտնի գերեզման։ Ծերունու երկար և գէսկի ցած բուսած բեխերը խառնվելով բամբակագոյն միրուքի հետ, բոլորովին ծածկել էին նրա ասամնազուրկ բերանը։ Նրա գէմքը գոնիստ էր ինչպէս մի անշունչ գիտիկ կերպարանք, աչքերը պըշկած և խորը փոսերի մէջ թաղված։ Ես նկատեցի այդ մարդու կերպարանքի վրա մի տեսակ մոայլ ժամկու, մի ժամկու, որ բացի ծերունական ծանր կեանքի դժգոհութենից արտայալում էր և ուրիշ անբացատրելի վշտեր։ Ես վերջերում շատ անգամ եմ առելու ունեցել այդ տեսակ ժամկուներ նկատել միայն այն մարդկանց գէմքերի վրա, որոնք իրանց կուրծքի տակ թագցրած ունեն ծանր և մաշող ցաւեր։ Որոնք տարիների ընթացքում տանջվում, հալում են այդ ցաւերի ճնշման ներքոյ չունենալով հնար գէթ երբեմն թեթևացնել իրանց կուրծքը, գուրս թափելով նրանց լեզուի արտայալութեամբ։

Ծերունին գալիս էր մեր աջ կողմից և որպէս զի միրգալահառին մօտենար, հարկաւոր էր նրան անցնել

աղա Գուլամնեանցի դէմ, որը գնում էր, ինչպէս ասացի,
ինձանից մի քանի քայլ առաջ: Ծերունին մօտեցաւ.
աղա Գուլամնեանցը նկատելով նրան, երեսը շուռ տուեց
հակառակ կողմը և ձանապարհեց բեւ շեղվեց, կարծես
թէ կամենալով որ ծերունին իրան ըը նկատէ: Ես նրա
դէմքի վրա, երեսը շուռ տալու ժամանակ, նկատեցի
մի անախորժ ժպիտ: Պարզ էր որ նա խոյս էր տալիս
ծերունուց, որը այդ ժամանակ մի խորը թափանցող
հայեացք ձգեց նրա վրա:

Մենք մի քանի վայրկեանում առաջ անցանք, իսկ
ծերունին յետ մնալով շարունակում էր մրգավաճառի
առաջ կանգնած նայել մեր եսուկց երբեմն շարժելով
եր գողդոջուն գլուխը անբաւական ձեռվ: Մենք բաւա-
կան հեռացանք, ծերունին իր հնամաշ արխալուզի գր-
պանից հանեց մի մեծ թաշկինակ և սփռեց գետնի
վրա: Մրգավաճառը, կռի թեւ լցնելով թութով, կը-
ռեց և պարանեց թաշկինակի մէջ:

Ինձ սկսեց ակամայ հետաքրքրել ծերունու աղա
Գուլամնեանցի վրա ձգած խորհրդաւոր հայեացքը: Ես
մտածեցի, որ նրանց մէջ անշուշտ մի որ և իցէ գաղ-
տնիք կար:

Փողոցի ծարքում գտնվում էր հայոց եկեղեցին:
Ես առաջուց գետէի, որ աղա Գուլամնեանցը մի խիստ
աստուածապաշտ և եկեղեցասէր քըստոնեայ էր հա-
մարդում մեր քաղաքում և լսելով գանգահարութեան

ձայնը գետէի, որ նա անշուշտ կը մտնի եկեղեցի:
Եկեղեցու գըանը մենք հանդիպեցինք տէր-Վահա-
կին, որը շըջապատած մի քանի տիրացուներով և բա-
րեկաշտ ծերունիներով մի ինչ որ բանի մասին տաքա-
ցած խօսում էր:

Օրհնեա տէր—ասաց աղա Գուլամնեանցը ձեռները
պարսկական ձեռվ գնելով կուրծքին:

— Աստուած օրհնի, աղա Մակար, պատասխանեց
քահանան խաղացնելով իր դէմքի վրա մի կեղծ ժպիտ,
և մօտենալով մեզ:

— Հըմ, շուտ կօրհնես ժամը թէ՞ ոչ:

— Հէնց ձեր հրամանոց էի սպասում, աղա Մակար,
այս ըոսէիս կը սկսէմ: Այ տղա Խաչի, այս ինչ է, չը
լինի թէ Մակար աղայի մօտ ես մտել ծառայելու—
հարցըց ինձ տէր-Վահակը:

— Այն, պատասխանեցի ես:

— Նատ լաւ ես արել, խոնարհ և հնագանդ եղեց
լաւ ծառայեր: Մակար աղան շատ ազնիւ աղա է, նա
կարող է քեզ ժամանակով մարդ դարձնել: Վատ տղայ
չէ Խաչին—դարձաւ տէրտէրը Մակար աղային—զօւադ
ու լսելոք է, միայն երբեմն ականջները հարկաւոր է
քաշել, որ մեծերի խրառը ըը մոռանայ:

— Այդ թողնենք, տէր-Վահար, ես քեզ հետ հար-
կաւոր գործ ունեմ, նրա վրա խօսենք—դարձաւ յան-
կարծ աղան տէր-Վահակի թևեց բռնելով քաշեց մի

կողմ: Ես քաշլեցի մի կողմը, նրանք սկսեցին խօսել: Եթեմն նրանց խօսակցութենից իմ ականջին հասնում էին հատուկտոր գարձուածներ կամ ընդմիջեալ խօսքեր օրինակ «աղջիկը չէ ուզում»: «թարսվել է, կամ «քսան հատ կանաչ կարմիրանոց» և այլն,

Վերջապէս նրանք աւարտեցին խօսակցութիւնը և մի քանի բոպէկց յետոյ ժամասացութիւնը արդէն ըսկված էր: Աղա Գուլամեանցը ամենից առաջ սեղանի հանդէպ կանգնած ջերմեռանգութեամբ ծուեր էր դընում ու աղօթում: Ես ևս սկսեցի աղօթել նախ և առաջ կրկնելով մի անգամ տէրունական աղօթքը, «Հայրմաքը» նոյն հզանակով, ինչպէս ուսումնաբանում սովորցրել էր ինձ տէրմահակը:

Ես Ճշմարիտն ասած, ըստականացայ միայն այդպաշտօնական «Հայրմաքը», ինձ թւում էր, որ նրանով Աստուծուց շատ քիչ բան է խնդրվում: Ես կարծում էի եթէ բոլորը, ինչ որ ասլած է այս աղօթքի մէջ, Աստուծած կատարի—ես շատ մեծ մարդ չեմ դառնայ, իսկ ես ուզում էի, ինչպէս և այժմ էլ ուզում եմ մեծ մարդ գառնալ: Օրինակ, նրա մէջ ասլած է «մեր ամեն օրվայ հացը տուր մեզ այսօր»: Միթէ այդ մի մեծ բան է, մտածում էի ես, եթէ Աստուծած ամեն օր կերակրէ ինձ այնակս, ինչպէս մինչև այսօր է կերակրել Զէ հարկաւոր է ուրիշ բաներ էլ խնդրել Աստուծուց, մի և նոյնն է, խնդրում եմ, աւելի լաւն է շատ բաներ կը

խնդրեմ, կը կատարվի խնդիրս լաւ, չի կատարվի, խօսմինձանից մի բան չի պակսով:» Եւ ես սկսեցի հազար տեսակ բաներ բաշտել Աստուծուն ձեռքերս պարզելով և աչքերս համեստութեամբ բարձրացնելով դէպէ վեր:

Առաջին մի բաղձանքն էր, որ Աստուծած ինձ այնքան շնորհ տալ, որ ես աղա Մակարի աշքում սկրելի դառնամ, օրէցօք նրա մօս առաջանամ, հասնեմ Գրեգորի աստիճանին, այսինքն մինչև մագաղինի գրամարկը: Այնուհետեւ աւելի ու աւելի առաջանալով, վերջապէս ինքս էլ մի օր աղա Գուլամեանց դառնամ, նրա նման հարստութիւն գեզեմ, փառաւոր տներ շնել տամ, կառքեր, ծառաներ, գործակատարներ պահեմ և վերջապէս մեր քաղաքի մէջ աղա Գուլամեանցի պէս ամենքի համար նախանձի առարկայ լինեմ: Այդ տեսակ և հազար ուրիշ բաներ էլ խնդրում Աստուծուց, վերջումն էլ խոսանում էի, որ եկեղեցի շնել կը տամ, եթէ նա իմ աղօթքը կատարի, եթի պատահմամբ երեսս դէպէ աջ շուռ տալով, տեսնեմ մի ծերունի եկեղեցւոյ սանդուխտով դժուարութեամբ ցած է իջնում: Ես իսկոյն Ճանաչեցի—դա այն ծերունին էր, որին պատահէ էլ էլնք մի փոքր առաջ շուկայում: Իջնելով եկեղեցու յատակը, ծերունին երեք անգամ համբուրեց գրան մօտի առաջին սիւնը և զգուշութեամբ փայտը դնելով պատի մօտ, բուխարայի մորթուց կարած երկար ու սրածացր

գտակը ձեռքին, գնաց եկեղեցու մէջտեղը: Ես մոռացած իմ աղօթքը նայում էր ծերունուն: Մի բան կարծես թէ ձգտում էր իմ հայեացքը դէպի նա:

Վաղեմի տաճարի հնամաշ և հնացած սիւները վերևեց գրկելով իրարու՝ տարածել էին եկեղեցու պատառութած փսխաթնեցով ծածկված խոնաւ յատակի վրա իրանց մութ շուաքը: Խոկ պատուհաններից զուրկ քրքրված պատերը մուայլ և տխուր կերպարանք էին ստացել: Նայելով ծերունու մաշված և գունատ երեսին և կնձռոտած ձակատին, ինձ թրում էր, որ նրա հոգեկան տրամադրութեւնը բոլորովին համապատասխանում էր եկեղեցու մուայլ տեսքին: Մօտենալով մէջտեղի սիւներից մէկին, նա գտակը կարծես թէ անզգայաբար ձգեց յատակի վրա և երկու դորդոջուն ձեռքերը բարձրացնելով դէպի վեր, սկսեց աղօթել: Նա կանգնած էր աղա Գուլամեանցից ոչ այնքան հեռու, յետեւի կողմում, այնակս որ, եթէ վերջնինը երեսը շուռ տար, հայեացքը կընկնէր ուղղակի ծերունու դէմքին: Մի քանի ըոսէ ծերունին, երեսը դէպի վեր բարձրացը աղօթում էր անշարժ արձանի նման, ժամանակ ժամանակ եր ցամաքած շրթունքները դողդողացնելով: Ես ապուշի նման նայում էի նրա երեսին, երբեմն երեսս անգիտակցարար շուռ տալով և դէպի աղա Գուլամեանցը: Անցան առաջին ըոսէները, ծերունին խոնարհեցնելով գլուխը մի քանի անգամ խաչակնքեց երեսը և սկսեց

ծունը դնել: Այդ ժամանակ ես մի բան նկատեցի: Այնենայն անգամ երբ ծերունին եկեղեցու յատակը համբուրելուց յետոյ բարձրանում էր, նա մի տեսակ սուր և սպառնալի հայեացք էր ձգում աղա Գուլամեանցի կողմը և երկու ձեռքերով իր կուրծքին խփում: Թէ ինչ էր արտայալում ծերունու այդ շարժմունքը—ինձ համար անհասկանալի էր, միայն պարզ էր, որ նրա աղօթքը մէջ խառն էր և աղա Գուլամեանցի անունը:

Ժամասացութիւնը վերջացաւ: Տէր-Վահակը, աւարտելով վերջին «Երթայք խաղաղութեամբ և Տէր եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեան ամէնը», սուրբ աւետարանը պահեց, որ բարեպաշտ ժողովուրդը համբուրէ: Ես վերցը գտակս և բանալիները և եկեղեցուց դուրս գալով, դրանը սպասում էի աղա Գուլամեանցին:

Մի քանի ըոսէից յետոյ մենք «խաղաղութեամբ և Տէրը մեզ հետ» ձանապարփեցինք տուն: Ծերունին ինձ խիստ հետաքրքրում էր, իմ միտքս այնքան զբաղված էր նրանով, որ բոլորովին չեմացայ թէ ինչպէս հասանք տուն:

III.

Փառաւոր և շքեղ էր այն տունը. ուր բնակվում էին Գուլամեանցները: Բարձր, եռյարկանի, սպիտակ քարեց կառուցած շինութեան առաջ բացվում էր մի ընդարձակ արգի բազմատեսակ մրգատու ծառերով և գեղեցիկ ծառուղիներով, որոնք աւարտվում էին մի մա-

քուր և լայն հրապարակի շուրջը: Այս Հրապարակի վրա գտնվում էր մի մեծ աւազան, որի մէջտեղ կառուցված բարձր շատրուանից անդադար բարձրանում էին մաքուր ջրի պարզ և փայլուն շերտեր: Խս առաջին անգամ էի տեսնում մի արգալիսի զմայլեցուցիչ տեսարան և այդ պատճառով մինչև տուն հասնելը մի փոքր կանգ առաջ և հիացած նայում էի:

Նախանձի ոգին դարձեալ գրգռվեց իմ մէջ, «Երանի քեզ, աղա Գուլամեանց—ասացի մտքումս—որ կեանք անց ես կացնում այդ շքեղ և զուարձալի տեսարաններով շրջապատած տան մէջ: Մարդիկ ասում են, թէ գժոխք և արքայութիւն կան միւս կեանքում, բայց ոզորմելիները կոյր են. նոյն գժոխքը ու արքայութիւնը չեն կարողանում տեսնել հէնց այս աշխարհում: Ահա գրախոր, ուր ապրում են աղա Գուլամեանցները: Մի տեղ՝ խոնար բնակարան, տկլոր ընտանիք, մէրկ զաւակներ, վիշտ, տանջանք, դասնութիւն, մի կուր հացի համար գիշեր ցերեկ պատերազմ հազար տեսակ խոշնդունեցի հետ, քաղցածութիւն, սովոր հիւանդութիւն և կելտուառութիւն: Միւս տեղ շքեղ տներ, հարուստ այգի: Կուշտ և առողջ ընտանիք, ուրախութիւն, հարսաութիւն, զուարձութիւն, անհոգ կեանք և շռայլ ապրուստ—ահա ինչոտեղ է գժոխքը և արքայութիւնը: Այս աշխարհում ով որ փող ունէ, նա արքայութեան մէջն է, ով որ փող չունէ, նա գժոխքն մէջ է: Փողը

գերբնական ոյժ է, նա ամենայն բան սալիս է մարդուն. ուրեմն հարկաւոր է ամեն կերպ աշխատել այս ոյժը ձեռք բերելու համար» . . .

Մինչդեռ ես դարձեալ, իմ պատանեկական երեակայութեան մէջ թաղված, զուարձանում էի գրաւիչ տեսարաններով, յանկարծ տկանջիս հասաւ աղա Գուլամեանցի հրամայողական ձայնը:

— Խաչի, բարձրացիր վերև:

Ես բարձրացայ վերև: Աղա Գուլամեանցը ծառային հրամայեց ինձ թէյ խմացնել:

Թէյ խմելուց յետոյ, ինձ կրկին կանչեց իր մօտ աղա Գուլամեանցը իր օենեակը: Ճիշտ չեմ կարողանում մտարերել թէ ինչ էի զգում այն բովէին, երբ աղա Գուլամեանցի առանձնասենեակը հասնելու համար, անցնում էի նրա ընդարձակ և զարդարուն գտշվենով: Բայց շատ լաւ լիշտում եմ, որ այդ ժամանակ նախանձը քանի գնում աւելի ու աւելի զարգանում էր իմ մէջ, ամենայն մի քայլափոխում հանդիպելով այնպիսի առարկաների, որոնք վկայում էին աղա Գուլամեանցների հարստութիւնը և պատկերացնում ինձ նրա ասլուստի շքեղութիւնը:

— Խաչի—դարձաւ ինձ Մակար աղան դժուարութեամբ բարձրացնելով իր ծանր և հաստիկ մարմինը կարմիր մետաքսով ծածկած բագկաթուից և մանգաւով սենեակի մէջ—քո հայրը ալսօրուանից քեզ յանձ-

նել է ինձ գործակատար: Ես մանկութիւնիցս ճանաչելով քո հօթը, չը մերժեցի նրա աղաշանքը և համաձայնեցի քեզ ընդունել ինձ մօտ, չը նայելով որ ես գործակատարներ ունեմ և աւելորդ մարդ ինձ հարկաւոր չէր: Հայրդ ինձ հետ պայմանաւորվեց և ես ընդունեցի, որ դու ինձ մօտ մնաս ոչ թէ մի կամ երկու տարի ժամանակով, այլ մշտական, որքան որ մենք երարու հարկաւոր կը լինենք: Ուրեմն, այսօրվանից սուով, գլխով ինձ ես պատկանում և իմացիք, որ պարտաւոր ես այսօրվանից մոռանալ քո ծնողներին և բոլորովին հսկատակիվել ինձ և իմ կամքին: Շաբաթական մի անգամ երաւունք եմ տալիս քեզ տեսնել քո ծնողներիդ, այն էլ կերակի օրերը, երբ գործ չես ունենայ գնալ երկու ժամ ժամանակով և էլի շուտով վերադառնալ: Մի խօսքով այսօրվանից դու կատարելապէս ինձ ես պատկանում հոգով և մարմնով: Ես դառնում եմ քո տէրը, ծնողը գլխաւորը, աղան և ամենայն ինչ: Դու կը կատարես այն՝ ինչ որ ես կը հրամայեմ և ինչպէս ես կը կարգագրեմ: Եթէ ասեմ մածոնը ուել է,—չը համարձակվես հակառակել թէ նա սպիտակ է: Եթէ ասեմ նստիր—սպիտի նստես, ասեմ վեր կաց—վեր կենաս, կեր—ուտես. ծիծաղիր—ծիծաղես, լացիր—լաց լինես: Ինչ երկարացնեմ, եթէ կը ակի մէջ ուզարկեմ դու պիտի գնաս - լսում ե՞ս:

— Խում եմ աղա:

— Զգուշացնում եմ քեզ, եթէ այդ բոլորը կը կատարես, խոնարհ, խօսք լսող, աշխոյժ, գործ կատարող և հաւատարիմ կը լինես՝ ես շուառով քեզ կառաջացնեմ և ժամանակով մի կտոր հացի տեր կը լինես, իսկ եթէ ոչ—այն ժամանակ մեղք քո վզին, քեզ կարձակեմ դատարկ ձեռքով: Քո գլխաւոր պարտքը պիտի լինի ամենայն բոպէ, ամեն մի քալլափոխում իմ շահերը աչքի առաջ ունենալ և աշխատել նրանց միշտ պաշտպանել: Ես առևետուական մարդ եմ, գաղտնի գործեր ունեմ, դու պարտաւոր ես նրանց մասին ոչ ոքին, նոյն իսկ քո ծնողների մօտ չը խօսեի: Քո լեզուգ թող համը լինի ուրիշների մօտ իմ գործերի վերաբերութեամբ, իսկ ուրիշների գործերի մասին ինձ մօտ բաց և արձակ: Եթէ մէկ տեղ, կամ մէկ մարդից իմ մասին լաւ կամ վատ խօսք լսես, պարտաւոր ես իսկոյն գալ և ինձ յայտնել:

— Ես կաշխատեմ բոլոր ձեր պատուէրները կատարել ամեն գլուշութեամբ—ասացի ես խոնարհութեամբ գլուխ տալով:

— Եթէ կը կատարես՝ քեզ համար լաւ կը լինի, եթէ ոչ ինձ շատ էլ վնաս տալ չես կարող: Դէհ, գնա և խօսքերս ականջումդ լաւ պահիր: Իմացիր, որ ես բարկացող մարդ եմ և սովորութիւն չունեմ ասածներս երկրորդ անգամ կը կնել: Եթէ մի անգամ սխալկեցիր և իմ տուած պատուէրները քանդեցիր, այն ժամանակ գնայ քեզ:

Կըկին անգամ գլուխ տուի և հեռացայ:

Այդ երեկոյ ես անցկացրե ծառաների հետ, որոնց շնորհիւ իմ հետաքրքիւ բնաւորութեան, աեղեկացայ աղա Գուլամեանցների ընտանեկան և առեւրական մի քանի գործերին:

Աղա Գուլամեանցները երեք եղբայրներ, էին: Նրանցից ամենամեծը աղա Ստեփանը տարվայ գրեթէ մեծ մասը անց էր կացնում ։ ։ ։ գուառի զանազան գիւղերում: Աղա Գուլամեանցների վաճառականութեան գլխաւոր տարսը կազմում էր գինու առեւտուրը: Ամեն տարը նրանք ուղարկում էին Ռուսաստանի զանազան կենարօնական քաղաքները մեծ քանակութեամբ գինի: Շշակայ գլխաւոր գիւղերի այգեգործութիւնը մեծ կապ ունէր նրանց հետ: Զը կար խաղողի այգի ունեցող մի գիւղացի որը այսպէս թէ այնպէս կապված չը լինէր աղա Գուլամեանցների Փեցմալի հետ: Ամբողջ ։ ։ ։ գաւառի գինու վաճառականութիւնը չէ բացառութեամբ, գտնվում էր նրանց ձեռքում և ինչպէս պատմում էին նրանց հարստութեան մեծ մասը գոյացել էր գինու առեւտրից: Օգտվելով այն հանգամանքով, որ գիւղացիները առ հասարակ գարնան ժամանակը փողի մեծ պակասութիւն են զգում և ունենալով միշտ պատրաստի գրամագլուխ, — աղա Գուլամեանցները ամեն տարվայ այդ ժամանակին գիւղացիներին կանխիկ վճարում էին ահագին տոկոսներով

շիողեր և պարտաւորեցնում նրանց գրաւոր կապակցութիւններով, որ նրանք աշնանը այգիներից գոյացած խաղողը կամ պատրաստի գինիները ծախեն իրանց վրա: Որովհետեւ չը կար մի ուրիշ ուժեղ գրամատէր, որ կարդանար մըցել աղա Գուլամեանցների հետ, այդ պատճառով վերջինները գիւղացիների հետ վարվում էին այնպէս, ինչպէս կամենում էին:

Նրանք նախ՝ փոխ տալու ժամանակ գրամագլուխ վրա բարդում էին անտանելի տոկոս, օրինակ 40—50, շատ անգամ 60—70% և երկրորդ՝ գինու կամ խաղողի գինը նշանակում էին իրանց ցանկացածին համեմատ: Գիւղացին չէր կարող չը համաձայնել աղա Գուլամեանցների առաջարկած պայմանների հետ, որքան որ նրանք դժուար իրագործելի և ծանր լինէին: Գիւղացին ուրիշ երթ չունէր: Նա կամ պիտի իր այգու բերքը ծախէր աղա Գուլամեանցներին կամ թէ չէ ինքը պիտի վաճառահանէր Ռուսաստան: Վերջինը դժուար իրագործելի էր գիւղացու համար, քան թէ աղա Գուլամեանցների ձնշող պայմանները: Գինին Ռուսաստան վաճառահանելու համար հարկաւոր էր ունենալ նախ՝ ձանապարհածախքը վճարելու, ամաններ գնելու և ուժեղ զանազան պատրաստութիւնների համար ազատ դրամ և երկրորդ՝ գիւղացին գէթ մի երկու ամիս ժամանակ պիտի կորցնէր Ռուսաստան գնալ գալու համար: Այդ երկուսից ոչ մէկը չունէր գիւղացին: Նրա

Համար ժամանակը ամեն բանից թանգ էր, իսկ ազատ դրամի երես երէք չէր տեսնում. Ճարահատեալ նա ստիպված էր աղա Գուլամեանցների հարստահարող ճանկերում ճնշված մնալ տարին տասներկու ամիս: Կար մի ուրիշ ճանապարհ գիւղացիների համար, որը կարող էր նրանց ազատ պաշել այդ ճանկերից: Բայց նրանք այնքան տփէտ էին, որ այդ ելքի մասին մտածել անգամ չը գիտէին: Գիւղացիները կարող էին հաւաքվելով միասին, ընդհանուր ոգժով, իրարու օգնել և իրանց գիւնիները վաճառահանել առանց աղա Գուլամեանցների միջնորդութեան և այդ նրանց համար բնաւին գժուար չէր լինի: Սակայն եթէ գիւղացիները այդ հասկանային էւ, դարձեալ անընդունակ էին կատարել, շնորհիւ այն անհաւատարիմ և յաճախ թշնամական յարաբերութեան, որ մէշտ իրարու դէմ ունեն Շ... գաւառի բոլոր գիւղերի բնակիչները և որը թոյլ չէ տալիս նրանց մէջ զարգանալու ինքնուրունութեան և համերաշութեան ձգտումներ:

Աղա Գուլամեանցների երկրորդ եղբայրը, աղա Աբրահամը, մշտապէս իր ընտանիքով ապօռում էր Ռուսաստանում և շատ հազիւ էր սպատահում, որ վերադառնար իր հայրենիքը, այն էւ շատ կարճ ժամանակով: Ես իմ մանգութիւնից սկսած երբէք չէր տեսած նրան, բայց ինչպէս պատմում էին՝ աղա Գուլամեանցների մէջ նա ամենախելոքը և ամենաՃարպիկն էր

առետուրի մէջ և իրը թէ նրա շնորհիւ էր գեզվել նըրանց հարստաութիւնը:

Խոկ երրորդ եղբայրը, այն է ամենից կրտսերը, աղա Մակարն էր, որ ինձ վարձել էր: Ծառան ինձ պատմեց, որ տղա Մակարը մի հարսանիքում տեսել էր մի խիստ գեղեցիկ, բայց աղքատ ընտանիքին պատկանող օրիորդ և շատ հաւանել: Այն օրուանից նա աշխատում էր այդ օրիորդի հետ նշանվել: Օրիորդի ծնողները թէև շատ աղքատ էին, բայց Մակար աղան հաւանել էր նրան, այնպէս որ այդ պակասութիւնը նրա աչքին բոլորովին չէր երևում: Բայց էին չը նայելով սրան, աղա Մակարին չէր յաջողվում իր այդ նպատակին հասնել, որովհետեւ օրիորդը սիրահարլած լինելով քաղաքում մի տղայի վրա, չէր ուգում ուրիշ մարդու հետ պսակվել: Ծնողները առաջին անգամ յափշտակվելով աղա Մակարի առաջարկութիւնով շատ աշխատեցին համոզել աղջկան, բայց չէր յաջողվում: Ամենայն անգամ, երբ օրիորդի մօտ Մակար աղայի մասին խօսում էին, նա երբեմը ծածկում էր ու լաց լինում ասելով, թէ նա շուտով կը ցանկանար մեռնել, քան թէ թողնելով իր սիրած տղային, պսակվել Մակար աղայի հետ: Հայրը հայհոյում էր, ծեծում էր, քաղցած էր պահում օրերով աղջկան, բայց ոչինչ չէր օգնում: Նա իր ասածի վրտ կանգնած էր և մինչև անգամ մի օր փորձ էր արել իրան թունաւորելու, բայց շուտով մայրը իմա-

նարով, արգելել էր աղջկայ այդ գիտաւորութիւնը: Այդ օրեց մայրն էլ տեսնելով որ հնար չը կայ, անցել էր աղջկայ կողմը և խնայելով իր միակ գաւակին, նոյնպէս չէր համաձայնում տալ նրան աղա Մակարին: Այդ հանգամանքը իբրև արտաքոյ կարգի երեսիմ Շ... քաղաքի մէջ մեծ աղմուկ էր բարձրացրել և շատերը սկսել էին ծիծաղել աղա Մակարի վրա, որ նա իր հարստութիւնով լինելով քաղաքի առաջին մարդիկներեց մէկը, չէ կարողանում մի աղքատ ընտանիքից մի աղջիկ ուզել: Մակար աղան իր անսահման ինքնասիրութիւնը վերաւորված զգալով, երդվել էր, անալատձառ պսակվել այդ աղջկայ հետ, որ այդպիսով դադարից քաղաքի մէջ ծիծաղի առարկայ լինելուց: Նա նպատակին հասնելու համար գործ էր դնում ամենայն տեսակ ներելի և աններելի միջոցներ: Մեծ գեր էր կատարում այդ գործում տէր-Վահակը, որի ձեռքից շատ էին անցել մեր քաղաքում այգալիսի գործեր: Տէր-Վահակը ամենայն մի անհնարին բան իր խորամանկութիւնով հնարաւոր էր դարձնում, չը նայելով, որ իս բանած գործերի համար տարէնը երկու անգամ տեղային առաջնորդը նրան փելոնից զրկում էր: Մակարն այս անգամ ներկիւդ չունել և գործում էր շատ համարձակ:

Ես այդ բոլոր մանրամասնութիւնները, շնորհիւ իմ չափազանց հետաքրքիր բնաւորութեան, տեղեկացայ նոյն իսկ հինգ առաջին գիշերը Գալսւատ անունով ծա-

ռայից, որը չը գիտեմ ինչ էր տեսել ինձանում, հինգ առաջին օրեց սկսեց խիստ հաւատարձութեամբ վերաբերվել գէպի լինձ: Օգտվելով այդ հաւատարձութիւնից, հետաքրքրութեանս բաւականութիւն տալու համար, ես փորձեցի հարց ու փորձ անել շուկայում և յետու եկեղեցում մեգ պատահած ծերունու մասին, թէ արդեօք ինչ կապ ունէր նա աղա Մակարի հետ, որ վերջինը լսոյս էր տալիս նրա հայեացքից: Բայց ծառան այս անգամ զապեց իր լեզուն: Ես նկատեցի մինչեւ անգամ, որ իմ հարցը նրան քիչ զարգացրեց: Նա ինձ վրա ձգեց մի կասկածաւոր հայեացք: Խկոյն հասկացայ թէ այստեղ անշուշտ մի նշանաւոր գաղտնիք կայ, որ շատախօս Գալուստը անգամ լուսութիւն է ուզում պահել: Նկատելով ծառալի շփոթութիւնը, ես բարւոք համարեցի լոել և երկրորդ անգամ չը կրկնել հարցը այդպիս ուղղակի, այլ զգուշութեամբ աշխատել իմ անալ և գնացի սենեակս ննջելու:

IV.

Առաւտեան գեռ ամենքը քնած, ես զարթեցի, որ պատրաստվեմ մագաղին գնալու: Գլխաւոր գործակատար Գրիգորը, սովորականին համեմատ եկել էր, որ բանալիները աղա Մակարից առնի մագաղինը բաց անելու: Ինչպէս գործնական մարդ աղա Մակարը շատ գաղ էր զարթնում առաւտները: Նա բանալիներք

տուեց Գրիգորին, իսկ ինձ հրամայեց թէյ խմել և ըսպասել իրան հետ միասին գնալու:

Որովհետեւ աղա Գուլամեանցների ընտանիքը, բացի մի քանի արտաքին աննշան վոփոխութեւններից, դեռ ապրում էր հին, ասիական եղանակով, այդ պատճառով կանայք միշտ քաշլում էի տղամարդեկիներից: Աղա Գուլամեանցների ընտանիքում, հինց առաջին օրից սկսեցին կանայք ինձանից թագնվել: Պատճառը Մակար աղան էր, որ այս կողմէց շատ խիստ էր վարվում և հրամայել էր կանանց օտար տղամարդեկիներին չերեալ: Նոյն իսկ երանից, աղա Մակարից, քաշլում էին կանայք: Ծառան պատմում էր, որ մինչեւ այն օրը աղա Մակարը մի անգամ կարգին չէ տեսել իր եղբօր աղա Ստեփանի կնոջ կերպարանքը, չը նայելով մի քանի տասնեակ տարիներ մի տան մէջ ապրելուն:

Աղա Ստեփանը ունէր երկու աղջիկ՝ մէկը մօտաւորապէս 14 տարեկան, իսկ միւսը՝ երկու տարով սրանից փոքր: Սրանք միայն չէին քաշլում ոչ ոքից, հետևաբար և ինձանից: Թամարը, մեծ քոյրը թէկ այնքան գեղեցիկ չէր, որ առաջին անգամ մարդու ուշագրութեւն գրաւէր, բայց և այնպէս այնքան էլ տգեղ չէր, որի վրա անտարբեր աչքով մտիկ տալ լինէր: Գուցէ նա մի ուրիշ քաղաքում գեղեցկուհի համարվէր, բայց Ն... քաղաքում, ուր կանանց սեռի հռչակված դեղեցկութեւնը հիացնում է անծանօթին, Թամարի նման-

ները գեղեցկուհիների շարքը մտնել չէին կարող: Միւս քոյրը Թագուհին, թէկ իր գէմքի գծագրութեամբ շատ չէր զանազանվում Թամարից, բայց ունենալով նրանից քէս բարձր հասակ, աւելի գրաւիչ էր ծառայ Գալուստի կարծիքով: Բայց այդ ծառայի կարծիքն էր, իսկ եթէ ինձ հարցնէք, Ճշմարիտը կասեմ, որ Թամարը աւելի գուրեկան էր ինձ համար քան Թագուհին: Նրա երկար և մի-կազ հիւսած շագանակագոյն մազերը, փայլուն և կրատոտ ուե աչքերը, ուե յօնքերը, լինչ թագցնեմ, ինձ հիացնում էին քան թէ Թագուհու աւելի բարձր և ամելի հալարտ ու նուրբ կազմուածքը: Թամարը և Թագուհին այն ժամանակ ուսանում էին Ն... քաղաքի նոր բացվաց հայոց օրինդաց ուսումնաբանում: Այդ սկատճառով նրանք ևս շուտ էին զարթել, որ պատըաստվին ուսումնաբան գնալու:

Մակար-աղան ինձ հրամայեց ուղեկցել նրանց մինչեւ ուսումնաբան և յետոյ այնտեղից ուղղակի գնալ մադագին: Ճանապարհին կարծես թէ սատանան հինց խթում էր ինձ, որ ես անպատճառ խօսեմ իմ աղայի սիրուն աղջկերանց հետ: Բայց ինչպէս խօսք բանաւ, ինքս էլ չէի իմանում:

— Թամար խանում, ձեր ուսումնաբանում լինչ են սովորցնում—վերջապէս համարձակակլեցի արտասանել ամօթխածութեամբ:

— Հայոց լեզու, ոսւսաց լեզու, վայելչագրութիւն,

Թւարանութիւն—շարեց կրակոտ Թամարը իրասու ետե-
փց—կարկուտի պէս:

Թանարանութիւն, լինչ ասել է թանարանութիւն,
Թամար խանում, հարցը ես գիտմամբ ինձ չը հասկա-
ցող ձեւացնելով, թէե գոնէ անունն էլ դետէի:

—Ալչի Թագուհի լիսիմես, թւարանութիւնը թա-
նարանութիւն է ասում, հա, հա, հա—կէլչաց Թամարը
եր քըոջ ուսին խփելով:

—Ինչի՞ ես ծիծաղում, Թամար խանում, չեմ իմա-
նում, հարցնում եմ էլի, —խօսեցի ես ինձ նեղացած ցոյց
տալով:

—Թանարանութիւն չան ասել, թւարանութիւն
կասան, ալ էրվես, ալ տէրտէրեց հինչ էս սորվալ, որ
թուարանութիւնը ալ չես մանում քի հինչ ասել ա, —
պատասխանեց Թամարը կատարեալ տեղային բարբառով,
աջ ձեռքի հինգ մատերը բացելով և ինձ ճանկ անելով:

—Ի՞նչ տէրտէր. Թամար խանում—կըկին հարցը
ես կամենալով խօսակցութիւնը շարունակել:

—Ա՛յ, ան տէրտէրը, որ ամուխ հետի՝ ուզումա-
գոռով աղջիկ ուզի:

—Սաղմոս, աւետարան, նարեկ, ճարտասանու-
թիւն—շարեցի ես էլ իմ ստացած գիտութեան ճիւղերը:

—Բաս շէթանութիւն չի սովորացուրալ—հարցեց
ուրախ Թամարը դարձեալ ծիծաղ կէլչալով:

—Ի՞նչ շէթանութիւն:

—Ա՛յ, ուրեշների տուներում քիշեր ցերեկ հաւաքի
հաց ուտել, բազարներում պապերոս ծխել և ալճն:

Ես իմ վարժապետիս, տէր Վահակի թուլութիւն-
ները վաղուց գիտէի, այդ պատճառով բոլորովին չը
գարծացայ Թամարը այս խօսքերի վրա:

Մենք հասանք սւսումնարան: Ես գըեանքը յանձ-
նելով Թամարին, գնացի մագաղին: Գործակատարները
բոլորը եկել էին և առեւտուրը արդէն սկսվել էր, ես
իսկոյն բռնեցի ինձ համար նշանակված տեղը: Ոը շա-
րադր էր: Ն... քաղաքի վաճառականական խանութնե-
րում այդ օրը առեւտուրը համեմատաբար շատ կենդա-
նանում է, որովհետեւ մօտակայ գիւղերի բնակիչները
քաղաք բերում են զանազան կենսական պիտույքներ,
օրինակ եւդ, պանիր, հաւ, ձու և ալճ, ծախում են և
գոյացած փողերով առնում են այն, ինչ որ իրանց հար-
կաւոր է: Աղա-Գուլամեանցների մագաղինը, ունենալով
գիւղացիներեց ըաղմաթիւ ծանօթներ, այդ օր մի ա-
ռանձին կերպարանք էր ստանում: Ոչ մի մագաղին, ոչ
մի խանութ շաբաթ օրերը այնպէս չէր լցվում մուշ-
տարիներով ինչպէս աղա-Գուլամեանցների մագաղինը:
Գործակատարները շատ կտորներ չափելուց յոգնում էին,
իսկ Գրեգորի ձեռքեվը մաշվում էին, շատ փող համ-
րելուց:

Քիչ ժամանակից յետու, Մակար-աղան Փսփըսա-
լով եկաւ: Գործակատարները, ինչպէս սովոր էին, վեր

թռան տեղերից և ամեն մէկը, խորը կերպով գլուխ տալով, մեխվեց տեղի վրա արձանի պէս: Փոքը առ վոքը մուշտարիները եկան և առևտուրը տաքացաւ: Ես ամենայն կերպ աշխատում էի անդործ չը մնալ, թէև գործերին անտեղեակ լինելով, ոչինչ չը գիտէի կատարել: Այն գործակատարը, որի մօտ ես կանգնած էի, պատվերեց ինձ ծախած և շափած կտորները ծալել ու թղթերի մէջ փաթաթելով, յանձնել մուշտարիներին: Այդ գործը մի առանձին հմտութիւն չէր պահանջում, ես մի երկու կտորներ փաթաթելուց յետոյ իսկոյն ընտելացայ նրան: Ես բթամիտ տղայ չէի, այլ ունէի քեզ թէ շատ ընդունակութիւն շուտ բան սոլորելու, բայց այդ գահը ուժար «արշին բանացնելը», այսինքն կտորներ շափելը մի փոքը դժուար էր և ես առաջին օրը շատ աշխատեցի, չը կարողացաւ սովորել: Մօտս կանգնած գործակատարի ձեռքերի ճարպիկութիւնը իմ նախանձը շարժում էր: Նա այնպիսի արագութեամբ էր ձեռքում պըտքացնում արշինը, որ ես բոլորովին զարժացած էի. «ախ, եթե կը լինի, որ ես էլ այդպէս շափել կարողանամ»—մտածում էի ես, աչքիս տակով մտիլ տալով նրա ձեռքերին:

Մակար աղան նոյնպէս զբաղված էր: Նա գնում էր այս և այն գործակատարի մօտ, մտիլ էր անում, սովորցնում էր այս այսպէս անել, այն այնպէս շափել կամ ծախել և այլն: Եթեմն մօտենում էր մուշտարի-

ներին և նրանց հետ զանազան հանաքներ անելով զբաղեցնում էր «որ չը փախչեն», մի խօսքով այն օրը ես նրան շատ ուրախ, շարժուն և գուարթ տեսայ: Պէտք է ասած որ աղա Մակարը մի քանի ինքնուրոյն շարժողութիւններ ունէր, որոնց արտայայտութեամբ կարելի էր իմանալ նրա հոգեկան ալս կամ այն տրամադրութիւնը: Ուրախ և բաւական ժամանակը նա սովորութիւն ունէր իր մսալի և կլորեկ երեսի վրա խաղացնել մի տեսակ ինքնուրոյն ժպիտ: Այդ ժամանակ նրա աչքերը կուշտ և ուրախ կատուի աչքերի նման փայլում էին, յօնքերը բարձրանում իրարուց, որոնց տակեց երեւում էին նրա սպիտակ ատամները: Նա քայլում էր շուտ ընթամարտութեան հրապարակի վրա խաղող փահեվանի նման թերերը օգի մէջ շարժելով և լըլլիսացնելով իր շաղ մարմինը: Նրա մարմինը այնքան հաստ էր, որ քեզ էր մնում երկարութիւնը և լայնութիւնը հաւասարվէին: Նա խօսում էր գործակատարների հետ ուրախ և կակլութեամբ, պարգևելով նրանցից ամեն մէկին մի մի պայծառ ժպիտ: Իսկ եթե տխուր էր լինում, նա խիտ յօնքերը գցում էր ցած, նեղ ճակատը կնձռոտում, աչքերը փոքրացնում, ձեռքերը մէջքին դնում և գլուխը քարշ արած հանդարտ քայլերով ման գալիս: Մարդ եմ ուզում, որ այդ ժամանակ կարողանար կանգնէր: Վայ այն գործակատարի հալին, որը մէ

սխալ էր գործել այդ ժամանակի. Մակար աղան կը բացէր եթ բերանը և տեղային բոլոր փողոցային լիշոցները կը թափէր նրա գլխին թէ հայերէն և թէ թռւրքերէն լեզուով:

Այդ օրը Մակար աղան գտնվում էր բաւական ուրախ տրամադրութեան մէջ. Նա խօսում էր ամենքի հետ քաղցրութեամբ, մինչեւ անգամ ես ևս այդ օրը արժանացայ նրա առանձին ուշադրութեան, Շուտ շուտ նա մօտենում էր ինձ և տեսնելով որ ես լաւ չեմ ծալում կտորները կամ կարգին չեմ փաթաթում թղթելի մէջ, առնում էր ձեռքից կտորը և ինքն կապում քաղցրութեամբ սովորցնելով ինձ, Մակար աղայի ուրախութեան պատճառը յայտնի էր. առեօրսը այնքան յաջող էր այդ օրը, որ մենք գիւղացի մուշտարիների ձեռքից հանգստութիւն չունէինք, Բայց մի դէպք, որ ինձ համար ծիծաղելի էր և այդ ժամանակ անհասկանայի, ստիպեց Մակար աղայի հոգեկան տրամադրութեանը փովել: Մի, ինչպէս մեզանում ասում էին, աշխարհ տեսած գիւղացի, որը քանի տարի գիւղում տանուտէրի պաշտօն կատարելով և շփվելով քիչ շատ կըթված մարդկանց հետ մի փոքր ինքն էլ մտաւորապէս տաշվել էր և ոռւսերէն էլ կոռատում էր,—հինգ արշին մահուդ էր առնում: Մահուդի գինը վերջացնելուց յետոյ գործակատարը չափեց հինգ արշին և կամենում էր ծալել, բայց յանկարծ գիւղացին բռնեց նրա ձեռքից և ասեց:

—Մի անգամ էլ չափեց, մէկել օրը դու տասը արշին չիթ ես տուել, տարել եմ տուն և նորից չափել, մի արշին պակաս է դուրս եկել: Պօժօլստայ տես, էլք սխալված չը լինես:

Գործակատարը տրտնջալով երկրորդ անգամ չափեց, ուզիկ եկաւ և սկսեց գիւղացուն պախաժակել նրա կասկածանքի համար: Բայց գիւղացին չը բաւականացաւ գործակատարի չափելով:

—Պօժօլստայ, զօսագին փրկարշիկ տուր ես չափեմ—ասեց չարաձձի գիւղացին կէս ոռուելին և կէս հայելին լեզուով, կարծես թէ կամենալով ցոյց տալ թէ շատ էլ բռի շնականներից չէ ինքը: Գործակատարը տուեց նրան արշինը և մահուդը գիւղացին չափեց և դուրս եկաւ ուղիղ չօրս արշին և կէս:

—Տեսնում ես, հինց ասում ես սուտ եմ ասում. ազքէր, էսպէս ժուլիկութիւն կը լինի, որ դուք էք անում—ասեց գիւղացին իր ձայնը բարձրացնելով:

Մակար աղան հեռուեց տեսնելով, իմացաւ թէ բանը ինչումն է և մօտեցաւ գիւղացուն:

—Հըմ, ինչ է ապէր, ինչի ես դալմաղալ բարձրացրել:

—Ինչ անեմ, որ զալմաղալ չանեմ, աղա, քո գործակատարը մահուդս պակաս ա կտրել, հինգ արշինի տեղ, չօրս ու կէս է տալիս:

—Ինչ ես ասում, ապէր, իմ գործակատարը էսպէս

զալաթներ չե անի, մտածիր ինչ ես ասում:

—Աղջ չես հաւատում, առ ինքո չափիր:

—Տուր տեսնեմ:

Մակար-աղան առաւ մահուդը ու արշինը և գործակատարի երեսին մի տեսակ նորհրդաւոր հայեացք ձգեց: Վերջինը նոյն տեսակ հայեացքով պատասխանեց նրան:

—Մի, երկու, երեք, չորս, հինգ, սա էլ քեզ փէշքէշ—ասեց Մակար-աղան չափելով մահուդը և մի քառորդ արշինի չափ էլ հինգ արշինից աւել ցոյց տալով գիւղացուն, մօտեցըց: մինչեւ նրա քեթը:—Չես ամաչում, որ սուտ ես ասում, ապէք:

Բայց ապէշը այն ապէններից չէր, որ հեշտութեամբ ձեռք քաշէր Մակար աղայից, նա կոկին վերցըց ինքը արշինը և սկսեց չափել մահուդը:

—Մին, երկու, երեք, չորս, էս էլ քեզ աւել, աղա, մտիկ տոնը, չես ամաչում, որ սուտ ես ասում, աղա:

Մակար աղան բարկացաւ, գիւղացու յանդզնութիւնը նրան խիստ վիրաւորեց, բայց այս անգամ նա զսպեց իր բարկութիւնը:

—Ուրեմն դու քո էս տրեխներով ուզում ես ինչ նման մարզուն խաբերայ շինել էլի՞—ասեց նա աչքերը չուելով գիւղացու վրա:

—Տըեխներով եմ, թէ չաքմեքով, աղա, էդ քո բանք չե, ես համբաւ եմ ուզում:

—Հախիցդ էլ աւել են տալիս քեզ, էլ ինչ ես ուզում,

—Աւելը քեզ լինի, իմը տոնւը:

—Ա՛յ տղամբ մէկէլ չափիր—դարձաւ Մակար աղան մահուդ կտրող գործակատարին:

Գործակատարը չափեց:

—Մէկ, երկու, երեք, չորս, այդ էլ ուղեղ հինգ. էլ ինչ ես ուզում ապէք:

—Ինձ տոնը, գիւղացին առաւ դարձեալ մէկէլ ինքը չափեց:

—Մէկ, երկու, երեք, չորս, էս էլ գրուստ կէս—էլ հինչ ես ուզում—ասաց գիւղացին ծաղրածութեամբ:

—Մի անգամ էլ Մակար-աղան չափեց և դարձեալ գուրս բերեց հինգ արշին ու մի չափէք:

—Ա՛յ մարդ, այսքանն էլ աւել է, էլ ինչ ես զահէկս տանում:

Իմ ծիծաղս շարժվեց: Զարագուշակ մահուդի երեք մարդու ձեռքում, երեք զանազան երկարութիւն ստանալը ինձ կախարդութիւն թվաց: Վերջապէս երկար վիճաբանելուց յետոյ Մակար աղան մի կերպ ճանապարհ դժեց գլխացաւ գիւղացուն:

Հինց որ վերջինը ոտը մագազինի գոնից գուրս դրեց, Մակար աղայի կատաղութիւնը սաստիացաւ, նա բացեց իր տիշոցների տօպքակը և սկսեց թափել մի-

մեանց ետևից խեղձ ժահուդ չափող գործակատարի գլխին:

—Տասն տնգամ քեզ ասել եմ—ասեց նա յիշոց-ներից յետոյ—որ իմացիր թէ ինչ մարդու հետ գործ ունես, ամենայն մուշտաբու հետ չէ կարելի այնպէս անել: Աշխարհում միամիտներ քիչ չեն, որ դու այդպէս յետ եկածներին ես ուզում խաբել: Մի անգամ էլ քո անզգուշութիւնով ինձ բալի մէջ կը ճկես, այն ժամանակ Աստուած ազատի, խայտառակ կը լմնեմ ամբողջ քաղաքում:

Լաւ էր, որ շուտ շուտ մուշտաբիներ էին ներս մտնում, եթէ ոչ հիշ գիտէ Մակար աղան մինչեւ երեկոյ իր զուռնան պիտի փէք խեղձ գործակատարի ականջներին, որը երկիւղից սառել էր ու պատի տակ կանգնել: Երեկոյեան մագաղինը կողպելու ժամանակ Մակար աղայի դէմքը կը կին փոխվեց, երբ գործակատար Գրիգորը բացելով դրամարկիզը և նոյն օրուայ ծախսից առաջացած փողերը համարելով, դարսեց նրա առաջ: Նրա աշքերը կը կին սկսեցին փայլել, մի վայրկեանում անհետացաւ նրա դէմքը մռայլութիւնը, ինչ-պէս քամու շարժումից ցըլում են թեթև ամպերը երկնքի երեսից: Նա միանգամ ևս ինքը համարելով փողերը ագահութեամբ և շտապով ածեց գըլանը, կարծես թէ վախենալով, որ մի գուցէ մէկը եւի նրա ձեռքից: Կերակի երեկոները միշտ Մակար աղան սովորու-

թիւն ունէր եկեղեցու ձաղերից մէկը եր հաշով վառել տալ, գանձանակի թասերում, վուսանակ սովորական հինգ կոսէկանոցի, ձգել մի մի աբասի և վերջապէս եկեղեցու դռանը կանգնած բոլոր աղքատների ձեռքին մե մի սե փող դնել: Այդ բոլորը կատարելուց յետոյ եկեղեցու դռներից դուրս գալով նա միշտ մի տեսակ խորը հոգոց էր քաշում երեսը խաչակնքելով, կարծես թէ նրա ուսերից ընկնում էր մի աշագին ծանրութիւն և ինձ թւում էր, որ նա այդ ժամանակ զգում էր թեթևութիւն: Եկեղեցուց մինչեւ տուն հասնելը Մակար աղայի դէմքը փայլում էր մի տեսակ պայծառ, ուրախ ժպիտով: Ինձ համար շատ անգամ հաճելի էր այդ սուպէներում նայել նրա երեսին: Նրա մշտական թթուած դէմքը վրա ժամանակ առ ժամանակ երևացող ուրախ ժպիտը, Ճշմարիտն ասած, ինձ շատ քաղցը էր թւում: Շատ էլ բնաւորութենով մելամաղձոտ մարդ էք Մակարացան, ընդհակառակը, նա կարելի էր ասել, ուրախ բընաւորութիւն ունէր: Բայց այդ միայն յայտնի էր նրա մօտ ընկերակիցների շշանում, որոնց հետ նա սովորութիւն ունէր շատ յաճախ զանազան տեսակ զուարձութիւններ սարքել: Խոկ մագաղինում և տանը ինձ շատ հազիւ էր պատահում նրան տեսնել հոգեկան ուրախ տրամադրութեան մէջ և այդ լմնում էր այն ժամանակ միայն, երբ առետուրը յաջող էր անցել կամ մի որ և իցէ նիւթական շահ էր ստացել մի տեղից: Տանը ուր-

Խուր ժամանակը նա շատ անգամ օրերով չէր խօսում
ոչ ոքի հետ և ոչ ոք էլ չէր կարող նրան խօսեցնել,
հաւատացած մինելով, որ սրանով կը գոզուեն նրա բար-
կութիւնը: Տանեցիները այնքան հպատակվել էին Մա-
կար աղայի կամակոր բնաւորութեան, որ նրա տիսուր
եղած ժամանակ իրանք ևս տիսում էին, իսկ ուրախ
եղած ժամանակ, իրանք ևս ուրախանում, այնպէս որ
կարծում էիր թէ ամբողջ ընտանիքի հոգեկան տրա-
մադրութիւնը կախված լինէր միակ այդ մարդու հո-
գեկան այս կամ այն տրամադրութենից: Ամենքը Մա-
կար աղայի տուն գալու ժամանակ նայում էին նրա
երեսին և նրա դէմքը այս կամ այն արտայատութեան
համապատասխան սկսում շարժվել, խօսել և այլն: Մի
և նոյնը անում էին և մագաղինի գործակառարները:
Օրինակ՝ երբ այն օրը գիւղացու մահուդի մասին նա
բարկացած գոռում էր գործակատարներից մէկի վրա,
ամենքը սկսեցին նոյնպէս իրանց դէմքերը թթուացնել:
Երբ անձանօթ էր Մակար աղայի բնաւորութեան հետ,
ինձ մի փոքր զարմանալի էր թւում գործակատարների
այդ կապիութիւնը, բայց երբ տեսայ, որ իսկապէս աղա
Մակարը չէ սկրում ուրախ ժամանակը տեսնել իր հպա-
տակներից որ և է մէկի դէմքը թթված կամ սրա հա-
կառակ տիսուր ժամանակը տեսնել ուրախ դէմքով—
այն ժամանակից ես էլ սկսեցի հետեւ միւս գործա-
կատարների կապիութեանը: Առաջին անգամները ինձ

հշմարիար ասած, շատ լսորթ էր թւում, երբ ես սրտով
ուրախ էի դէմքս ոյժով կեղծօրէն տիսեցնել, կամ հո-
կառակը անել: Բայց ինտոյ փոքր առ փոքր սովորեցի
և այնուշետե ինձ համար սովորական բան դառաւ և
ես ամենայն անգամ Մակար աղայի երեսին նայելիս,
կարծես թէ ինստինկտարար իմ դէմքս իսկոյն փոխ-
վում էր նրա դէմքը արտայատութեան համապատաս-
խան:

V.

Անցել էր մի քանի ամիս. ես շարունակում էի
ամենայն առաւօտ վաղ գնալ մագաղին և երեկոյեան
վերադառնալ Մակար աղայի հետ տուն: Բաւական ըն-
տելացել էի ես իմ գուծակատարական պաշտօնին, ար-
շնով չափելը, մուշտարձնելը հետ քաղաքավարու-
թեամբ խօսելու, կամ, ինչպէս Մակար աղան ասում էր,
«Նրանց պոչից բռնելու և բաց չը թողնելու» հնարը և
ուրիշ իմ պաշտօնին վերաբերեալ հարկաւոր բաները ես
բոլորովին սովորել էի: Գրեգորը ինձ վրա մինչեւ ան-
գամ զարմացել էր. նա խիստ գովում էր իմ աշխատա-
սիրութիւնը, ընդունակութիւնը և ասում էր, թէ շատ
բաներ, որ ինքը սովորել էր մի քանի տարիների ըն-
թացքում, ես սովորում եմ մի քանի ամիսներում: Միւս
գործակատարները նոյնպէս հաւանում էին ինձ, նա մա-
նաւանդ նրանք գովում էին իմ արագաշարժութիւնը,
որի պատճառով իմ անունս դրել էին «Եօրդա Խաչի»,

այսինքն արտգընթաց խաչի: Այդ մականունը մինչեւ ալսօր էլ իմ վրաս մնացել է և ես երբէք չեմ նեղանում, որովհետեւ նա նշանակում է, որ ես ծոյլ մարդ չեմ: Բայց ամենից աւել ես աշխատում էի Մակար աղայի ուշադրութիւնը գրաւել ինձ վրա, ձեռք բերել նրա կողմից քիչ թէ շատ համակրութիւն և այդ նպատակով ես ամենայն ջանք գործ էլ դնում, որ ոչ մի սխալով չը գրգռեմ նրա բարկութիւնը դէպի ինձ, այլ ընդհակառակը, որքան կարելի է սիրելի դառնամ նրա աշքում: Ես ուսումնասիրում էլ նրա բոլոր կողմերը, աշխատում էլ իմանալ նրա բոլոր յատկութիւները, որպէս զի նրանց համեմատ վարվեմ նրա հետ: Ինչ տեսակ խօսակցութիւն, ինչ տեսակ շարժողութիւն, մինչեւ անգամ ինչ տեսակ ուտել, խմել, նստել, վերկենալ, որ նրան հաւանելի էր, նոյն տեսակ էլ ես էլ աշխատում խօսել, շարժվել, նստել, վերկենալ և այլն: Ես այդ ամենը աշքի առաջ ունիի, որովհետեւ ամեն օր տեսնում էլ, թէ ինչպէս Մակար աղան բարկանում էր գործակատարների վրա, ամենաշնչին սխալների համար և շատ անգամ սպառնում էր արձակել սպաշտոնից այն գործակատարին, որը գործած էր այդ ընչին սխալը. որինակ, մի օր նա մէկին մի քանի ապատակներ տալուց յետոյ քիչ մնաց չը գուրս արեց մագաղինից նրա համար, որ խեղճը սխալմամբ մահուդի մի կտորը դրել էր չիթերի շարքում: Սի խօսքով չափազանց մանրակրիստ

և բարկացող մարդ էր Մակար աղան, հարկաւոր էր մեծ զգուշութիւն նրան գուր գալու համար և ես ամենայն կերպ աշխատում էլ զգոյշ վարվել նրա հետ: Այդպիսով փոքր առ փոքր ինձ յաջողվեց Մակար աղայի ուշադրութիւնը գրաւել ինձ վրա և օրէցօք հաւանելի դառնալ նրա աշքում: Նա հետզհետէ սկսեց ինձ յանձնել այնպիսի գործեր կատարելու, որոնք գործակատարի կողմից պահանջում էին քիչ թէ շատ հաւատարմութիւն: Օրինակ, փող էր տալիս այս կամ այն վաճառականի մօտ տանելու կամ փոստ ձգելու, ուղարկում էր զանազան տեղերից ապառիկներ ստանալու և այլն:

Մակար աղան ինձ համար մի ձեռք նոր հագուստ էր առել, որովհետեւ իմ առաջվայ հագուստը ամենքան պատառութված էր, որ նա իր անուանը լայեադ չէր տեսնում այդ ցնցոտիների մէջ ինձ տեսնել մագաղինում: Բաւական փոխվել էլ ես այդ նոր հագուստի մէջ էլ առաջվայ Խաչին չէլ և ամենայն անգամ մագաղինում դրած ահազին հայելուն մտիկ տալով, ինքո ինձանով հիանում էլ և զարմանում: «Ահա թէ ինչ ասել է փող—մտածում էլ ինքո ինձ հայելուն մտիկ անելով. նա մասդուս բոլորովին փոխում է. ինչպէս էլ առաջ և ինչպէս եմ այժմ. հիմայ ևկ կարող է ինձ ճանաչել, որ ես կօշկակար Սարգսի տղան եմ. չէ, ով ինչ ուզում է թող ասէ, ես կասեմ որ փողը շատ լաւ բան է և նրան

ձեռք բերելու համար ամենայն տեսակ միջոցներ գործ դնել արժէ, հարկաւոր է Մակար աղայից սովորել փող աշխատելու եզանակը: Սակայն թնչակչս ձեռք բերել փող աշխատելու հնարք: Մակար աղան իր խելքով չէ աշխատում փողը այլ նոյն իսկ փողի միջոցով. ուղիղ էր ասում հայրո թէ «փողը փող է աշխատում, իսկ զուադ տղան գլուխն է քորում»: Բայց, լին և իցէ, շտապել չէ հարկաւոր, ես դեռ փոքր եմ, ժամանակ շատ կայ առաջիս և կարող եմ մի օր ես էլ մարդ դառնալ:

Մակար աղան սովորութիւն ունէր մագաղինում բացլած հակերեց մնացած թոկերի կտորտանքը, վրսիաթները կամ կորտոված արկզները էժան գներով ծախել գործակատարների վրա, որ սրանք աշխատանքով ծախելով շահվեն: Սովորաբար այս շահը Մակար աղան յանձնում էր այն գործակատարներին, որոնք երկար տարիներ հաւատարմաբար ծառայել էին իր ծոտ: Այդ բանը շատ շահաւէտ էր. պատմում էին, որ շատ գործակատարներ աւապիսով դանազան մեծ մագաղիններում բաւական գործարներ են դիզում: Մակար աղայի մագաղինում այդ արտօնութիւնով օգտվում էին Գրիգոր և մէկը մնացեալ գործակատարներից, որը ամենից հինգն էր, ուրեմն յոյս դեմք եկամուտի այդ աղբեւուի վրա իմ կողմից ապարդիւն էր: Բայց և այնպէս պակաս չէի մտածում նրա մասին և նախանձում էի Գրիգորին և միւս գործակատարին, որոնք օգտվում էին

մի այդպիսի եկամուտով: Պէտք է ասած, որ այն օրից, երբ ես մտել էի աղա Գուլամեանցների մագաղինը, մի անգամ իմ մէջ կենդանութիւն ստանալով շահասերական ոգին, օրէցօք քանի գնում այնքան զօրանում էր նա, այնպէս որ մի քանի ամիսներում նա ինձ այնտեղը հասցըց, որ ես պատրաստէի գիմել ամենայն տեսակ միջոցների, միայն թէ այդ միջոցները ինձ համար արդիւնաւէտ հետեւ անք ունենային: Նատ անգամ ես պատրաստ էի մինչև անգամ մատնել գործակատարներին Մակար աղայի առաջ, եթէ հաւատացած լինէի, որ այս մատնութիւնը կարող էր ինձ օգուտ բերել գէթ-նըանով, որ իմ վարկը քեզ թէ շատ բարձրացնէր Մակար աղայի աշքում, գըաւէր նրա վստահութիւնը դէպի ինձ: Ես ամենայն օր մտածում էի այս կամ այն գործակատարի մէջ գտնել որ և իցէ անհաւատարմութեան նշոյլ դէպի աղա Գուլամեանցների շահերը, հետազոտում էի նրանց, որպէս զի մի օր և իցէ պակասութիւն տեսնեմ և իսկոյն յայտնեմ Մակար աղային և այդպիսով ցոյց տամ ինձ նրա շահերը պաշտպանող: Մի անգամ պատահեց մի այդպիսի դէպիք, որը առելթ տուեց ինձ այնուհետեւ գըաւել Մակար աղայի վստահութիւնը: Մի առաւօտ, չը գիտեմ ինչու, Մակար աղան ուշացել էր տանը և մագաղին չը եկել, մուշտարիներ էլ չը կային. այդպիսի ժամանակիներում գործակատարները թողնելով իրանց սովորական տեղերը, խմբվում էին միատեղ

և խօսում, ծիծաղում ու զուարձանում էին: Խօսակցութեան առարկան գլխաւորապէս լինում էր Մակար աղան, որի մասին գործակատարները հազար տեսակ դատողութիւններ էին անում, քննելով նրա բնաւորութեւնը, կեանքը վարվողութիւնը և այլն: Մէկը գովում էր Մակար աղայի մի յատկութիւնը, միւսը պախարակելով այս յատկութիւնը, ցոյց էր տալիս նրա մի ուրիշ լաւ կամ վատ յատկութիւնը, բայց վերջ ի վերջոյ ամենքն էլ միշտ գալիս էին այն եղբակացութեան, որ Մակար աղան առ հասարակ մաքուք մարդ չէ: Յիշեալ օրը գործակատարների խօսակցութեան առարկան դարձեալ Մակար աղան էր: Ես էլ խառնվել էի նրանց հետ բայց խօսակցութեանը չէլ մասնակցում, այլ մի կողմ քաշված ականջ է դնում: Զը նայելով, որ մագաղնում ոչ ոք չը կար, այսու ամենայնիւ գործակատարները խօսում էին շատ ցածր ձայնով և գրեթէ շնչումով:

— Գրեգոր, Մակար աղան լինչպէս վերջացրեց իր բաները այն պառաւի հետ—հարցնում էր գործակատարներից մէկը խորհրդաւոր դէմքով:

— Ի՞նչ պառաւի հետ:

— Ա՛յ էն Թոթովեանցի, որի հետ քանի՛ ժամանակ է քաշքաշում են երեք եղբայր աղա Գուլամեանցները մուրհակների մասին:

— Ի՞նչպէս պիտի վերջացնէին, մուրհակները Մակար աղան յետ առաւ և մի կոպէկ էլ նրան չը տուեց:

Այժմ խեղճ պառաւը ընկել է դառն աղքատութեան մէջ և, ինչպէս ասում են, մինչեւ անգամ օրվայ մի կը տոր չոր հացին էլ կարօտ է մնացել: Խեղճը կաւաղակ է դառել և գիշեթ ու ցերեկ այստեղ այնտեղ նստած խօսում է խօսում ոչ ոք նրա խօսքին չէ հաւատում: Ասում են, որ կարելի է շատ հոգսից ծերութեան օրեւում խելքեց էլ զրկվի:

— Հայն է, ինչու էր կեանքի այդ ժամանակը, որ սուի մէկը այս աշխարհումն է, միւսը գերեզմանի մէջ՝ այնակիսի կեղտոտ բաների մէջ խառնվում, որ այս օրվան չը հասնէր:

— Ի՞նչպէս կարող էր չառնվել, եթք ամբողջ կեանքը այդպիսի խարեբայութիւններով է անցկացրել: Առակը ասում է «Ճը կուժը ջուր կըելում կը կոտրվի»: Խեղճ Աթակեանցի տունը քանդեցին, քանի կենդանի էր, բոլոր փողերը ինչ որ ունէր ձեռից առան և փոխարէնը կեղծ վեքսիլներ տուին պառաւը և աղա Գուլամեանցները, իսկ մեռնելու ժամանակ, այն էլ բարձի տակից գողացան և ողոքմելի ընտանիքը թողին մուրացկանութեան մէջ:

— Ասում են մեծ գումարի էին հասնում Աթակեանցի փողերը, մօտ մինչեւ 75 հազարի:

— Ի՞նչպէս չէ, մուրհակներ գըղն էլ Ռուսաստանի գործակատար Համբարձումն է եղել—ասեց Գրիգորը—նա ինձ պատժել է թէ ինչպէս են ստորագրել այդ

մուրհակները աղա Գուլամիեանցները և պառաւ Թոռ-
թովեանցը:

— Ի՞նչակէս են ստորագրել:

— Ինչակէս պիտի լինի: Մակար աղան վերցըել է
գրեք և իր ձեռագիրը փոխելով, ամենքի փոխարէն
ինքը ստորագրել է ջոկ ջոկ ձեռագրով այնպիսի խորա-
մանկութեամբ, որ իր խոկական ձեռքի հետքերը ան-
գամ չէ կարելի եղել նշարել: Աթոյեանցը իրը հին
վաճառական և մի չափազանց միամիտ մարդ տեղե-
կութիւն էլ չէ ունեցել մուրհակներ գրելու կարգ ու
կանոններից: Համբարձումը հաւատացնում էր, որ երբ
ինքը մուրհակները մի առ մի տանում էր և տալիս,
Աթոյեանցը մինչև անգամ նրանց ստորագրութեան էլ
մտիկ չէր անում միշտ կը լինելով թէ «աղա Գուլա-
մեանցները ազնիւ ծարդիկ են, նրանք ուրիշի փողին
թաժահ չեն անի, կարելի է նրանց հաւատալ առանց
մուրհակների էլ»:

Բայց պառաւ Թոռթովեանցի մուրհակները լինչ
մուրհակներ են, որ նա ստացած է եղել աղա Գուլա-
մեանցներից—հարցըեց գործակատարներից մէկը,

— Աղա Գուլամեանցները Աթոյեանցից փողերը
միշտ վերցնելիս են եղել պառաւ Թոռթովեանցի միջո-
ցով: Նա է իրը մակրէ գնացել Աթոյեանցի մօտ և
փողերը ստացել և նրա շնորհով է խոկակէս Աթո-
յեանցը հաւատացել աղա Գուլամեանցներին այդչափ

մեծ գումար: Խարվելով պառաւի խօսքերով, թէ Գու-
լամեանցները ազնիւ վաճառականներ են և երբէք
լը ենց թոյլ չեն տայ ուրիշի փողերը ուտել: Թոռթո-
վեանցը աղա Գուլամեանցների հետ առաջուց մտածած
են եղել Աթոյեանցից հանել բոլոր նրա փողերը և
տեղը կեղծ մուրհակներ տալ այն պայմանով, որ բոլոր
գումարի մի մասը Գուլամեանցները տան Թոռթովեան-
ցին: Թոռթովեանցը իրան հաօնելի մասը և բացի այդ
իր սեպհական փողերը՝ ընդամենը երեսուն հազար մա-
նէթ յանձնել է աղա Գուլամեանցներին տարեկան 20
տոկոսիքով և փոխարէնը նրանցից մուրհակներ վերցըել:
Լոր ամենայն ինչ վերջացել է, այսինքն Աթոյեանցը
մեռել է և պառաւը նրա բարձի տակից աղա Գուլա-
մեանցների և իր անունով կեղծ ստորագրված 75 հա-
զար մանէթի վերքսիլները գողացել է և տուել է աղա
Գուլամեանցներին, այն ժամանակ սրանց ոտքը ու
ձեռքը բոլորովին բացվել են: Այս անդամ աղա Գուլա-
մեանցները սկսել են մտածել Թոռթովեանցի պարտից
էլ մի կերպ ազատվելու մասին: Բայց Թոռթովեանցը
այնպիսի կակուղ սլառուց չէ եղել, որ հետութեամբ
ազատվէին նրանից: Նրան խարելը այնքան հեշտ չէ
եղել, որքան Աթոյեանցների նման միաժիտներին խա-
րելը: Աղա Գուլամեանցները շատ են աշխատում, շատ
են չարչարվում պառաւի ձեռքից մի կերպ դուրս բե-
րել իրանց 30 հազար մանէթի մուրհակը բայց չէ յա-

ջողվում. պառաւը նրանց հետ գգուշութեամբ է վար-
վում: Վերջապէս Մակար աղայի համբերութիւնը հատ-
նում է և նա մի օր խօսք է տալիս իր եղբայրներին
շուտով, ինչպէս և իցէ, Թոթովեանցից առնել մուրհակ-
ները:

Այդ վճռից յետոյ Մակար աղան մի օր շուկայում
պատահում է Թոթովեանցին, ասում է թէ մտադիր է
այն օրը իր պարտքը վճարել և խնդրում է նրան, որ
երեկոյեան տանը սպասի, ինքը կը բերի փողը և վեք-
սիլները կը ստանայ: Երեկոյեան Մակար աղան վերց-
նում է իսկապէս 30 հազար մանէթ փող և գնում Թոթ-
ովեանցի տունը: Նա թաշկնակի մէջ կապած վո-
ղերը գրանից հանում է և դնում սեղանի վրա, խճ-
քելով պառաւին, որ մուրհակները յետ տայ և փողերը
ստանայ: Թոթովեանցի աչքերը, տեսնելով փողի կա-
պոցը, շանում են և նա շուտարված հանում է գողդո-
ղալով սնդուկից մուրհակը և գնում Մակար աղայի
առջեր: Օգտվելով ծերունու շփոթութիւնով և յարմար
վարկեանով, Մակար աղան խլում է սեղանից մուրհակը
և փողի կապոցը ու հայդա: Թոթովեանցը առաջին
վարկեանում չէ հաւատում իր աչքերին, բայց յետոյ
ուշքը գալով և իմանալով թէ բանը ինչ տեղ է, սկսում
է գոռաւ թէ իրան կողոպտեցին և ուշաթափած ընկ-
նում է յատակի վրա:

— Բապէօ, բըապօ, Մակար աղա, լաւ խորաման-

կութիւն է բանեցըել ես ի՞մ Աստուածը—բղաւեց գոր-
ծակատարներից մէկը յափշտակված լինելով Գրեգորի
պատմութիւնով:

— Ահա ինչպէս է վերջացըել բանը Մակար աղան
պառաւ Թոթովեանցի հետ—աւարտեց Գրեգոր իր պատ-
մութիւնը: Այժմ լիեզՃը մնացել է չոր տափի վրա և
ը գիտէ ինչ անէ, դատաստանատուն գնալ չէ կարող
որովհեաւ ոչինչ գրաւոր կամ ուրիշ փաստեր չունի, որ
Գուլամիանցների վրա հաստատէ իր պարտքը, իսկ ա-
ռանց փաստերին ոչ ոք չէ հաւատում նրա խօսքերին:
Հասարակութեան մէջ գանգատվելու ժամանակ ամենքը
ծիծագում են նրա վրա և չեն հաւատում որ աղա Գու-
լամիանցները նրան այդքան փող պարտ լինեն և ը
վճարեն և լինչպէս հաւատան, քանի որ շատ լաւ ճա-
նաշում են նրան և գիտեն, որ նա իր կեանքում այդ-
քան փող երբէք չէ ունեցել: Իսկ Ճշմարիտը խոստո-
վանվել ու ասել՝ պառաւ Թոթովեանցը նոյնպէս չէ
կարող, որովհետեւ գիտէ, որ եթէ Ճշմարիտը պատմի
թէ հըտեղից և ինչպէս է այդ պարտքը գոյացել աղա
Գուլամիանցների վրա, կարող է իր ծերութեան օրե-
րում խալտառակվել, յայտնելով իր մասնակցութիւնը
Աթութեանցին կողոպտելու մէջ: Այժմ լիեզՃը մնացել է
տանջվելով և գեշերու ցեսեկ մաշվում է իր գաղտնի
ցաւերով և ոչ ոքին չէ կարողանում յայտնել: Ճարա-
հատեալ ամենայն օր գնում է եկեղեցի և Աստուծուն

աղաշում, պաղատում, որ նա պատժի աղա Գուլա-
մեանցներին:

Եթէ Ճմարիտն էք ուզում իմանալ, մի հատ
գործակատար էլ անպատճի չի մնայ, — մէջ մտաւ մի
ուրիշը: — Ինչ որ վաճառականն է անում, նոյնը և սո-
վորում ենք. որ մէկը մեզանից կարող է պարձենալ,
թէ իսկապէս Ճմարիտ մարդ է — ոչ մէկը. ամենքս էլ
ոտից մինչև գլուխ թաթախված ենք մեղքի մէջ: Օք
հարիւրատը ստեր ենք ասում մուշտաբիների առաջ,
խաբում ենք, կտօնները պակաս ենք չափում, արժո-
դութիւնից աւել գներով ենք ծախում, մի խօսքով հա-
զար տեսակ սատանայութիւններ ենք անում, թէ ինչ
է մեր աղան պիտի օգտվի: Բայց աղան սրա փոխարէնք
թնչ է տալիս մեզ: Նա մեզ սովորեցնում է աւելի ու
աւելի խարեբայութիւն, խորամանկութիւն, կեղծաւո-
րութիւն: Մինչև այսօր մեզանից մէկը մաքուր սրտից
խօսել չէ կարողացել Մակար աղայի հետ, մինչև այսօր
մեզանից ոչ մէկը նրա հետ խօսելու ժամանակ չէ կա-
րողացել ասել այն, ինչ որ մտածում է: Ամենքս խօ-
սում ենք մի տեսակ, իսկ մտածում ենք ուրիշ տեսակ.
ամենքս կեղծաւորում ենք, շողոքորթում ենք նրան գուը
գալու համար: Մեր ստրկութիւնը այն տեղն է հասել, որ
եթէ Մակար աղան ասի, թէ այսօր ուրբաթ չէ,
այլ կերակի է, մենք կը համարանենք, չը նայելով որ
գիտենք, թէ նա սուտ է ասում: Եթէ ասէ, որ արե-

գակը լոյս չունի, մենք կասենք թէ Ճմարիտ է: Եթէ
ասէ, ոք կերկու անգամ երկու չորս չէ, մենք իսկոյն կը
պատապիտնենք թէ «այո, Մակար աղա, Ճեր ասածն
է»: Ինչո՞ւ համար ենք այդ բոլորը անում, — նրա համար
որ մենք նրա քէֆին ըլ դիպչենք, որ սրանով մենք
ցոյց տանք նրան մեր հնագանդութիւնը խոնարհու-
թիւնը, ուսպէս զի գրաւենք նրա հաւատարմութիւնը:
Միթէ այս բոլորը խարեբայութիւն չէ, միթէ պակաս
յանցանք է, քան թէ աղա Գուլամեանցների և պա-
ռաւ Թոթովեանցի աւագակութիւնը:

Այս ասում էր մի գործակատար, ոք ընդամենը
մի տարե էր ծառայել աղա Գուլամեանցների մօտ:
Մակար աղան նրան չէր սիրում և շատ վատ էր վար-
վում հետը: Ես կարծեցի, որ հինգ այդ էր պատճառը
նրա անբաւականութեան: Մակայն ես զգում էր նրա
բոլոր խօսքերի Ճմարտութիւնը: Ես գիտէի, որ իսկա-
մէս այն ամենը, ինչ որ նա ասում էր գործակատար-
ների մասին, բոլորը երաւացի է և արգար:

— Ուրիշ կերպ անկարելի է, պատասխանեց Գրե-
գորը եր գրութիւնով անբաւական գործակատարին:
Եթէ չը խոնարհենք, չը հնագանդինք աղա Գուլա-
մեանցներին, եթէ նրանց ուզածը չը կատարենք՝ այս
աշխարհում ասլըել չենք կարող: Նրանք սիրում են
կեղծաւորութիւն — պիտի կեղծաւորենք, սիրում են շո-
գոքութութիւն — պիտի շողոքորթենք, սիրում են սուտ

ասել—պիտի սուտ ասենք: Մի խօսքով ինչպէս նրանք են ուզում—պիտի այնպէս պահենք մեղ, եթէ ոչ, քաղցած կը մնանք: Տեսնում ես, այն օրվանից, ոչ դու մի փոքը հակառակութիւն ցոյց տուիր Մակար աղային, այն օրվանից դու նրա աչքից ընկել ես, չը նայելով որ դու Ճշմարիտ էիր խօսում: ԶԵ, եղբայր, հարկաւոր է անել այն, ինչոր քեզանից պահանջում են աղս Գուլամեանցները և ոչ թէ այն՝ ինչոր դու ես ցանկանում: Ուժիշ ճար չը կայ, եթէ ուզում ես նրանց աչքում հաւանելի լինել: Ես էլ առաջ շատ էի նեղանում իմ պաշտօնից և շատ ժամանակ ինքս ինձ ասում էի, թէ ինչ հարկաւոր է սուտ խօսել, կեղծաւորել, երբ որ առանց այն կարելի է վարվել, բայց յետոյ տեսայ, որ այդ անկարելի է, քանի որ աղա Գուլամեանցները կամայ ակամայ ստիպում են ամենայն ինչ անել, և ծառայելով նրանց անհնարին է սուտ չասել կամ չը խարել: Այժմ ինձ համար մի և նոյն է, չեմ էլ մտածում թէ օրական քանի անգամ եմ սուտ ասում և քանի անգամ խարում, որովհետեւ հէնց իմ ամբողջ օրվայ խօսակցութիւնը սուտ է և նրա մէջ ոչ մի ուղիղ խօսք չէք գտնի: Ինչ որ խօսում եմ Մակար աղայի հետ, ոչ մէկը ուղիղ սուտից չեմ խօսում, այլ կեղծաւորում եմ և ինչու չը կեղծաւորեմ, չը շողոքորթեմ, երբ որ ինքը սիրում է: Ինձանից խօմ սրանով մի բան չէ պակասում: Այսպէս չեմ խօսի, այնպէս կը խօսեմ, այդ չեմ ասի, այն կա-

սեմ, այդ բոլորը, իմ կարծիքով, մի և նոյնն է, միայն հարկաւոր է աչքի առաջ ունենալ թէ նրան է շահաւում: Աղա Գուլամեանցները եթէ կրանց ամբողջ կեանքը տոկում ատսելով, կեղծաւորելով, սրա և նրա ոտերը լուսված է անցկացնէլն հաւատացնում եմ ձեզ այսօր այնքան հարստութեան տէրեր չէին կարող մենել: Փողը, եղբայր, ամենայն բան ուժով ստիպում է մարգում անել—այդպէս չէ: Այսպէս ամեն Գուլամակատարները բոլովը գրական պատասխան տուին Գրիգորին և հաւանեցին նրա ասածները, բացի այն մէկից, որը իր պարտօնով անբաւական էր: Խալի ինչ վերաբերում էր ինձ, ես Ճշմարվուն ասած, համաձայն էի նրանում, որ մենք գործակատարներս խսկալէն թաղված ենք այդ բոլոր կեղծաւորութիւնների մէջ: Բայց լինչպէս անել: ԶԵ համաձայնվել Գրիգորի հետ, որ մի կտոր հացի տէր լինելու համար անհրաժեշտ է լինել Մակար աղայի առաջ կեղծաւոր և շողոքորթ, չէ կատող, քանի որ արդէն ճանաչում էի վերջինին և գիտէի, որ առանց սրանց անհնար է նրա մօտ երկար մնալ: Խալի ես ուզում էի նրա մօտ ծառայել ունենալով աչքի առաջ իմ ապագան: Ես չէի ուզում աղքատութեան մէջ ապեկ, ինչպէս իմ հայրը: Ես ցանկանում էի իմ ապագան նիւթապէս պակաչութեան տէնենել: Ո՞վ է աղա Գուլամեանցներին այսօր մեղագրում, ով է նրանց պախանակում: Ամոյեանցի փողերը ուտելու մասին: Ոչ ոք,

ընդհակառակը ամենքն էլ նրան պատում են, յարգում
են, փողոցով անցնելիս գլուխ են տալիս հեռություն՝ իսկ
իրանք հապարտ ու գոռող ոչ ոքի վրա ուշադրութիւն
չեն գարձնում, ոչ ոքի հետ չեն ուզում խօսել և ինչ
հարկաւոր է ուշադրութիւն դարձնել, քանի որ առանց
ուրեխների էլ կարողանում են ապրել:

Այսքան տարի ծառայելով—շաբունակեց Գրե-
գորը—ես վերջապէս հասկացել եմ, որ վաճառակա-
նութեան մէջ մարդ չէ կարող մնալ ազնիւ, մաքուր,
Ճշմարտախօս, Զէ կարող որովհետու, վաճառականու-
թիւնը այդպիսի մարդկանց չէ սիրում։ Վաճառակա-
նութեան մէջ ամենքը պիտի զբահանորված լինեն մի
գէնքով, որպէս զե կարողանան իրանց գոյութիւնը շա-
բունակել։ Այդ գէնքն է ասախօսութիւնը և խաբե-
բայութիւնը։ Բոլոր վաճառականները պիտի խաբող և
ստախօս լինեն, ուրիշ կերպ չէ կարելի լինել, քանի որ
ինքը վաճառականութիւնը հիմնված է հէնց խաբե-
բայութեան և ստախօսութեան վրա։ Ես երբէք չեմ
մեղադրում վաճառականներ, երբ նա խոըսամնկութիւն
է անում, ստախօսում է, խաբում է։ Զեմ մեղադրում,
որովհետեւ գիտեմ, որ նա կամայ ակամայ ստիպված է
այդպէս վարել։ Վաճառականների մէջ հաւատացէք, որ
Ճշմարտութիւն և ազնուութիւն ասված բաները դա-
տարկ բաներ են։ Փողը, այն անիբաւ ոսկին ամենայն
բան մարդուս մոռացնել է տալիս, մինչև անգամ խիղճն

էլ, հոգեն էլ, հաւատն էլ։ Բաց արէք աշքներդ և լաւ
մտիկ արէք ձեռ շուրջը։ Տեսէք ովէ կարող պարծենալ,
որ ազնիւ, առաքինի և Ճշմարտասէք մարդ է, —ոչ ոք,
ամենքը երարու խաբում են, կողոպտում են։ Աթուեան-
ցին խաբում է և կողոպտում Թոթովինանցը, աղա Գու-
լամեանցները խաբում են ու կողոպտում Թոթովինան-
ցին, վազը մի ուրիշը գուրս կը գայ նոյնը կանէ և աղա
Գուլամեանցները հետ և այսպէս կը շաբունակվի ան-
վերջ։ Ես ինքս եթէ դէպէ պատահի, եթէ ձեռքս ու-
ժենի փողեր ընկնեն, առանց խղճալու կը կլանեմ և այդ
բոլորովին նղճի դէմ համարի, որովհետեւ հաւ-
տացած եմ, որ այդ ուրեխն էլ անշուշտ մէկ մարդեց
կողացած է այդ փողերը։

Գողացած եմ ասում որովհեակ սրանում ես հա-
մոզված եմ։ Գողութիւն ասելով ես միայն աղա Գուլա-
մեանցները Աթուեանցից և Թոթովինանցից արած գողու-
թիւնը չեմ համարում։ Սա աշկարայ, անամօթ աւագա-
կութիւն է հաւատար այն մարդասապանների գործողու-
թեան, որոնք մարդկութենից փախած թափառում են
անտառներում։ Ես գող և կողոպտիչ համարում եմ ան-
խըտիր բոլորմեր վաճառական դասակարգը որը չէ աշ-
խատում—վարձատրվում է, քթունք չէ թափում—փոքը
միշտ կուշտ է։ Այստեղ դատապարտելի չեն աղա Գու-
լամեանցների նման անհատները, այլ դատապարտելի է
միայն վերցրած բոլոր վաճառականական դասակարգը։

Իսկ ելթէ աւելի պարզը կուզէք իմանալ դատապարտելի
է մեր ներկայ հասարակական կազմակերպութիւնը,
այն կազմակերպութիւնը, որը բաւական չէ որ գոյու-
թիւն է տալիս աղա Գուլամնեցներին այլ և նրանց
մեջոց է տալիս հասարակութեան մէջ մի յախնի աս-
տիճանի բարոյական դիրք բռնել:

Ես այդ բոլորը շատ լաւ իմանում եմ և այդ պատ-
ճառով չեմ էլ դատապարտում աղա Գուլամնեցներին
այլ ընդ հակառակը աշխատում եմ ես էլ նրանց ձա-
նապարհով գնալ, որովհետեւ կը կնում եմ, որ ուրիշ կերպ
անհնար են ապրել:

Գրեգորը ըստ կարողացաւ շարունակել իր խօսքը,
որովհետեւ այդ ժամանակ ներս մտաւ ծի մուշտարի և
մենք ցըսեցինք մեր տեղերը նրան ընդունելու:

Այդ խօսակցութիւնը ինձ խիստ հետաքրքրելի էր:
Շատ ավասուեցի, որ նա ընդհատվեց: Նա ինձ համար
հետաքրքրելի էր նաև՝ որ ես իմացայ այն ծերունու
գաղտնեքը, որը եկեղեցում աղօթելու ժամանակ սպառ-
նակի հայեացք էր ձգում Մակար-աղայի վրա և երկ-
ըորդ՝ որ առիթ էր տալիս ինձ ծանօթանալու գործա-
կատարների հետ, թէ ինչպէս են վերաբերվում նրանք
դէպի իրանց պաշտօնը և Մակար աղայի շահերը:

Թէ այս խօսակցութեան մէջ գործակատարները
ոչինչ աղա Գուլամնեցների շահերի ընդդէմ բան չէին
ասում, այլ միայն ընդհանուր կերպով քննադատում էին

բոլոր վաճառականներին, բայց այսու ամենալինիւ ես
աշխատում էի անհաւատարմութեան գէթ մի նշոյ գտ-
նել նրանց մէջ դէպի աղա Գուլամնեցները, որ ծա-
ծուկ կերպով յատանեմ Մակար աղային, որպէս զի սրա-
նով ձգելով միւս գործակատարների վարկը նրա աշ-
քում՝ բարձրացնեմ իմ սեպհականը: Անխզգութիւն էր,
թէ ոչ իմ կողմից, ինձ համար բոլորը մէկ էր: Միայն
թէ ես սիրելի դառնայի Մակար աղայի աչքում և գր-
աւէկի նրա վստահութիւնը: Ինձ համար բոլոր միջոց-
ները արդար էին, միայն թէ նրանք հասցնէին ինձ
նպատակիս: Ես ամենայն ըոպէ յիշում էի մանրավա-
ճառ Թորոսի խրատը և միշտ մտարերում էի նրա խօս-
քերը թէ «սուտ ասիր, խարիս, խորամանկութիւն արա,
միայն թէ մէջտեղ շահ ունենաս»:

Երեկոյեան, սովորականին համեմատ, ես աղա
Գուլամնեցների տանն էր: Մակար աղան իր առանձ-
նասենեակումն էր: Սատանան հէնց բթում էր ինձ, որ
անսպատճառ գնամ նրա մօտ և սպատմեմ գործակա-
տարների այն օրվայ խօսակցութիւնը մի քանի ստեր
էր իմ կողմից աւելացնելով, որ ցոյց տամ նրանց ան-
հաւատարմութիւնը: Մի քանի ըոպէ ես տատանման
մէջ էր «գնալ, թէ ըստ գնալ»: Մի կողմից չէր ուզում
գնալ, որովհետեւ վախենում էր Մակար աղան իմ խօս-
քերին ըստ հաւատար, միւս կողմից՝ ցանկանում էր գնալ
մտարերելով որ ինձ վարձելու օրը Մակար-աղան հէնց

ինքը պատուիրել էր յայտնել իրան այն ամենը, ինչոր
ես կը լսեմ ուրիշներից իր վերաբերութեամբ:

Մինչև իմ վերջելը բարեբաղդաբար, ինքը, Մակար
աղան ծառայի միջոցով կանչեց ինձ իր մօտ: Առաջին
անգամ չէր որ ես մտնում էր նրա առանձնասենեակը:
Վերջին ժամանակները նա սովորութիւն էր արել եր-
բեմն ինձ կանչել իր մօտ և զանազան բաների մասին
ինձ հարց ու փորձ անել: Լինելով կաօկածաւոր բնաւո-
րութեան տէր մարդ, Մակար աղան ուզում էր, որ ա-
մէնայն բան իրան յայտնի լինի և այդ պատճառով ին-
ձանից շատ անգամ այնպիսի չնչին բաների մասին տե-
ղեկութիւններ էր պահանջում, որ ես զարմանում էի:
Օրենակ նա հարցում էր թէ գիշերները այս կամ այն
ծառան ինչ է անում իր սենեակում, վանդ է պառկում
քնելու, թէ ուշ քանի՞ բաժակ է թէս խմում, թնչքան
անգամ է օրը հաց ուսում և այլ ալսպիսի մանր բա-
ների մասին: Երբ մտայ առանձնասենեակը, Մակար
աղան թէս էր խմում: Ես գլուխ տուի նրան և դռան
կողմը կանգնեցի ձեռքերս դարսած սպասելով, թէ ինչ
պիտի հրամայէ ինձ:

—Հըմ, թնչ կայ, ինչ չը կայ, պարոն Խաչի:

Պէտք է ասած, որ վերջին ժամանակները Մակար
աղան սովորութիւն ունէր ուրախ ժամանակին ինձ հետ
խօսելիս «պարոնը» կացնել իմ անուանը մի տեսակ
ծաղրածութեամբ արտասանելով այդ մականունը:

—Ձեր հրամանոց առողջութիւնը, Մակար աղա,
մի այնպիս բան չը կայ, որ ձեզ հետաքրքրի—պատաս-
խանեցի ես գլուխս համեստովթեամբ լսոնարգեցնելով:
—Ինչպիս թէ չը կայ: Այսօք ես մինչև երեկոյ
մագաղինում չեմ եղել, թնչ են արել գործակատար-
նեցը:

—Ինչ պէտք է անեն, միթէ դուք չը գիտէք, թէ
ձեր հրամանքը մագաղինում չեղած ժամանակը միշտ
թնչ են անում: Ի՞նչ այս մասին առաջ մասին այս մասին
—Ի՞նչ էս էլլի մի բան կայ: Առաջ մասին այս մասին

—Ոչ մի այնպիսի բան չը կայ, ուզում եմ յասել,
որ երբ դուք մագաղինում չէք լինում առհասարակ
գործակատարները մի փոքր խելօք չեն մնում—պա-
տասխանեցի ես գլուխս առելլի քարշ գցելով, իրութէ
խիստ ամաչում եմ Մակար աղայից:

—Գիտեմ ինչպիս են պահպան իրանց: Երբ ես այն-
տեղ չեմ լինում հաւաքլում են միասին և ուխները
ծոռած սովբաթ անում, իսկ մուշտարիները գալիս են ու
դատարկ լետ գնում:

—Կաւ կը լինէր, եթէ սովբաթ անէին իրանց վե-
րաբերեալ բաների մասին, բայց նրանք շատ ժամա-
նակ դատողութիւններ են անում իրանց գլխից մեծ
գործերի մասին:

—Ասա տեսնեմ: թնչ գործերի մասին են դատո-
ղութիւններ անում, հարցուեց Մակար աղան անհամբե-

բութեամբ, բարկացած և տեղից բարձրանալով:

Ես մի փոքր յետ քաշվեցի ցուց տալու համար, թէ իբր վախում եմ նրանից:

— Զեթ գործերի մասին են խօսում և ձեղ բամբասում են:

— Ի՞նչպէս թէ ինձ բամբասում են:

Մակար աղայի հետաքրքրութիւնը հասաւ վերին աստիճանի, Ես ինձ միամիտ ձեւացրի, որ իբրև թէ իմ ասածին ինքս այնքան նշանակութիւն չեմ տալիս:

— Ի՞նչ են խօսում իմ վերաբերութեամբ, պատմի՞ս շուտով — կրկնեց նա:

— Ասում են զոդուք լաւ մարդ չէք, խարող, սուստ ասող էք, է՛հ, ինչ գիտեմ. ուրիշ արդակնիշ շառ բաներ են ասում:

— Էլ թիւ են ասում:

— Թէ դուք ձեզանից մեծերին, և ուժեղներին կեզծաւորում էք ու շոդքորթում, իսկ փոքրերի առաջ հալարտ ու գոռող էք պահում ձեզ. Թէ դուք գողութիւնով և խարեբայութիւնով էք այսքան հարստութեան տէք դարձել. Գլխովը պատմում էք, թէ իբրև խարել էք մի ինչ որ Աթոյեանց ազգանունով վաճառականի նրա 75 հազար մանէթ վողը կուլ էք տուել յետոյ խարել էք ծերունի Թոթովեանցին և նրա 30 հազար մանէթն կերել. Ացդակիսի և որանց նման շատ բաներ են ասում, Մակար աղա: Ես չէ ուզում լոել

նըանց էլ, որովհետեւ ինձ շատ վաստ էք թւում որ իմ ազակիս մասին այսպիսի ստեր են հնարում և այն էլ այնպիսի մարդեկրոնք նրա հացով են ապրում: Բայց թիւ պիտի անէլ, ամագագլնից գուրս գալ չէի կարող, նրանք խօսում էին, ես էլ ակամաչ լսում էիս Մակար ազան բաթկրթեւնից գունատվեց: Ես խկամէս սկսեցի նըանց վախենալ: Բայց շուտով էլ ուղղեցի ինձ: — Յետոյ էլ թիւ էին խօսում այն շ... զարմերը: — է՛հ, Մակար աղա, չատ բանեց էին ասում, բայց ոլ է հաւատում այնպիսիների ասածին: — Հաւատում են, թէ չեն հաւատում, այդ քեզանից հարցնող չը կայ, դու պատասխանիր այն, ինչ որ ես եմ քեզանից հարցնում: — Ասոն տեօնեմ, էլ ինչեր էին խօսում — ասեց Մակար աղան կատաղած, այնպիս որ ես սկսեցի դողալ:

— Մայն ձեր վրա չէին խօսում, այլ բոլոր վաշտականների վրա, թէ նրանք ամենքն էլ սուտ ասողներ են, խարողներ են, գողեր են, աւագակներ են, կողովտողներ են: Թէ նրանց մօտ ծառայողներն էլ պէտք է երանց նման լինեն, որովհետեւ ուրիշ կերպ չենել:

— Այդ ո՞ր գործակատարն էք ասում: Ես լիշեցի Գեիգորի և մէկէլ իր պաշտօնից անբաւական գործակատարի անունները: — Այդ էլ իմ լաւութեան պտուղը... փողոցներում

ոտաբորեկ լակոտներ էին, հաւաքել եմ բերել մի կտոր հացե տէր շինել, այժմ ինձ էլ չեն հաւանում: Արի այժմ աղքատներին ողորմութիւն արա, խղճա նըանց վրա, Մակար: Ես գիտեմ այսուհետեւ, թէ ինչպէս է հարկաւոր վարվել նըանց հետ: առ այս նախօն զայաց —Գրիգորը ասում էր, թէ մինչև անդամակնքն է պատրաստ է ուրեշի փողերն ուտել, եթէ ձեռքը ընկնէ: Օրինակ, ասսւմ էր «Եթէ աղա Գուլամեանցների փողերեց մի տանը կամ տասնու հինգ հագար մանէթ ձեռքս ընկնէ, ես առանց երկար մտածելու կը սեպ հականացնեմ և շեմ վերադարձնէ, որովհետեւ այդ մեղք չէ, քանի որ աղա Գուլամեանցներն էլ Աթոյեանցի և Թոլովեանցի փողերն են կլանել: Գողից գողութիւն անելը մեղք չէ»: Նա աւելացրեց, որ այժմ հինգ ձեզ մօտ ծառայում է այն նպատակով, որ մի մեծ գումար գողանայ ձեզանից ու միախչի:

Այս անգամ Մակար աղայի կատաղութիւնը սահմանից դուրս եկաւ: Նա սկսեց շտապով քայլել: Իմ խօսքերը ասեղները նման ցցլում էին նրա սրտում:

— Լաւ գնա — դարձաւ վերջապէս լին:

— Բայց աղա մի բան եմ խնդրում ձեզանից:

— Ի՞նչ ես ուզում:

— Ո՞ր դուք գործակատարներին չը յատնէք, թէ ես եմ այս ամենը ձեզ պատմել, առանց այն էլ նրանք ինձ հետ լաւ շեն վարվում, այս անգամ ինձ բոլորովին

ծեծելով կը սպանեն: Դուք էլ գիտէք, որ ես մի խեղչ մարդու տղայ եմ, մտել եմ ձեզ մօտ մի կտոր հաց ուտելու, պարտագոր եմ այս հացե փոխարէն ձեզ հաւատարմութեամբ ծառայելու: Ես դմ պարտքս եմ կատարում:

— Լաւ է, գիտեմ, գուրս եկ կորից:

Ինչպէս հրամայեց Մակար աղան ես Դի հարկէ դուրս եկաւ սկզբն, բայց չը կորայ, ես մտայ սենեակս և ուրախութիւնից միսեցի սուլել ու երգել կատարելապէս բաւականացած իմ աջողութիւնով:

Միւս օրը առաւօտեան Մակար աղան մագաղինից վոնդեց Գրիգորին և այն գործակատարին, որ իր դրութիւնով անբաւական էր, վերջինի պաշտօնը Մակար աղան յանձնեց ինձ:

VI

Արդէն երեք տարի էր, որ ես ծառայում էի աղա Գուլամեանցների մագաղինում: Իմ գործերս վատ չէին գնում: Ես արդէն գրաւել էի Մակար աղայի հաւատարմութիւնը և օրէցօք աւելի ու աւելի բարձրանում էի նրա աչքում: Իմ թուրս երկսարի էր, նա կտրում էր այս կողմով էլ, այն կողմով էլ: Մանրավաճառ Թորոսի խօսքերի նշանակութիւնը ես փոքր առ փոքր սկսում էի հասկանալ, նրա տուած խթատը ինձ օգնում էր: Այնտեղ ուր հարկաւոր էր խորամանկութիւն — ես խորա-

մանկ էի ինչպէս օձ։ Ուր հարկաւոր էր միամտութիւն—
ես միամիտ էի ինչպէս ոչխար։ Ուր հարկաւոր էր կեզ-
ծաւորութիւն և շողոքորութիւն—ես կեղծաւորող և
շողոքորող էի ինչպէս պարսիկ, ուր հարկաւոր էր սր-
տախօսութիւն—ես սուտ էի ասում, ինչպէս մի հմայող։
Մի խօսքով ես հնագանդվում էի ամենայն մի դէպ-
քում հանգամանքներին և իմ ամեն մի քայլը դնում
էի վերջինների համեմատ՝ միայն թէ կազողանալի ա-
ռաջանալ Մակար աղայի մօտ, միայն թէ ձեռք բերէի
նրա վստահութիւնը։

Հասել էին այն օրերը, երբ Մակար աղան պիտի
պատկիլէր։ Մի քանի ամիսներ առաջ արդէն սկսել էին ք
պատրաստութիւններ տեսել այդ նշանաւոր օրվայ։ Հա-
մար։ Այդ օրերը ես այնքան զբաղված էի, որ քեմ-
սրբելու համար անգամ ժամանակ չունէի։ Ի՞մ գործերը
շատացել էին. ամենայն ինչ ես էի կատարում թէ տանը
և թէ մագաղինում։ Ամենքն ինձ էլն յանձնարարու-
թիւններ անում, ես կատարեալ թեեր էի առել և
թռչում էի ամեն կողմ, ուր որ ինձ ուղարկում էին։
«Խաչի, գնա բազար այս ինչ բանը գնիր»—«այս ըոպէին
աղա» և Խաչին մի վարկեանում անհետանում էր ա-
ղայի հրամանը այնապաղ կատարելու։ «Խաչի, վազ տուր
մագաղինից այս ինչ կտորը բեր»—Մակար աղան դեռ
խօսքը շաւարտած Խաչին արդէն հանապարհ էր ընկել
Մի խօսքով «եօրդա Խաչին» աղա Գուլամեանցների

տանը դառել էր մի գնդակ և ուր որ նրան ձգում էին,
նա գլորվելով գնում էր։

Մակար աղան այդ ժամանակները գտնվում էր
ուրախ տրամադրութեան մէջ։ Նա ամենքի հետ քաղ-
ցրութեամբ էր վարվում, ամենքի հետ խօսնում էր կա-
կզութեամբ նա մանաւանդ ինձ հետ։ Միւս գործակա-
տարների գէպի ինձ ունեցած նախանձին չափ չը կար.
Ես դառել էի մի մուշ և ծակում էր նրանց աչքերը։
Ամենքը նախանձում էին, մանաւանդ նրա համար, որ
ես աղա Գուլամեանցների ընտանիքում ընդունվում էր
ինչպէս նրա անդամներից մէկը, իսկ իրանք ամսէնը մէ
անգամ հազիւ էր պատահում, որ մտնէն այնտեղ։

Մակար աղան պիտի պատկիլէր ։ Այդ գաղաքի մի
հարուստ դրամատիրոջ աղջկայ հետ։ Այն աղքատ աղ-
ջիւը, որի վրա նա ուզում էր առաջ նշանվել և որի
մասին միջնորդութիւն էր անում տէր Աւահակը, — մե-
ռած էր։ Հասարակութեան մէջ խօսում էին, թէ նրա
մահուան պատճառը եղել է Մակար աղան։ Ահա ինչ-
պէս էին պատժում չար լեզուները որոնց ես, Ճշմարիտը
խօսովանած, դժուարանում եմ հաւատալ։

Ասում էին, թէ երբ Մակար աղան երկար ժամա-
նակ աղջկայ սիրու գրաւելու համար զանազան խօրա-
մանկութիւններ գործ գնելուց յետոյ տեսնում է որ չէ
յաջողվում հասնել իր նպատակին, վճռում է դիմել վեր-
ջին ամենախիստ մէջոցին։ յոյս ունենալով, որ այդ մի-

զոցը՝ անշուշտ՝ կօգնել նրան իր ցանկութեանը՝ հասնելու։
Նա վարձում է մի քանի գագանաբարոյ մարդեկ և
պատւիրում նրանց՝ մի գեշեր գաղտնի կերպով սպանել
օրիորդի սիրած երիտասարդին, որպէս գի այսպիսով
աղջկայ սիրած ազատվի նրա սիրուց և ինքը, Մակար
աղան, կարողանայ պսակվել նրա հետ։ Մի գեշեր խեղճ
երիտասարդը շուկայից վերադառնալու ժամանակ՝ ա-
ւազակներից մէկը գաղտնի անկիւնից արձակում է նրա
վրա ատրճանակը և գնդակը թափանցելով ողորմելու
կուրծքի մէջ, մի վայրկեանում սպանում է նրան։ Եթե
երիտասարդի գիշակը յանկարծակի բերում են տուն,
նրա ծերունի հայրը տեսնելով իր միակ որդու անշնչա-
ցած գիշակը՝ ուշաթափում է և միւս օրը խելագար-
վում։ Իսկ պառաւ մայրը նոյնակս չը կարողանալով իր
գաւակի կորստեան դառն կսկիծը երկար տանել՝ մի
ամսից յետոյ միսվում է միւս աշխարհ։

Սիրահարված օլլորդին երկու օր շարունակ չեն
կարողանում բաժանել երիտասարդի գիշակից։ Թաղելու
ժամանակ հագիւ, հագ նրան կարողանում են արգե-
լել, որ իր սիրելի գիշակի հետ միասին չը մտնի գերեզ-
մանը։ Օրիորդին անշնչացած բերում են տուն և մի
քանի օրից յետոյ խելագարվում է, իսկ մի ամիս չան-
ցած՝ նա ևս մեռնում է։

Այդպէս պատմում էին չար լեզուները, սակայն ես
կըկնում եմ, որ չեմ կարող երաշխաւորել թէ այդ ող-

թէրգական դէպքի պատճառը Մակար աղան լինէր։
Այսպէս թէ այնպէս, Մակար աղան գամկարում է իր
հաւանած աղջկայ վըառմտածելուց։ Իսկ իր միջնոր-
դութեան համար տէր Վահակը այնու ամենայնիւ ստա-
նում է Մակար աղայից կանաչ կարմրանոցները, վո-
խարէնը նրա համար գտնելով մի հարուստ ընտանիքից
աւելի զեղեցիկ, թէւ քիչ պատաւած մի հարսնացու։

Թէ ինչակս էր Մակար աղայի հարսնակքը, որքան
չքեզ էր նա և ինչքան շուալ ծախսեր եղան—այդ մա-
սին ես աւելովդ եմ համարում գրել իմ յեշտակարա-
նում։ Բաւական է միայն ասել, որ Ճաշկերոյթը շարու-
նակլեց ուղիղ հինգ օր և քաղաքում մարդ չէր մնա-
ցել, որ հօտաւրված չը լինէր հարսնակք։ Մի օր Մա-
կար աղան Ճաշկերոյթ աւեց առանձնապէս հայ բնա-
կեների բարձր գտակարգին, երկրորդ օրը միջին և
սուր գասակարգերին, երրորդ օրը ուուներին, չորրորդ
օրը բացառապէս թուրքերին, իսկ հինգերորդ օրը իր
ընկերակիցներին։ Այդ հինգ օրվայ ընթացքում ես այն-
քան աշխատել էի, այնքան այս ու այն կողմն էի վագ-
վազել, որ յետոյ երեք օր շարունակ յոդնածութենից
սենեակիցս դուրս գալ չը կարողացայ։

Այսպէս թէ այնպէս, ինձ համար խիստ ուրախ
անցան հարսնակքի օրերը, կս մինչև անգամ զգում էի
ինձ հարսնակքի հերոսներից մէկը։ Մի անձն, որով իմ
ուշք ու միտքը այդ օրերը չափազանց զբաղված էր—այդ

Թամարնէքը, որի հետ ամենայն ժամ, ամենայն ըսպէ
առելիթ էի ունենում խօսելու: Թամարը հասակ առնելով,
այդ ժամանակին էղը կրկնապատճիկ գեղեցկացել էր:
Մարդ եմ ասում, այն էլ ինձ նման 20—21 տարեկան
թարմ երեսասարդ, որ նրա վրա կարողանաւ անտար-
բերութեամբ նայել: Նայելով նրա արուեստական վի-
փոխութիւններից զուրկ, առուգ և կարմրախառն թշե-
րեն, մոյզք և կրակոտ աչքերին: Նայելով մի կամ հիւ-
սած շագանակագոյն խիստ մագերին, որոնք թափիելով
նրա բարձր ուսերի վրա համում էին մինչև մանիշա-
կագոյն ամուսին: Հագուստի վրա կապած ոսկէ գու-
տիկն: Նայելով նրա ահագին ոսկէ մեղալիոնով զար-
դարված բարձր կուծքին՝ խոսովանում եմ որ ամե-
նայն անգամ իմ միտքը ժամացոյցի սկաքի նման ըլսի-
չըլսիում էր: Ես հազիւ հազ կարողանում էի զայել ևմ
կրքերը:

Հարսանիքի օրերը կանանց դաստիարակը ինչպէս
ընդունված էր գեռ նահապետական կը ութեան մէջ
գտնվող Շ.. քաղաքի հասարակութեան մէջ չէր խառն-
կում տղամարդկանց հետո նա քութովին անջատված՝
առանձին սենեակին երում էր շարունակում զուարձու-
թիւնը, ուր ոչ մերամարդ չէր համարձակվել ոտք
կոխել: Սակայն աղա Գուշամեանցները ընդունիքի վր-
տահութիւնը այնքան գրաւել էր, որ առանց որ և
է արգելքի համարձակորէն իբրև ընտանիքի անդամ-

ներեց մէկը, մտնում էի կանանց գասակարգի մէջ:
Օգովիելով այդ արտօնութիւնով, որը կը կնապատկում
էր միւս գործակատարների նախանձը, ես ամենայն ը-
ապէ կարողանում էի հանդիպել Թամարին: Պէտք է ա-
սած, որ Թամարը չը նայելով իմ և նրա մէջ եղած
ահագին զանազանութեան, բոլորովին հպարտութեամբ
կամ գոռողութեամբ չէր նայում ինձ վրա: Իսկ ես, և
հարկէ, օգուտ քաղելով նրա պարզ բնաւորութիւննեց,
սոէկ ստէպ մօտենում էի նրան և խօսեցնում՝ ամենա-
չին առելիթներ գոյնելով:

Մակի անելով Թամարի գրաւիչ ոէմքին, իմ գը-
խում հազար տեսակ մտքեր էին ծագում, իմ ֆանտա-
զիան գրգռվում էր. և ես դարձեալ իմ երևակայու-
թեան մէջ մկանում էի կառուցանել օդային ամքոցներ:
«Երանի այն մարդուն՝ մտածում էի ես—ոը պիտի
դառնայ քո տէրը Թամար: Բայց ով պէտք է լինի այդ
մարդը:—Ի համար քաղաքի հարուստներից մէկը, կամ
Ռուսաստանի շռայլ քաղաքներում իր առողջութիւնը
փաշցրած, աշկած և մաշկած մի երիտասարդ վաճա-
ռական կամ պառաւած և մազերը սպիտակած մի տգեղ
դժամատէր, որը կը տանի քեզ նման գեղեցիկ և թարմ
օրինադին, որ մի քանի տարում քեզ էլ իրան պէս պա-
ռաւացնէ: Է՛հ, ով է հարցնում այդ. միայն թէ փող
լինի, միայն ասեն թէ աղա Գուշամեանցների աղջկան
այս ինչ անուանի հարուստը ուզեց: Այս ոսկի, ոսկի. ին-

չեր չես անում դու, քո ձեռքովդ լինչ հնարներ չեն անց-
նում: Ինչ կը մնէր, որ ես էլ ունենայի քեզ, որ այսօս
կարողանայի համարձակօրէն մտածել Թամարի նման
օրերդի վրա: Բայց մթէ առանց հարստութեան չէ
կարելի յոյս դնել, մթէ աղա Գուլամեանցները, եթէ
ուզենան, չեն կարող ինձ բազդաւորեցնել: Ինչ անենք,
որ աղքատ եմ և իրանց ծառալում եմ: Մթէ եթէ
ուզենան չեն կարող ինձ մի օրում հարստացնել: Ինչ կը
պակասի նրանց, եթէ իրանց ահագին հարստութեան
մի մասը տան ինձ և Թամարին էլ պսակեն ինձ հետ
ասելսվ. «տար, Խաչի ապիք և զուարձացեր»: Այս,
եթէ ուզենան, կարող են անել և ես Թամարի համար
ուրեներեց վատ ամուսին չեմ լինի: Փառք Աստուծոյ,
ինչ պակասութիւն ունեմ բացի հարստութիւնից: Ինքս
ջահիւ, խելօք տղայ, դէմքով գեղեցիկ, մարմնով առողջ,
գործ կատարելում աշխոյժ և ժիր: Թող ինձ մի տասն
հազար մանէթ փող տան և տեսնեն, թէ ես ինչպէս կը
շահեցնեմ այդ փողերը և ինչ տեսակ վաճառական կը
դառնամ: Մի քանի սարում կը կըկնապատկեմ, կեռա-
պատկեմ այդ գումարը, կը գրաւեմ Ասւսաստանի բոլոր
վաճառականների հաւատարմութիւնը և մեծ քանա-
կութեամբ նրանցից ապառիկ ապանքներ բերելով այս-
տեղ օրէցօր կընդարձակեմ իմ առեւտուրի շրջանը և
այնուհետեւ թող մի հատ վաճառական դուրս գայ, որ
ինձ հետ համարձակվի մըցել: Կը փախցնեմ մի քանի

տարում վաճառականական ասպարիզից նրանց բոլորին
և ինքս միայն կը մնամ այնտեղ: Կը կառուցանեմ ահա-
գին շքեղ և փառաւոր տներ, Թամարին կը շրջապատեմ
անթիւ ծառաներով, չեմ թոյլ տայ, որ նա մի գործի
անգամ ձեռք կացնի: Մի քանի տեսակ կառքեր կը
պահէմ, օրեկան երեք տեսակ հագուստ կը հագցնեմ:
Մի խօսքով նա կասպի ինչպէս թագուհի, ևսկ ես ինչ-
պէս մի թագաւոր:»

Այդ երեակայութենից յետոյ սմբավկելով սկսում
էի մտածել, թէ յերակ չէր կարելի արգեօք մի կերպ
Թամարին ափբանալ: Զը կան արգեօք այնպիսի խորա-
մանկութիւններ, որոնց միջոցով հնար լինի այդ թէն
դժուար, բայց ոչ անելսագործելի նսկատակին հասնել:

Իմ գլուխը փոտած գլուխներից չէր: Ես հաւատա-
ցած էի, որ նա ընդունակ է ստեղծել հազար տեսակ
ծրագիրներ այդ իմ յանդուգն ցանկութեանը կատա-
րումն տալու հանար: Բայց ինչպէս, ինչ հնար գտնել,
ժամանակը շատ սուզ էր: Թամարի 17 տարին լրացած
էր, նրա մարդու գնալու ժամանակը հասել էր և ալսօք
կամ վաղը կարող էր մէկը նշանվել նրա վրա. արդէն
քաղաքում խօսում էին նրա մասին: Այդ միտքը սկսեց
ինձ խիստ զբաղեցնել և ես գիշեր ցերեկ տանջվում էի
նրանով: Աշխատում էի հնարել զանազան խօսաման-
կութիւններ, որոնց միջոցով կարողանայի կողմնակի
կերպով արգելել Թամարի մարդու գնալը, մինչև որ

տեսնէի թէ իմ վերջը աղա Գուլածեանցների մօտ ինչպէս է լինում: Հարսանիքից յետոյ եթք իմ սիրտը բոլորովին արդէն գրաւել էր Թամարը, ես բոաչ անգամ չէի դադարում նրա մասին մտածելուց, վայրկեան անգամ ինձ հանգստութիւն չէր տալիս նրա դէմքը: Վերջապէս իմ գլխում լղացաւ մի միտք, որը և սկսեց ընդդիմադրել իմ յուսահատութեան:

Խատ յանդուգն և յանցաւոր էր այդ միտքը, իմ կողմից հարկաւոր էր մեծ զգուշութիւն և համարձակութիւն նրան իրագործելու համար: Սակայն ինձ համար այդ մի և նոյն էր, Ես երբէք ինձ նեղութիւն ըստուի մտածել թէ որքան չար և սատանայական էր այդ միտքը, ըստ որում ես արդէն հասել էի այն աստիճանին, որ իմ նպատակը արդարացնում էր ամենայն տեսակ միջոցներ, թէկուզ այդ միջոցները լինէին ստոր և անաղնիւ: Լու տեսնում էի, որ ուղիղ ձանապարհով դժուար է հասնել այն նպատակին, որի իրագործումը իմ կեանքը միանգամ և եթ պիտի ապահովէր: Ուրեմն ինչո՞ւ չի գնալ ծուռ ձանապարհով, քանի որ սա կարող էր ինձ հասցնել բաղդաւոր և նախանձելի ապագայի:

* * *

Անցան մի քանի ամիսներ յիշեալ միտքը իմ մէջ լղանալու օրեց: Մե օր Մակար աղան ինձ կանչեց դարձեալ իր առանձնասենեակը:

Խաչի—դարձաւ նա դէպի ինձ—դու պիտի վաղը

Ճանապարհվես Բագու և այսուհետեւ կը ծառայես այնտեղ. և հարկէ էլի մեր գործերում: Կը գնամս թէ ոչ: —Ի՞նչպէս կարող եմ համարձակվել ձեր հրամանը ըստ կատարելու, թէկուզ դժուսք էլ ուղարկէք, դարձեալ պատրաստ եմ գնալու, միայն թէ ձեր հրամանը կատարվի:

—Նատ ապրես, վատ աղայ չես դու, Խաչի և հէնց դրա համար եմ ուղում քեզ և ոչ ուղիչին ուղարկել: Դու այնտեղ կը լինես իմ եղբայր: Արբահամ աղայի ձեռքի տակ և պիտի կառավարես այնտեղի բոլոր մեր գործերը, միւս գործակատարները քո ձեռքի տակ կը լինեն: Լսում ես:

—Նատ շնորհակալ եմ, Աստուած ձեր հարստութիւնը հագար անգամ աւելացնի:

—Այդ պաշտօնը մեծ պաշտօն է, դու պէտք է շատ զգուշ լինես նրանում: Բագուի գործերը այսուղի գործերի նժան չեն: Դու պէտք է կառավարես նաւթային հանքերը, Փօտօգէնի գործարանը, հաշուէտունը և բացի սրանից մեր նոր շնութիւններին էլ մտիկ տաս:

—Կաշխատեմ ձեր առաջ ամօթալի չը մնալ:

—Մտիկ արա, լաւ ծառայիր: Իմ եղբայրս էլ ինձ նման բարկացող և խստաբարոյ մարդ է, նա էլ, ինչպէս ես, չէ սիրում իր ասածը երկրորդ անգամ կրկնել: Դու պիտի այնպէս վարվես նրա հետ, որ նրան չը բարկացնես, եթէ ոչ քեզ մի օր անգամ չի պահի: Դու չը

ալիտի մազի շափ անգամ նրա հրաժաններից շեղվես:
Լուռմ եմ:

— Ես կը լինեմ Աբրահամ աղայի սարուկը, ինչպէս
նա կը հրամայի, այնպէս էլ ես կը վարվեմ: Ես ձեր
ծառան եմ, ձեր հացն եմ ուսում, ծառան թնջ իրաւունք
ունի իր աղայի հրամաններից շեղվել:

Մակար աղան մի քանի սոպէ լոեց և մտածողու-
թեան մէջ ընկաւ:

— Խաչի—սկսեց նա յանկարծ, կարծես թէ ծանր
քնից սթափելով:

— Հրամայեցէք աղա:

— Դու ինձ շատ ես սիրում:

— Աւելի քան թէ իմ ծնողներիս. Ես վերը Աստու-
ծուն եմ պաշտում, իսկ այս աշխարհում ձեզ:

— Ինչ որ հրամայեմ, կը կատարեմ:

— Հրամայեցէք խեղդվել, — նոյն սոպէին կը խեղդ-
վեմ, հրամայեցէք ջուրը ընկնել, — նոյն սոպէին ջուրը
կը ձգեմ ինձ, միայն թէ ձեր հրամանը կատարվի:

— Մի բան հարցնեմ, շշմարթը կը պատասխանես:

— Աղա, այդ ինչ խօսք է, որ դուք էք հրամայում.
մբթէ երբ և իցէ ես ձեր անաձներին սուտ պատաս-
խաններ տուել եմ, որ դուք այժմ կասկածում էք:

— Շատ լու, բայց վախենում եմ, որ այս անգամ
սուտ ասես:

— Էլ ինչ ասեմ, աղա, դուք ինձ բոլորովին վերա-

որում էք այս խօսքերով. հարցէք ու փորձեցէք:

— Ուղիղն ասա, դու մեր Թամարի հետ խօսնում ես:
— Ինչո՞ւ չէ. չորս տարի է ձեր տանը ծառայում եմ.
Ինչպէս կարելի էր, որ այդքան ժամանակ նրա հետ
ըլ խօսէի:

— Ի՞նչ ես խօսում նրա հետ:

— Ինչ պէտք է խօսի ծառան իր խանումի հետ,
նա ինձ հրամաններ և պատուէրներ է տալիս, իսկ ես
կատարում եմ:

— Բացի սբանից ձեր մէջ ուրիշ խօսակցութիւն
չէ եղել:

— Ծառայի և նրա խանումի մէջ ըլ գիտեմ էլ ու-
րել ինչ խօսակցութիւն կարող է լինել:

— Շուտ շուտ ես տեսնիլ Թամարի հետ:

— Երբ որ նրան հարկաւոր է եղել ինձ մի հրա-
ման տալու:

— Այդ ժամանակները նա քեզ հետ երկամը է խօ-
սել, թէ միայն հրամաններ է տուել:

— Բացի հրամաններից ուրիշ ոչինչ բանի վրա ինձ
հետ չէ խօսել:

— Ճշմարթն ես ասում:

— Թող Աստուծոյ կրակը իմ գլխին թափիլի, եթէ
ես ձեր առաջ սուտ եմ խօսում, բայց, աղա, ես չեմ
հասկանում թէ ինչ համար էք այսպիսի հարցեր տա-
լիս ինձ:

— Ոչենչ, այդ քո գործը չէ:

Մակար աղան լոեց և կրկին մտածողութեան մէջ ընկաւ: Նա ձեռքերը դարսեց մէջքին, ճակատը դարձեալ կնճռութեց, յօնքերը քարշ արաւ: Պարզ էր, որ մի միտք էլի նրան չարչարում էր: Նա բարկացած էր:

Գնալ շոբերդ կապիթ և պատրաստվեր, որ առաւոտը վաղ ճանապարհ ընկնես: Ես գլուխ տուի և հեռացայ իմ սենեակը: Թէ ինչ պատճառով էր Մակար աղան ինձ Բագու ուղարկում և ինչո՞ւ համար էր այդ հարց ու փորձը անում—այդ մասին երկար չը մտածեցի: Հէնց նրա առաջին խօսքերից ես լսկոյն հասկացի, թէ բանը ինչումն է: Իմ սատանայական միտքը արդէն եր հետեւանքները ցոյց էր տալիս: Շորես կապկը ելու համար բաւական եղաւ մի ժամ, յետոյ ես ընկայ անկողին քնելու, որ առաւոտեան վաղ զարթնեմ, բայց քունը փախաւ իմ աչքերից: Ես երկար ժամանակ անկողնիս մէջ տօրովում էի այս ու այն կողմ չը կարողանալով աչքես անդամ փակել: Ինձ չարչարում էր այն միտքը, որ Շ... քաղաքից հեռանալով, այն օրվանից ես այլ ևս չը պիտի տեսնէի Թամարի երեսը:

Այն սենեակը, ուր գեշերում էի ես, ծառաների սենեակից բաժանված էր մի բարակ տախտակեայ միջնապատով: Իմ մահճակալը գրած էր այդ միջնապատի տակ: Ծառաները սովորութիւն ունէին առ հասարակ գեշերները ուշ քնել: Նրանք լրանց գործերը միշտ

նելուց յետոյ հաւաքվում էին միասին և սկսում խօսակցել զանազան բաների վրա գրեթէ մինչև գեշերվաց կէսը: Սովորաբար նրանց խօսակցութեան նիւթը լինում էին աղա Գուլամեանցների ընտանեկան և առևտրական գործերը: Այդ երեկոյ նոյնակէս նրանք ժողովված միասին՝ շարունակում էին լրանց խօսակցութիւնը: Իմ ձրագը հանգցը էի, որ գոնէ մուլթ տեղ կարողանամ քնել, բայց ի գնիր,—քունը ինձանկաց փախչում էր: Ճարշակատեալ մի կերպ ժամանակս անցկացնելու համար, ես ականջս գէմ տուի տախտակի միջնապատի Ճեղքերից մէկին և սկսեցի ականջ դնել ծառաների խօսակցութեանը:

— Ինչ ուգում ես ասա, Գալուստ, Խաչին շատ խռովամանկ տղայ է, նրա ձեռքից ամեն բան կարող է դուրս գալ:

Լսելով իմ անունը, ես շատ հետաքրքրվեցի և ականջս աւելի մօտ սեղմելով Ճեղքին, շունչս հաւաքած սպասում էի թէ ինչ են խօսելու իմ մասին:

— Բայց Թամար խանումը այնակէս աղջեկ չէ, որ շուտ խարլի—ասած ծառաներից մէկը:

— Ինչքան էլ լսելոք լինի, Խաչին ձեռքից չէր կարող պրծնել:

— Ես էլի չեմ հաւատում, օր այդ շուրը Ճմարիս լինի:

— Դու չես կամենում, մի հաւատար, բայց դրա

մասին ամբողջ քաղաքն է լուսում այժմ։ Մի քանի ամես սրանից առաջ դու ինքդ տեսնում էիր, թէ քանի տեղերից էին առաջարկութիւններ անում, բայց այժմ ոչ ոք չէ ուզում մօտենալ։ Հէնց սրանից կարող ես խմանալ, որ ամենը, ինչ որ խօսում են, ձշմարիտ է։ Զէ, անիրաւը լսեղձ աղջկայ անունը լաւ խայտառակեց քաղաքում։

—Թէկուզ ամբողջ աշխարհը լսոսի, ես էլք չեմ կարողանում հաւատալ։ Թամարին ես լաւ եմ ճանաչում։ Նա այնքան զգոյշ աղջիկ է, որ հազար Խաչիներ հաւաքվելով միասին, էլք չեն կարող նրա միշտերին անգամ ձեռք մօտեցնել։ Ես կարծում եմ, որ այս սուտ լուրը ինքը Խաչին է տարածել, որպէս զի ոչ ոք չը մօտենայ Թամարին։

—Ինչ նպատակ ունի Խաչին այդպիսի սուտ լուրեր տարածելում։

Բանը այդ է, որ դու չես կարողանում հասկանալ, թէ ինչ նպատակ ունի։

—Եթէ դու հասկանում ես, ինդըն էնձ էլ հասկացնես։

—Ահա ասեմ։ Ես զիտեմ, որ Խաչին Թամարի գեղեցկութիւնով յափշտակված է և շատ վաղուց է, որ նրա վրա աչք ունի։ Բայց խորամանկ աղուէսի նման տեսնելով, որ խաղողը շատ բարձր է և դունչ չէ հասնում նրան, Ճարահատեալ ասում է թէ խաղողը խակ

է։ Նա լուր է տարածում, որ եթը Թամարը սկըսահարված է եր վրա և եթը վաղուց արդէն սկըսահարական յարաբերութիւններ ունեն։ Թէ Թամարը հաստատ խօսք է տուել իրան ուրիշ մարդու ըլք գնալ։ Խաչին այդ սուտ լուրը հնարել է և տարածել, որ մեր քաղաքում իմանալով Թամարի յարաբերութիւնը իր հետ, ոչ ոք չը մօտենայ նրան, որպէս զի վերջ է վերջոյ ազա Գուլամեանցնելով, որ նրան ոչ ոք չէ ուզում վեր առնել, ճարահատեալ պսակեն Խաչի հետ։ Ահա ինչ մտքով է տարածել Խաչին սուտ լուրը, ահա նա ինչ նպատակ ունի։ —այժմ հասկացամը թէ ոչ

—Բայց ազա Գուլամեանցները կը տան արդեօք Թամարին իրանց գործակատարին, որքան էլ որ նրա անունը ընկած լինի։

—Այդ դարձեալ մի և նոյն է Խաչի համար։ Նա այնպէս մարդ է, որ մտածում է այսպէս։ «ինձ չէ հասնում, թող գոնէ ուրիշն էլ չը հասնի»։ Բայց ես հաւատացած եմ, որ եթէ այդ լուրը շարունակվի տարածվել քաղաքում, ազա Գուլամեանցները կամայ ակամայ ստիպված կը լինեն Թամարին պսակել Խաչի հետ, որ քաղաքի բերանից ազատվեն։

—Սուտ են թէ Մակար ազան ուզում է նրան հեռացնել Բագու։

—Այսուհետեւ որտեղ ուզում են թող հեռացնեն, նա եր բանը վերջացրել է։ Թամարի քառը արդէն հորն

է ձգել և ոչ ոք չէ կարող նրան հանել այնտեղից բացի
Խաչից, «Բրավօ եօրդա Խաչի, բըալօ, — լաւ հնար գտար,
քո տնկած ծառը արդէն պատուզներ է տալիս: Վնաս
չունի, որ դու Թամաւից հեռանում ես, էլ այսուհետեւ
յոյսդ մի կտրեթք: Այժմ այլ ևս ոչ չի ուզենայ Թա-
մարին մօտենալ և իր անունը խայտառակել: Ամենքը
այժմ հաւատացած են, որ նա արդէն փշացած է, ու-
րեմն յոյս ունեցեր գու, որ աղա Գուլամեանցները այս
թքած պատառը ճարահատեալ քեզ կուտացնեն», ա-
սացի ինքս ինձ և վերմակը քաշելով գլխիս հանգիստ
քնեցի մինչև առաւտ:

VII

Բագուն ծովեղբեայ այդ նորածաղկ արդիւնաբե-
րական քաղաքը, շնորհով նաւթային արդիւնաբերու-
թեան յաջող դրութեան՝ այդ ժամանակները Անդը-
կովկասի մէջ մի առևտրական կենտրօն էր, ուր ամե-
նայն կողմերից գնում էր վաճառական տարրը և շա-
հախնդրական ձգումներին բաւականութիւն տալու
նպատակով: Դ հարկէ, զարմանալի կը լինէր, եթէ ազա
Գուլամեանցների նման յախտնի առևտրականները չը
մասնակցէին նաւթային արդիւնաբերութիւն ասված
արդիւնատէտ գործում, որը այդ ժամանակները մի ան-
սպառելի ոսկէ աղբեւր էր դարձել առևտրական դասա-

կարգի համար: Աղա Գուլամեանցները քնած մարդիկ
չէին, որ բաց թողնէին այդ ոսկէ աղբեւրը. ընդ-
հակառակի նրանք այնքան աչքաբաշ էին, որ շատ շա-
տերից առաջ էին սկսել խառնվել նաւթային արդիւ-
նաբերութեան մէջ:

Աբրահամ աղան, ինչպէս վերև լիշել եմ, մի ձար-
պիկ վաճառական էր: Նա այն հայ վաճառականներից
չէր, որոնք միշտ սպասում են, որ մի գործ ուրիշները
սկսեն, ու իրանք հետեւն նրանց: Նա առևտուրի մէջ
այնքան հեռատես էր, որ շատ անգամ կարողանում էր
շահեր գտնել այնտեղ, ուր ուրիշ առևտրականները մը-
տածել անգամ չէին կարող, թէ մի բան կայ: Այդ
պատճառով, երբէք չը զարմացայ, երբ՝ հասնելով Բա-
գու՝ հանգիստեցի աղա Գուլամեանցների մի այնպիսի
ընդարձակ գործերի հետ, որոնց հետ համեմատելով Ե.
քաղաքի առևտուրը ամենաչնչին մի խաղալիք էր:

Աղա Գուլամեանցները այստեղ ունէին մէծ քա-
նակութեամբ նաւթահողեր, մի քանի նաւթային շորեր,
մի ահագին նաւթագործարան, մի տակառագործարան
և մի քանի նոր շինութիւններ, որոնք Բագուի մէջ ա-
ռաջնակարգ տեղ պիտի բռնէին: Ես, Ճշմարիտ խոս-
տովանած՝ առաջին անգամ մտնելով այդպիսի մէծ
գործերի մէջ՝ մի տեսակ երկիւղ զգացի, ո մի գուցէ
չը կարողանամ այդ գործերը կառավարել և Աբրա-
համ աղան տեսնելով ի՞ն անընդունակութիւնը արտաք-

սե, թողնելով ինձ, ինչպէս ասում են, չոր տափել վրա: Բայց մտաբերելով իմ մինչեւ այդ ժամանակ ունեցած յաջողութիւնները, ես չը վհատեցի և Աստուծոյ անունը տալով (նեղ տեղ ընկած ժամանակ ես գիտում էին նրան) սկսեցի գործել:

Աբբահամ աղան առաջին անգամ ինձ հետ մի փոքր կակղութեամբ էր վարվում, այնպէս որ ես կարծեցի, թէ նա աւելի համբերող մարդ պիտի լինի, քան թէ Մակար աղան: Բայց յետոյ մի բանում նկատելով մի չնչին սխալ, նա այնպէս փոխվեց և կատաղեց ինձ վրա, որ ես իսկոյն հասկացավ, թէ ինչ տեսակ մարդու հետ գործ ունեմ:

Քանի որ Աբբահամ աղան Բագու էր գտնվում, ես գործերի կառավարութեան մէջ կատարում էի Երկրորդական դեր, իսկ երբ նա Ճանապարհվում էր Ռուսաստան՝ իմ գործերը բազմապատկվում էին և ես գտնում էի լիակատար կառավարիչ: Հարկաւոր էր մեծ հաւատարմութիւն գործակատարի կողմեց, որ աղա Գուլամնեանցները նման գորշ և խորամանկ մարդեկ յանձնէին նրան այդ գործերի կառավարութիւնը, որ գործակատարը, եթէ ուզենար, կարող էր նրանց գլխին լաւ օկններ բերել:

Յս ընդունում էի Ռուսաստանից եկած փողերը և յանձնում բամկու, կառավարում էի Փօտօգենագործառնը և այլն: Բաժանում էի գործակատարների, մշակ-

ների և ապհեստաւորների ուջիկները և վարձերը: Մի խօսքով ամենայն ինչ իմ ձեռքումն էր:

Նաւթային առևտուրի յաջող տարիներն էին: Աղա Դուլամեանցները Ճանապարհում էին Ռուսաստան մեծ քանակութեամբ Փօտօգէն, Փողը նրանց համար դառնել էր ինչպէս հասարակ ջուր: Իմ շահասիրական ծարաւը յագեցներու համար՝ իմ պաշտօը մի լաւ յարմար առելթ էր ինձ համար խմել այդ ոսկէ ջրեց: Ես աչքերս բաց արել:

«Նատ յիմար մարդ կը լինես, Խաչի, եթէ բաց թողնես այսպիսի յաջող հանգամանքները: Մի պատրաստի, քանդկած ոսկէ հոր է աղա Գուլամնեանցների գործը քեզ համար, օգտվիր դէպքով և քանի որ այս հորի մէջ ես, աշխատիր որքան կարելի է գրապանդ ամուր լցնել:» Բայց ինչպէս լցնէի գրապանս, որ աղա Գուլամնեանցները չիմանալին: Մեծ անհեռատեսութիւն կը լինէր իմ կողմէց, եթէ ես յափշտակվելով յարմար առելթեց՝ բանս դբստէի մի անգամից, որովհետեւ ես աչքի առաջ ունէի մի ուրեշ նպատակ ես, ես ցանկանում էի Թամարին ձեռքեց բաց չը թողնել: Աղա Գուլամնեանցներին փեսայ լինելը խիստ գըրգուում էր իմ ինքնասիրութիւնը: «Լաւն այն է ոչխարին այնպէս կնտել, որ նրան գգալի չը լինի, հարկաւոր է մկրատը զգուշութեամբ բանեցնել և թոյլ չը տալ, որ նա հասնի մինչեւ կաշին, եթէ ոչ քո անզգուշութիւնը կը հասցնէ քեզ վատ հետեանք-

ների—ասացի ինքս ինձ և մկնեցի կակղութեամբ կնտել ոչխարս:

Միջոցներ շատ կային. Ես նրանցից ընտրեցի այնպիսիները, որ հեշտ և ճեռնոտու էին: Ամսական մի անգամ ես բաժանում էի տակառագործների վարձը և մշակների ոռջելիները: Ոչինչ այնքան հեշտ չէր, քան թէ սրանց հաշիւների մէջ լառնակութիւն մտցնելը: Ես աղա Գուլամեանցներին տուած իմ ամսական հաշիւների մէջ ցոյց էի տալիս մի մշակի փոխարէն երկուսը, աւելացնում էի տակառների գինը: Օրինակ, մի տակառ շինելու համար, որ վճարել էի 1 ըուբլ, գորում 1—50 կ. և այլն: Գործակատարական բարբառում հաշիւների մէջ այդպիսի բանները կը նշանակէ «վերադիր» անել և ես ամենայն անգամ հաշիւներիս մէջ «վերադիր» մտցնելով, տեսնում էի, որ ամսալերչին ինձ համար աւելացաւ բաւական գումար.

Այսուել, ի հարկէ, իմ եկամտի ազբիւրը դառնում էր աղա Գուլամեանցների գրանը, բայց կար մի ուրիշ ազբիւր էլ,—այդ տակառագործները և մշակներն էին: Այս, որքան հեշտ էր այդ ողորմելիներին խաբելը: Ես այնպէս նրանց հաշիւները վերջացնում էի, որ դեռ երանք էին ինձ շնորհակալութիւն յախտնում: Եթէ պատահում էին սրանց մէջ այնպիսիները, որոնք հասկանալու իրանց խաբել սկսում էին ինձ հակառակիւր, ես դըանց հետ և երկար գլուխ չէի ցաւեցնում: Բա-

ւական էօ միայն մի քանի ասլուակներ տալ և նըանք իսկոյն խոնարհվում էին իմ առաջ հաւատացած մնելով, որ եթէ շատ երկարացնեն, կարող էի ես բոլորովին նրանց գրկել վարձից: Ուր պիտի գնային նրանք ինձ վրա գանգատովելու դատաստանին գիմեր՝ չէին կարող, որովհետեւ գիտէին, որ և գութ կանցնի երանց աշխատանքը, քանի որ չունենալով ոչինչ գրաւոր կապակցութիւն, ոչ մի փաստով չէին կարող հաստատել երանց սպահանջը: Ճարահատեալ վիճները ծռում էին իմ հարուածների տակ:

Այդպիսով ես շահված էի երկու կողմերից ևս: Առաջին՝ խարելով ազա Գուլամեանցներին և երկրորդ՝ հարսուահարելով մշակներին և արհեստաւորներին: Երկու տարուց յետոյ ես հաշիւ արի և տեսայ, որ ինձ մօտ գոյացել է մի նշանաւոր գրամագրութիւն, որով կարող էի բոլորովին հեռանալ ազա Գուլամեանցներից և ինքնուրոյն վաճառական դառնալ: Սակայն ես չը շտապեցի: Ինձ հագիւաւոր էօ առաջ գնաւի մի անգամ արգէն ըսկսել էի, այլ ես յետ կանգնելը ինձ համար անհնարին էօ: Ես սկսել էի իմ խարդախութիւնները, պիտի մինչև վերջը շարունակէի, մինչև որ հասնեմ իմ վերջին նպատակին: Մանրավաճառ Թորոսի ասած գաղտնիքը այլ ես ինձ համար պազգել էօ:

Բայց յանկարծ իմ վեճակը դարձեալ փոխվեց. մի օր Աբրահամ աղան ինձ հօտերեց եր մօտ և յախտնեց,

որ ես պիտի գնամ նրա հետ Ոռւսաստան կատարելու
այնտեղի գործերը: Այդ տեղափոխութեան պատճառը
ես գետէն լնչն էք: Աղա Գուլամեանցների ընտանիքը
տեղափոխվել էք Բագու: Ես իսկոյն հասկացայ, թէ
բանը լնչումն է: Ինձ հեռացնում էին Թամարեց, որի
մասին իմ տարածած լուրը քանի գնում այնքան գո-
րութիւն էր ստանում, չը նայելով որ ես երկու տարե
էք, որ նրան չէի տեսնում: Այս անգամ ևս ես հնա-
զանդվեցի Արքահամ աղայի հրամանին և մի գեղեցիկ
օր Ճանապարհվեցի նրա հետ Ոռւսաստան: Փոյթ չէ—
ասեցի ինքս ինձ—ես Թամարի վարկը այնպէս չեմ գր-
ցել, նրա անունը այնպէս չեմ խալտառակել, որ մէկը
վստահանայ անպատճել իր անունը և նրան մօտենայ:
Ինչ կուզեն, թող անեն Գուլամեանցները, էլի վերջ և
վերջոյ, Ճարահատեալ ինձ կը հագցնեն այդ կեղառու
շորերը»:

* * *

—Խաչի—ասաց մի օր ինձ Մօսկվայում Արքահամ
աղան ուրախ ժամանակը—դու քանի տարի է, որ մեզ
մօտ ծառադրում ես:

—Արդէն եօթերորդ տարին է:

—Այդ եօթ տարում դու քանի անգամ ես մեզա-
նից փող ստացել, մտարեցում ես:

—Զորս անգամ Մակար աղայից եմ ստացել, եր-
կու երկու հարեւրական ըուբլի, երկու անգամ էւ ձե-

զանից՝ հինգ հարեւը ըուբլի, ընդամենը հազար երեք
հարեւը ըուբլի:

—Ի՞նչ ես արել այդ փողերը:

—Ուզարկել եմ հօրս: Ի պահ ոմն բար:

—Անդ եօթ տարում ուրեմնամիայն այգեքան ուժ-
չիկ ես ստացել մեզանից: Իչի փյածոց ցը նոր բար:

—Այսուհետ չը ու գոյք ազդա, ծառապու:

—Քո ծնողներդ աղքամնի են: Հաս աղքամնի:

—Իմ ոոջիկս է միտին նրանց եկամուտը:

—Ուրեմն երեսում էր որ շատ աղքատ են ապրում:

—Մինևս անգամ իրանց ծերութեան ժամանակը
շատ օրեր քաղցած էն անցկացնում: Պայց մինչ պէտք

է արած, աղա, Աստուծոյ կամքն է, երկի նրանց Ճա-
կատին լաւ ապրուստ չէ գրած: Այս անց Արքահամ է ահագին

պօրտմօնին հանեց: Ան պատճենապահութիւն ու ծառապու:

—Առ այդ հազար մանէթը ասաց նա հանելով
10 հատ կանանց կաթէիրանոցներ և գնելով իմ առաջ
սեղանի վրա:

—Սըանից քեզ համար մի երկու ձեռք, լաւ հա-
գուստ գնիր, քո այժմեան հագուստը շատ հին է և կեղ-
տոտ: Մեր անուան համար լաւ չէ, որ դու այդպէս վատ
ես հագնվում, իսկ մնացեալները ուզարկիր հօրդ:

—Աստուծած ձեր կարողութիւնը տասն անգամ
աւելացնի, թող նա ձեզ միշտ իմ գլխին տէր սլահի,

որ ես էլ ձեր շուաքում ապօԵԼ կարողանամ:

— Բայց լաւ ծառայիր, Խարդախութիւն չանես իմ
գործերում

— Թո՞ղ ձեր հմ աչքերը կուրացնի, եթէ ես
մինչեւ այս ըստէ մտածել եմ, կամ այսուհետեւ մտածեմ
ձեզ կամ ձեր շահերը դէմ մի ծուռ միտք: Եթինքում
Ասուած, ներքեւ դուք էք ինձ համար. իմ խեղճը ինչ-
պէս թոյլ կը տայ ձեր դէմ խարդախութիւն անել:

— Լաւ, գնա՞:

Որպէս զի իմ շնորհակալութիւնը աւելի զգալի
կերպով արտայատեմ Արքահամ աղային, ես չոքեցի
նրա առաջ և մի քանի անգամ համբուրեցի նրա սեր-
տուկի փէշերը և կօշիկների ծարը: Արքահամ աղան
շընդիմացաւ այդ բանին:

— Ձեր ոտք դրած տեղը թո՞ղ իմ գլուխը մինի—
ասացի ես կեղծաւութեամբ ձայնս գողացնելով, որ-
պէս թէ զգացմունքից դրդված:

— Շատ ապրիս, լաւէ, վերկաց, մեշտ այդպէս
երախտագէտ եղիք քո աղաներիդ առաջ, մի մոռանար
այն մարդկանց լաւութիւնը, որոնք քեզ սկահմանում են
և պաշտպանում:

— Թո՞ղ Ասուած էլ ինձ մոռանայ և, իմ գլխին
թափվի դժոխքի կրակը, եթէ ես երբ և եցէ մոռանամ
ձեր ինձ արած լաւութիւնները:

— Բաւական է, գնա այժմ գործիդ:

Ես կրկին անգամ չոքեցի Արքահամ աղայի առաջ
և կօշիկները համբուրեցի, յետոյ վերկենալով ու յե-
տուկետ գնալով, գուրս եկայ նրա սենեակից:

«Խաչի—ասացի ինքս ինձ, աղայիելով անկողնում
այդ երեկոյին քաղցը քո երեսիդ ծիծաղում է: Ա-
ղա Գուշամնեանցներին կուրացըել ես, մանրալաձառ
թուսոսի խօսքերը կատարվում են, դու արդէն մտել ես
նրանց գրաւանը: Այժմ՝ քեզ պակաս է միայն Թամարը,
եթէ օրան ևս ճանկեն, այն ժամանակ քո մի քանի
տարի առաջ երեալայած մառաւոր ապագան այլ ևս
երականացած է: ուրեմն աշխատից Թամարին էլ ձեռք
քերել: Խորամանկութիւնը, շղողքորթութիւնը, կեղծա-
ւորութիւնը, ստախօսութիւնը, խաթեբայութիւնը զօրեղ
միջոցներ, են, նրանք օգնել են քեզ ժինչի այսօր, կօգ-
նեն քեզ և այսուհետեւ, մի բաց թողիր ձեռիցդ այդ
միջոցները»:

* *

Արդէն երեք տարի էր, որ ես Ոռւսաստան էի
գտնվում: Թէ ինչպէս էի անցկացըել իմ ժամանակը
այդ երեք տարուայ ընթացքում—այդ կը լինէր մի եր-
կար պատմութիւն, եթէ ես գըէի իմ լիշտակարանում: Այսքանը միայն կասեմ, որ իմ կեանքը շատ ուժախ և
գուարձալի էի անցկացնում Ոռւսաստանում, երբ Արքա-
համ աղան այնտեղ չէր լինում: Այդ ժամանակ ես որ
քաղաք որ գնում էի ամենաառաջին հերանոցումն էի

իջնում, ամենալթանգագին և ամենաընտիր կեսակուբ-ներն էի ուսում, ամենանուրբ եւսուական խմբներն էի խնում: Գիշերները մինչև լոյս անց էի կացնում զա-նազան զուարձատեղերում, թատրոնում, օպերայում, ցերեկում, յաճախում էի ամենաշռայլ ամենանբարու-չական հեքնարկութեմներ, ու միշտ համբած դրու-թեան մէջ լինելով վաղերը զպսում էի այս ու այն կողմը, բաշխում էի արև կամ այն հուրեին: Պատահել են այնպիսի ժամանակներ, որ են այս կամ այն ինձ նման գործակատարի ձեռից նրա սիրեցեալ տարփա-ծուին ջգոն ելելու համար, չէի խնայում հարփեանոց-ներ: Մի խօսքով այդ երեք տարին ես անց եմ կացըել իմ կեանքում շատ չքեղ և շատ ուրախ, իմ օդերը սա հում էին աննկատիելի կերպով, ես ինձ զգում էի դըամ-տի մէջ: Փողի համար մտածել ը կաթ, աղա Գուլա-մեանցների գըպանը ինձ համար բաց էր:

Խոկ երբ Աբրահամ աղան գալիս էր, ես խկոյն հագուստս էր, բնակարանս էր, ուտել խմելս էր փոխում էր և սկսում էր չափաւոր կեանք դաշել. որպէս զի իմ համեստութիւնը ցոյց տամ նըան:

Այդպէս անցան իմ կեանքի առաջին երեք տարի՝ ները մինչև որ պատուհեց մի անսպասելի դէպք, որը այնուհետեւ կրկին փոփոխութեան ենթարկեց իմ վի-ճակը: Առեւտուրի խառն ժամանակն էր, ես գանգում էի Նիժնի-Նօվգորոդեան-տօնավաճառում, իսկ Աբրա-

համ աղան Մօսկվայում: Մի օր յանկարծ ստացայ Մօսկվայից մի հեռագեր թէ Աբրահամ աղան մահա-մերձ հիւանդ է և պահանջում է ինձ: Ես խկոյն նոյն օրը Ճանապարհվեցի թողնելով բոլոր գործերը տակն ու վրայ:

Աբրահամ աղային ես խկապէս գտալ մահամերձ պութեան մէջ:

— Այս լինչ է պատահել ձեզ, աղա, լինչ քամբադ-դութեան հասցրեց ինձ Աստուած—գոռացի ես լացի ձայնով, ընկնելով նրա մահճակալի վրա և համբուրե-լով նրա ճակատը:

— Խաչի, քո աղան մեռնում է—պատասխանեց նա թոյլ ձայնով:

«Զհաննամը որ մեռնում է, մի քեզ էլ վազ պիտի մեռնէ»—ասացի ես մտքում:

— Աստուած ոչ անի, լինչ ես ասում աղա:

— Զէ, մեռնում եմ, Խաչի, այն անխճմտանքը իմ տունը քանդեց—շարունակեց Աբրահամ աղան տընք-տընքալով գլուխը բարձրացնելով բարձի վրայից:

— Ո՞լ է ձեր տունը քանդել, աղա, լինչ էք հրա-մայում—հարցը ես զարմացած:

— Հըեայ Շաբաթը տունս քանդեց նա... քառա-սուն հազար... քառսուն հազար... ախ...

Աբրահամ աղան ը կարողացաւ աւարտել եր խօսքը, նրա թուլացած գլուխը ընկաւ կրկին բարձի

վրա, ես նկատեցի նրա աշքերում արտասուր:

— Ի՞նչ քառուուն հազար, աղա, ասացէք տեսնեմ
թնչ է արել անիրաւ Շաբաթը ձեզ հետ:

— Փողերս կուլ է տալիս . . . հաշա է անում . . .
ասում է պարտական չեմ:

— Ո՞ր իրակերը:

Այս տարուայ Փօտոգէնի փողերը ասում է տուել
եմ Խաչին, կերաւ այն անխղճտանքը . . . էն, էն . . .

Սրբահամ աղայի ձայնը գաղձեալ ընդհատվեց:
Ես հասկացայ թէ բանը ինչումն է: Երկու ամիս առաջ
հրէայ Շաբաթի վրա ծախել էի 20 հազար պուդ Փօ-
տոգէն իւրաքանչիւր մի պուդը երկու բուրլով և փո-
ղերը զուտ ստացել: Թէ ինչ էի արել 40 հազար—այդ
իմ գործն է, իսկ Սրբահամ աղային յայնել էի թէ ա-
պառել եմ ծախել:

«Խաչի, զգուշացիք, բանդ նեղ տեղ է ընկել»—ա-
սացի ինքս ինձ:

Մի փոքր միջոցից յետոյ եկաւ բժիշկը. Ես նրանից
հարցը Սրբահամ աղայի յանկարծակի հիւանդութեան
պատճառը:

— Կաթուածահար է եղել—պատասխանեց բժիշկը:

— Ինչիցն է պատահել:

— Լիարին մարդկանց հետ այդ շատ ստէպ է պա-
տահում, երբեմն ամենաչին պատճառնելից: Սրբա-
համ աղայի կաթուածի պատճառը եղել է նրա շափա-

գանց բարկութիւնը.Պատմում են թէ նա գնացել է մի
հրէայի մօտ իրան հասանելի մի մեծ գումար ստանա-
լու, բայց հրէան մերժել է նրան հրաժարվելով իր
պարտքից: Սրբահամ աղան լսելով այդ անսպասելի
մերժումը, իսկոյն բարկութիւնից ուշաթափվել է և
հէնց այնուել ընկել կաթուած ստանալով:

— Այժմ յոյս կայ, որ նա առողջանայ թէ ոչ:

— Դժուար թէ, հարուածը շատ սաստիլ է եղել,
եօ մինչեւ անգամ յոյս չունեմ, որ նա մինչեւ երեկոյ
ասքել կարօղանայի: Աստիճանը ամ չէ չի կարուի
ասու «Աստուած տայ որ շապիկ» ատացի եօ մտքումս,
խորը հառաչելով: Բժիշկը մի հարկէ այնակէն իմացաւ,
որ ես ցաւալուց եմ հառաչում:

— Խաչի—դարձաւ ինձ Սրբահամ աղան բժշկի
հեռանալուց յետոյ:

— Հրամայեցէք աղա: Ա ուստի առ մյուս մյուս

— Ես մեռնում եմ, ներիք ինձ, ես քեզ շատ եօ
նեղացրել շատ շարշարել, ի զուր տեղը շատ եմ հայ-
հուել, իշոցներ տուել, ես քո առաջ մեղաւոր եմ, նե-
րիք . . .

— Ի՞նչ էք հրամայում, աղա, ես ինչ մարդ եմ, որ
դուք ինձանից ներողութիւն էք ինդրում:

— Զէ, ներիք . . . ներիք. ես քեզ կենդանու նման
շարշարել եմ, ես քեզ երէք մարդու տեղ չեմ դրել,
ես միշտ քեզ իմ կոշիկներից ստոր եմ համարել, ներիք,

Ես քո առաջիկ մեղաւոր եմ: Բացիս այն սնդուկս նըա
մէջ հինգ հազար մանէթ փող կատ վերցրու քեզ եմ
բաշխում, մեղքերիս փոխարէն: Այնու մաշն՝
— Ինձ փող հարկաւոր չէ, ինձ ձեզ կեանքնէ
հարկաւոր աղա—ասացի ես և էսկապէս արտավեցի:

— Հեռագրես, ասո՞ Մակար աղան շուտով ձանա-
պարհիվ, որ գոնէ գայ դիմակիս հասնի:

— Այս ըուէիս, իք կատարեկմ ձեր հսամանը:

Սըրահամ աղան մինչեւ երեկոյ սասամիկ տարու
թեան մէջ էս: Նա ցնորժած խօսում էս երկար, շուտ
շուտ գոռագով «կերաւ, կերաւ, անխղջմանը»: Նարա-
թը կլանեց քառսուն հազար, քառսուն հազար մե-
տախն ։ րոնեցէք նրան, բանս ձգեցէք, կողոպտեց,
տունս քանդեց»:

Իրիկնադէմ նրա լեզուն կապվեց, իսկ գիշերվայ
կէսին հոգին աւանդեց: Առաւոտեան ես հեռագրեցի
Մակար աղային նըա մահուան մասին: Ես քըքրեցի
Սըրահամ աղայի սնդուկը և բացի հինգ հազարեց ո-
չինչ չը գտայի:

«Այդ էլ մի բան է»—ասեցի և թագցրէ հինգ
հազարը:

VIII

Սըրահամ աղայի թաղումից անցել էր մի տարի:
Ես գտնվում էի բագվում:

Թամարը դեռ տանը նստած էր. նա սպասում էր

փեսացուի, բայց փեսացու չը կար իւ չը կար. աշխար-
հը չորացել էր, իսկ ժամանակը վազուց էր անցել: Ա-
զա Գումեանցների համար Թամարը մի ծանր բեռն էր
դառել, հարկաւոր էր այդ բեռնից, մի կերպ ազատվել:
Բայց լինչակս ազատվել:

Մի օր Մակար աղան հրաւիրեց ինձ իր առանձ-
նաօենեակը: Հրաւիրեց եմ ասում, սրովհետեւ այլեւ
ինձ նշ ոք հրամակել չէր կարող, իմ լեզուն երկարել
էր և աղա Գումանցները այլ վառչին կարող ա-
ռաջվայ նման ինձ հետ վարդիել ինչպէս մի ստրոմիկ, մի
անալին կենդանու հետ: — Խըստ մաշնացուցուց
— Խըստափօր Սերգէն, հրամայեցէք նստէք—
դարձաւ ինձ Մակար աղան, առաջարկելով ինձ աթոռ:

Տեսնում էք—կօշկակարթարասի տղայ «Եօրդա
Խաչին» այժմ Խըստօփօր Սերգէն է դառել և գոռող
աղա Մակար Գումանցները նըան աթոռ է առաջար-
կում: Դէ՛ս լվլվայ Խաչի, ինչպէս ձուկը ջրի մէջ:

— Ինչ էք կամենում ասել, Մակար Պետրօվին—
ասեցի ես համարձակօրէն «աղայի» փոխարէն Մակարի
պոչին կացնելով «Պետրօվիչը»:

— Ոչինչ, մի փոքր ուզում եմ քեզ հետ ժամանակ
անցկացնել: Այ տղա, Գալուստ շուա արա սուրբքը բեր—
դարձաւ նա ծառային:

Ես չը հաւատացի Մակար աղային, թէ նա ինձ
հրաւիրել է լոկ ժամանակ անցկացնելու համար: Նա-

յելով նրա դէմքին ես Եսկոյն հասկացայ, որ անշուշտ
մի կարեոր գործ ունի նա ինձ հետիւն ու առաջաւածուն ու
Ծառան երկու բաժակ սուրճ բերեց: այս առաջաւածուն ու
—Հըաժայեցէք, Խրիստօֆօր Սերգէյիչ, վերցրէք
ձեր բաժակը—դարձաւ դէպի ինձ Մակար աղան վերին
աստիճանի քաղաքավարութեամբ:

Ես, Ճմարիխն ասած, մինչեւ այն օրը սովոր չը
լինելով Մակար աղայի այդ տեսակ գարաբերութեան,
Խիստ խորթ թւաց ինձ նրա վարժունքը և ես մի փոքր
յուզվեցի: Թէև այլ ևս ոչինչ կախումն չունէի ոչ ոքեց,
որովհետեւ արդէն ապահովված էի, Բայց ինն տարի
ծառայելով աղա Գուլամեանցներին, ինն տարի ուրիշ-
ների հրամանները կատարելով, ինն տարի նրանց ձեռ-
քում հաստրակ մեքենայի գեր կատարելով, ես կամայ
ակամայ կորցրել էի իմ ինքնուրոյնութիւնը, մեռցրել
էի իմ սեպհական զգացմունքները:

Ընտանեկան և առեւտքական զանազան գործերի
վրա խօսելուց յետոյ Մակար աղան յանկարծ խօսակ-
ցութեան նիւթը փոխեց:

—Խրիստօֆօր Սերգէյիչ, քանի տարի է, որ դու
մեր գործերում ծառայում ես—հարցրեց նա յանկարծ:

—Անցեալ գարնան ինը տարին լրացաւ, այժմ
տասներորդն է—պատասխանեցի ես:

—Քանի՞ տարեկան կը լինէիր մեզ մօտ մտնելու
ժամանակ:

—Տասն և եօթ տարեկան:
—Ուրեմն այժմ քսան և վեց տարեկան ես:
—Տասն և եօթ, այն էլ ինը—այս, ուղիղ 26 տա-
րեկան եմ:
—Բաւական մեծացել ես, ասաց Մակար աղան
ժպտալով:
—Այս, փոքր առ մոռքը մօտենում եմ ծերութեան:
—Ի՞նչ ես ասում, դեռ քո ծերանալոր ժամանակը
չէ, ապրել է հարկաւոր քեզ, Քեզ նման ջահիւ տղե-
րանց՝ ծերութեան մասին մտածել հարկաւոր չէ:
—Այժմեան ջահիները ձեզանկց շուրջ են պա-
ռաւում, Մակար Պետրօվիչ:
—Քո ասածը Ճմարիխ է, բայց գիտես ինչեցն
է այդ:

—Ինչիցն է, Մակար Պետրօվիչ, հարցրեի ես, հե-
տաքըքըութեամբ:

—Նրանից, որ այժմեան ջահիները չեն պսակ-
վում և իրանց կեանքը անց են կացնում շուրջու-
թիւնով:

—Պսակվողները միթէ չեն պառաւում:

—Պառաւում են, բայց ժամանակին և ոչ թէ չը
պսակվողների նման մի քսան տարի ժամանակից առաջ:
Ես պսակվելիս 37 տարեկան էի, բայց այս վեց տա-
րում ես բաւական զանազանութիւն եմ գտնում իմ ա-
ռաջլայ և այժմեան առողջութեան մէջ և շատ ափ-

սոսում եմ, թէ ինչու մի տասը տարե էլ առաջ չը պը-
սակվեցի: Ես այժմ եմ հասկանում, թէ պսակվել ինչ-
քան օգտաւէտ է մարդուս: Սլսալված եմ համարում
այն մարդուն, որը ժամանակին չի պսակվում: այսին
— Լաւ կը մինչը, եթէ ամեն մարդ կարողութիւն
ունենար և պսակվէր, բայց շատերը իրանց չոր գլուխը
չեն կարողանում պահել, լինչափս կարող են ընտանիք
պահել, որ պսակվեն:

— Ու որ ուզենայ պսակվել կարողութիւն էլ կը
գտնի:

— Ո՞րտեղից է կարող գտնել որ չը կար: Օրինակ,
ինձ նման մարդ լինչափս կարող է ծառայելով ընտա-
նիք պահել ասեցի ես գիտմամբ, հասկանալով մա-
սամբ Մակար աղայի միտքը:

— Քանի որ մարդ մէնակ է, Աստուած էլ նրան
մէկի ապրուստ է տալիս, բայց երբ որ նա պսակվի՝
Աստուած նրա ընտանիքի հոգան էլ կը քաշէ: Օրինակ,
դու այժմ ծենակ ես, նա քեզ քո ապրուստը տալիս է,
բայց երբ պսակվես քո ընտանիքի հոգան էլ կանէ:

— Եթէ իմանամ որ Աստուած կարողութիւն կը
տայ ապրելու, հէնց վաղը կը պսակվեմ:

— Փորձիր և տես կը տայ թէ ոչ, Արթ, Ճշմարիտ,
Խրիստոֆօր Պետրօվիչ քեզ պսակենք: Վաղուց եմ մը-
տածում, որ հարկաւոր է քեզ պսակել և շատ ժամա-
նակ է, որ մի լաւ, սիրուն աղջիկ աչքի առաջ ունեմ

քեզ համար + ասաց Մակար աղան կըկին ժամալով:

— Ո՞վ է այդ աղջիկը, Մակար Պետրօվիչ, ես գե-
տեմ, որ ձեր հաւանած աղջիկը անպատճառ լաւ կը
լինի, Հարցը ես միամիտ ձևացնելով ինձ:

— Մի երենի, հարուստ և աղնի ընտանիքի աղ-
ջիկ, որի վրա շատերը աչք տնենի:

— Ո՞վ է այդ ընտանիքը:

— Մեր ընտանիքի նման մի ընտանիք է:

— Ես այս քաղաքում ձեր ընտանիքի նման ուրիշ
ընտանիք չեմ ճանաչում:

— Որին որ ճանաչում են հէնց այն է:

— Հաւատացնում եմ, որ ձեր ասածը ես չեմ հա-
կանում, Մակար Պետրօվիչ:

— Այս քողէիս կը հասկանաս:

Մակար աղան գրանը խիեց և նոյն բոպէին իմ
առաջ ներկայացաւ աղա Գուլածեանցների ամբողջ ըն-
տանիքը:

Ես նկատեցի նրանց մէջ գլուխը քարչ ձգած և
ամօթից կարմրած Թամարին, որի ձեռից բռնած ներս
բերեց Մակար աղայի ամուսինը:

— Այս քեզ այս այն ընտանիքը և այդ էլ իմ ասած
աղջիկը: Հըմ, այժմ ճանաչում ես թէ ոչ, բայց մտիլ
արա, — ասաց Մակար աղան, բռնելով Թամարի ձեռից
և առաջ քաշելով: Ես ամօթից կարմրեցի և ը կարո-
ղացայ ոչինչ խօսել:

— Զեռք ձեռքի տուէք, Ես ձեզ վաղուց եմ ի՞մ
մտքում նշանեց բայց այսօր եմ յայտնում:

— Ես անզգայաբար ձեռս մեկնեցի Թամարին:
Գործողութեւնը այնքան յանկարծակի եղաւ, որ Ես,
Ճշմարիտը ասած, մնացել էի շուարած:

— Ի՞նչ էք սառեւ այս կինեկի Գալուստին հրամակի
շամպանսկից բերել:

Անցան առաջին վայրկեանները և Ես փոքր առ
փոքր ուշքի գալով, ակսեցի ուշադրութեամբ քննել ի՞մ
դըութիւնը:

— Աստուած շնորհաւոր անի, բարեկ շուտով պը-
սակենք, — ասաց Մակար աղան, դատարկելով շամպա-
նիայով լի բաժակը:

— Ամեն, ամեն, Աստուած շնորհաւոր անի, — կը կնեց
ամքողջ ընտանիքը միաբերան:

— Ես առանց քահանայի նշանեցի վաղը նրան
էլ կը կանչենք, որ «պահպանեց» ասի, որ բանը վեր-
ջանայ, — ասաց Մակար աղան, մի մեծ բրիլիանտի մա-
տանի անցկացնելով իմ մատին, միւսը Թամարին:

«Եօրդա Խաչի, բանդ շինվեց, բայց մի յափշտակ-
վեր, ոտք ամուս գեր» — մտածեցի Ես իսկոյն:

— Մակար Պետրօվիչ, Ես արժանի չեմ այս փառքին:
— Ամենեց արժանաւորը դու Ես, Ես հինգ մինչև

այսօր Թամարին քեզ համար եմ պահել:
— Զէ, Մակար Պետրօվիչ, ինձ նման աղքատ

մարդը անարժան է ձեր նման հարուստ ընտանիքի
փեսայ դառնալուն:

— Սնև արա, դատարկ, դատարկ մի դուրս տայ,
աղքատին հարստացնելը Գուլամեանցների ձեռքում մի
դժուար բան չէ: Տասն ու հինգ հազար մանէթ պըի-
դանը Թամարի գլուխն է:

«Փառք Աստուածոյ, Ես էլ հինց այդ էի ուզում լսել
քո բերանից» — ասացի մտքումս և մատանին քաշեցի
մատիս:

Պէտք է ասած, որ այն օրուանից երբ Թամարը
գրաւել էր իմ ուշադրութիւնը, Ես երբէք մի անգամ
էլ ինձ չեմ տուել այն հարցը թէ արդեօք ինքը Թա-
մարը կ'համաձայնի իմ ամուսինը դառնալ: Ես այդ
հարցով գլուխ ցաւացնելը աւելորդ էր համարում որով-
հետեւ գետէլ որ Թամարի կամքը ոչինչ նշանակութիւն
չէր կարող ունենալ: Աղա Գուլամեանցների ընտանի-
քում, ինչպէս վերը լիշել եմ, դեռ տիւրում էր ասկական
բոնակալութեան ոգին: Այսուեղ Թամարի համակրու-
թիւնը կամ հակրկութիւնը դէպէ եր նշանաձը ոչինչ
նշանակութիւն չէր կարող ունենալ: Այսուեղ ամենայն
ինչ կախուած էր ընտանիքի մեծ անդամներից, ինչպէս
սրանք կամենային այնպէս էլ պիտի հնազանդուէր Թա-
մարը: Նա իբաւունք չունէր և չէր համարձակուել մա-
զու չափ անզամ հակառակել եր ծնողների կամ մե-
ծերի ալս կամ այն վճռին, հակառակ դէպում նա կը

Ճնշվէք սրանց բռնակալութեան ներքոյ: Այդ պատճառով ես Թամարի կամքը չէի ուզում իմանալ. այդ աւելուրդ աշխատանք կ'լինէք իմ կողմից: Ես սկզբից մինչև վերջը աշխատութէի միայն ագուել Մակար աղայի վրա, սրանից էր կախուած ամենայն բան, սրա վճռի դէմ Թամարը երբէք բողոքել չէր կարող:

Եօթ տարի է, որ ես Խրիստօֆօր Սեբէէլս աղա Սրուչանովս աղա Գուլամեանցների փեսան եմ: Նստած եռյարկանի սեպհական տան մէջ, իմ առանձնասենեակում, գործերից ազատ ժամանակ, ես երեմն երեմն մտաբերում եմ իմ անցեալը և համեմատում նրան ներկայի հետ: Յիշում եմ այն աղքատ ընտանիքը, այն խոնաւ և կեղտու բնակարանը, ուր ապրում էի ես տասն և եօթ տարի սրանից առաջ, յիշում եմ ես այն պատառութած ցնցոտիները, ծակ կօշիկները, որ ես հագնում էի այդ ժամանակ, յիշում եմ ու համեմատում իմ այժմեան դրութեան հետ և ինքս ինձ վրա գարմանում: Յիշում եմ այն օրը, երբ հայրս հրաւիսեց երբարեկամներին մեր տուն, տէր Վահակի մօտ ուսումն աւարտելուց յետ, իմ ապագայի մասին խորհրդակցելու: Յիշում եմ գարբեն Մարութե տուած յիմար խորհրդը, որ ես արհեստաւոր գառնամ, յիշում եմ և իմ այժմեան դրութիւնը համեմատում եմ Մարութե որդու դրութեան հետ, որը նոյնպէս պարապում է գարբնու-

թեամբ և որը այսօր իր հօր նման կեղալի և մուրի մէջ հագլւ հազ քաշքում է իր կեանքը: Յիշում եմ այն բոլորը և մասոք եմ տալիս Աստուծուն, որ իմ հայրս չը հետևեց դարբնի խորհրդին: Իսկ ինչ վերաբերում է մանըավաճառ Թորոսին, որը այսօր մեր քաղաքի մէջ առաջն դրամատէն է՝ ես նրա տուած խըստները երբէք չեմ մոռացել և չը պիտի մուտանամ մինչև իմ կեանքի վերջը: Մտաբերում եմ նրա հօրս ասած խօսքերը—թէ «տուը Խաչին մի վաճառականի մօտ գործակատար և նա շուտով կը գտնէ փող աշխատելու գաղտնիքը: Մտաբերում եմ նրա խրատը թէ «կեղծաւորիը և շողոքութիւր քեզանից մեծերին և զօրեղներին, սուտ ասս և խարիս քեզանից թուլերին, եղիք խորամանկ ինչպէս օձ, միամիտ՝ ինչպէս ոչխար:

Ես այդ բոլորը արել եմ և պիտի անեմ այսուհետեւ: Ես գրաւեցի աղա Գուլամեանցների հաւատարմութիւնը, նրանց «կեղծաւորելով, շողոքութելսվ» և մտայ նրանց գրականը: Ես հարստահարել եմ մշակներին և արհեստաւորներին «սուտ ասելով, խարելով»: Վերջապէս ես Թամարին խլեցի աղա Գուլամեանցներից խորամանկութեամբ և ամենաստոր միջոցներով»:

Այդ բոլոր ստորութիւնը ես արել եմ առանց ինքըս ինձ հաշիւ տալու, առանց դիմելու իմ խղճին և նրանից թուտվութիւն խնդրելու: Նոյնը անում եմ և այժմ աւելի ընդարձակ կերպով: Ես կեղծաւորում, շողո-

քորթում և ստորանում եմ այն անձանց առաջ, որոնք
ինձանից ուժեղ են և որոնցից ես շահ եմ սպասում:
Խարում եմ և Հարստահարում ինձանից թուլերին,
ձնշում և Հալածում եմ իմ ձեռքի տակ գտնվող գոզ-
ծակատարներին, ծառաներին, ծակներին և արհես-
տաւոքներին ինչպէս բռնակալ: Ոչ ոք չէ կարող իմ
կամքին դէմ կենալ, որովհետեւ ես փող ունեմ, ես
հարուստ եմ և բոլոր ուզում եմ, որ իմ առաջ ստրուկ-
ներ լինեն: Իմ կամքը, ակտիվ լինել օրէնք ինձանից
նիւթական կախումն ունեցողների համար, իմ «եսը»
պիտի լինել նրանց տիբապետողը:

Ոչ ոք չէ կարող նրանցից համարձակվել հակա-
ռակելու իմ կամքին, իմ, ԽրիստոՓօր Սերգէիւս աղա
Արուշանօվի:

ՀՐԴԵՀ ՆԱՒԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

առաջարկ հովանակ մատուցած բառու ըմբայս նուն զըստ
շուն ունի ու անդ պատճեանաբարձիւ պամառու ըմբայս
մէ նախապատճառ և ըլքանակիւ անուս ուն ու հովանա
շուն մատուցած ու անդ ուժամբ ուժամբ ուժամբ ուժամբ
ուժամբ ուժամբ ուժամբ ուժամբ ուժամբ ուժամբ ուժամբ
ՀՐԴԵՀ ՆԱԻԹԱԿՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Մի պատկեր Բագուի մշակների կեանքեց)

—Աղա, զաւոդը այթվում է:
Իվան Գրեգորիչ Մաքութեանցը մի միջնահասակ,
չաղ և բաւական ջահել մարդ էց եւթօպական ուե հա-
գուստի մէջ: Նըս լիքը, կուրուկ և մաքուր սափրած
երեսի կարմիր գոյնը մի վայրկեանում թռաւ դժբաղդ
լուրը լսելու ժամանակ:

—Ե՞րբ, որ ժամին և զաւոդի որ կողմից է սկսել
հրդեհը, վերին աստիճանի անհամբեցութեամբ և հրա-
մայաբար հարցնում էր նա երկու փոքրիկ և խորա-
մանկ աչքերի բիբերը արագութեամբ շուռ տալով և
ձեռքերը տարածելով դէպի առաջ: Կազմես թէ նա
ուզում էր կատաղաբար յարձակվելու շարագուշակ լրա-
բերի վրա և տեղն ու տեղը խեղդել նրան:

—Կըակը երեացել է մօտաւորապէս երեք քա-

ոորդ ժամ սըանից առաջ—դողդոջուն ձայնով պատասխանեց լրաբեր երկելածութեամբ յետ ու յետ քաշվելով: Ես նոր գործս վերջացրել և պատճառավում էի քնելու, երբ ականջիս հասաւ մի տրաքոցի ձայն: Ձայնը սաստիկ էր, կարծես թէ ամբողջ զարողը քարուքանդ էր լինում...: Ես մի քանի ըոսկէ մնացի շուաթած... չը գիտէի լինչ անել, ուր վազել: Մի կերպ խելքս գլուխս հաւաքեցի և դուրս թռայ: Հէնց այն վայրկեանին, երբ ես կամենում էի առաջ վազել, մէկէլ տեսնեմ աջ կողմից, կաթսաների բաժնից բոցախառն ծուխը դուրս է փչում... իսկոյն հասկացայ, որ մեծ նաւթակաթսաներից մէկը ինչպէս և իցէ պատռվել է: Կըակը դիմում էր գէպի իւղ մաքրելու բաժինը: Մշակները զարթել էին և օրը ակլոր, օրը հագուստով, ամենքը դիմեցին կըակ երեացող տեղը հրդեհի առաջը կապելու, իսկ ես իսկոյն առանց գործակտարից թոյլտուութիւն խնդրելու վազեցի քազաք, որ ձեզ յայտնեմ:

Իվան Գրեգորիչի կուրծքը անհամբեր շնչառութենից արգութեամբ բարձրանում և ցածանում էր: Մի քանի վայրկեան լուռ մտածելուց յետ նա դիմեց ծառաներից մէկին, որոնք բերանները բացած ուշադրութեամբ լսում էին լրաբեր խօսքելը:

— Այս վայրկեանիս լծվի իմ կառքը, ես առանց ըոսկէ ուշանալու պիտի գործարան հասնեմ:

Ծառաները վազեցին աղաւի հրամանը կատարելու:

— Վերջը իմ տունս կը քանդեն, ինձ կը սնանկացնեն, յետին ազգատութեան մէջ կը ձգեն, օրուայ հացին կարօտ կը դարձնեն այս անիծվածները... այս անպիտանները... մարդու կերպարանք ունեցող այդ անխիղջ գազանները... այս... այս... այս:

— Թող Աստուած պատժի այն չաղ մարդուն, որը համարձակվել է այս վնասոր ձեզ հասցնել... թող այս գիշերվայ հրդեհի կըակը նրա գլուխն թափիի: Աստուծոյ կամքն է, աղա, մենք լինչ անենք, մենք խնդիտմամբ չենք կըակ գցում ու այրում ձեր գործարանը:

Լրաբերը այս ասելով գտակը ձեռքին հեռացաւ պատի տակ: Ընդգարձակ նախասենեակի պատից քարը տուած կանթեղի ճառագայթները մի ըսովէ տարածվելով նրա նաւթախառն մուրի մէջ կորած բարձր հասակի վրա, լուսաւորեցին նրա սե և կեզտոտ դէմքը:

Խետաբոյս յօնքերի տակից փայլեցին անսովոր վիշտ և հոգեկան ախուր տրամադրութեմ արտայատող սե աշքերը: Բաց գլուխ ալեխառն մագերի բնական գոյնը կորել էր թանձը կեղտի և նաւթային մուրի տակ:

— Մշակը ովէ է, որ նրա Աստուածը ովէ լինի—գոռում էր Իվան Գրեգորիչը կատաղի առեւծի նժան: Մըշակը Աստուած չունի, նրա Աստուածը փայտն է: Եթէ դուք Աստուած ունենալիք, մի տարուայ մէջ իմ գործարանը երկու անդամ չէր այրվի: Եթէ դուք խիղջ և հոգի ունենալիք ձեր կեանքը կը գոհէիք և չէիք թողնի,

որ ձեր աղին, ձեզ կերակրողին վնաս հասնէք: Լրաբերը լուռէք, նա գտտէք, որ Դվան Գրեգորիչի Ենքնահաւան բնաւորութիւնը սաստիկ թշնամի է ու ըեների հակախօսութեան, նա մանաւանդ այսպիսի դժբաղդութեան ըոսէներում:

—Աղա, Փաէտօնը պատրաստ է, ներս վազեց ծառան:

—Ես գնում եմ, որու էլ վազիք այս ըոսէիս գործարան—դարձաւ աղան դէպի լսաբերը:

Մի քանի ըոսէից յետոյ երկու սևագոյն նժոյգներով լծած փառաւոք կառքը թանգագին, տաք մուշտակի մէջ փաթաթված Դվան Գրեգորիչին տանում էր գործարան:

Հիւսիսային քամին փչում էր, անձրևի կաթեները բռնի գօրութենով զարկվելով կառքի պատուհաններին կրկնապատկում էին Դվան Գրեգորիչի յուզմունքը: Կարծես թէ բաւական չէ մարդկանց չարամտութիւնը, մըշակների անխղջութիւնը, բնութիւնն էլ մի կողմնոց էր գործ դնում իր խստութիւնը հակառակի նժան հէնց այս գեշեր բարձրացնելով ներհակ քամի հրդեհին աւելի ոյժ տալու համար:

Այդ բոլորի մասին նվան Գրեգորիչը կառքի մէջ մտածելով այնչափ կատաղած էր, որ քիչ էր մնում բարկութիւնից տրաքիլի երան գործարանի նաւթակաթսի պէս: Ժամանակ ժամանակի կառքի պատուական գործարանի մասին առաջարկ էր առաջարկ այդ մէջ թաղելով իր ոտերը: Յանկարծ նա կանգ-

հանեց գլուխը դուրս բերելով մտիկ էր անում հեռաւոք կրակի լուսաւորութեան, և անհամբերութեամբ հրամայում էր կառապանին քառորդ ժամում գործ դնել երկու կշտակեր և առոյդ ձիերի մի ամբողջ շաբաթվայ հանգստութենից ստացած ոյժը և գօրութիւնը:

Հասնելով քաղաքի ծայրը, կառապանը մի անգամ ևս մտրակեց ձիերին և կառքը անհետացաւ գիշերակին խաւարի մէջ: Խոկ լրաբեր դուրս վազելով մողոց ազայի տունից, առանց վայրկեան յապաղելու, ճանապարհվեց դէպի գործարան: Նա չը պետի ուշադրութիւն դարձնի ոչ քամու և ոչ էլ անձըեկ վրա, նրան հրամայված է ինչպէս և եցէ շուտ տեղ հասնել: Նա չէր կարող ուշանալ այսպիսի ըոսէներում ամենաշնչին թուլութիւնը մշակի կողմից ազայի աչքում մեծ յանցանքի է փոխվում:

Այրվող գործարանը քաղաքից եւեք վերստացափ հեռու էր գտնվում: Լրաբերը հանապարհը կարձելու համար ծովի ափով էր գնում: Լայնատարած ծովի ալիքների շիշվոցը գիշեսվալ խաւառ մթնոլորդի մէջ տարածվելով, անախորժ երկիւզալի տպաւորութիւն էր անում մարդու վրա: Ոչ մի շնչաւոր արարած, ոչ մի կենդանի առարկայ չէր երկում ծովափում, բացի այդ սե և վիթխարի մարդուց, որ գիշերվայ ութուականի նման հսկայական քայլերով շտապում էր դէպի առած, խորը աւագի մէջ թաղելով իր ոտերը: Յանկարծ նա կանգ-

նեց կարծես թէ մի բան մտարենելով և երկու ձեռւքը մեքենաբար խփելով ճակատին մի բոպէ անշարժ մնաց:

—Ո՞վ Աստուած, եղբայրս և փոքր որդիս հրդեհեց քեզ առաջ պառկել էին քնելու... բայց մըտեղ էին նրանք պառկել... այն, այն... մտարենում եմ, չէնց այն կողմում... ուր որ կաթսան տրաքվել էր... նրանք ըստիմանալով մեր ընդհանուր սենեակի ըստին, այս գիշեր տեղափոխվել էին կաթսաների բաժինը վառարանի մօտ քնելու: Աստուած իմ, թնչ կը պատահի նրանց եթէ ժամանակին չեն զարթներ... այբովդ նաւթը ուղղակի նըրանց կողմն էր ցատկում... նրանք իմ աչքովը չընկան:

Երկնակամարը կրակի լուսից շառագոնել էր, քամու զօրութենեց բոցը կատաղաբար այս ու այն կողմ էր տարածվում... ամբողջ Սև քաղաքը ծուխի մէջ թաղվել էր: Լըարերը սկսաւ եր յոգնած ոտերին ուժ տալ:

*

*

Տեղ հասնելով, Իվան Գրիգորիչի առաջին հայեցքը հազեւ կարողացաւ ճանաչել կրակի և ծուխի մէջ կորած գործարանը: Սև քաղաքի հասարակութիւնը պատել էր հրդեհի շուրջը կազմելով մի օգաճե շրջան, որի մէջ տեղը այբովում էր մի ընդարձակ խարոյիկ: Այս ու այն կողմերից վաղում էին մարդիկ, որոնց մըստ գէմքերի վրա ոչինչ զայրացման նշաններ չէին նկատ-

վում: Այդպիսի և սրանից աւելի գորեղ հրդեհներ նըրանց համար սովորական գէպքեր են:

—Աստուած սիրէք... մօտեցէք... օգնեցէք... մի վախենաք... ես փող կը տամ, կը վարձատրեմ օգնողնեցին—եղաւ Խլան Գրիգորիչի առաջին բացականչումը, որը գլխակոր վագելով ամբոխի մէջից ձգտում էր գէպի կըակը:

—Մի մօտենաք, աղմ... առաջ մի վագէք, վտանգալի է—գոչեցին այս ու այն կողմից ամբոխի միջից յետ մղելով նրան:

Բոցը երկու զօրեղ մասերի էր բաժանվել, որոնց մէկը գուրս էր գալի մի յարկանի տան վլատակված կտութից, գունեցից ու պատուհաններից—սա այբովում էր իւղ մաքրելու բաժինը, իսկ միւսը—տասն ու հինգ քայլ հեռաւորութենում մի գետնափոք շինութեան միջից գուրս ձգելով, սրնթում էր ահագին բարձրութեան ամբողջ շինութեան տարածութեան չափով—սա բոցավառվել էր նաւթային մնացորդի պահեստը: Խալ այդ երկու բոցաշտարակների մէջ տեղը ներկայացնում էր կատարեալ երական դժոխք: Այդ կաթսաների բաժինն էր, որտեղից առաջին անգամ կըակը սկսվելով տարածվել էր երկու կողմերը: Այստեղ արդէն ամենայն ինչ վերջացած էր, ոչ մի առարկալ կըակի ճանկերից չէր ապատվել: Բացի մի քանի երկաթէ կաթսաներից, որոնք երանց միջին գերաբորբոք, կիստապատրաստ-փօտոգէնի

յանկարծակի բոցալառութեան ճայթումից պատուվելով
այս ու այն կողմ էին գլորվել.—ամենայն ինչ մոխիր
դառնալու վրա էր:

Խորտակված պատերի ճեղքերից բոցախառն ծուխը
դուրս գալով, ոլոր մոլոր պատումներով միանում էր բոցի
լայնաշրջան աշոարակի հետ, ինչպէս փոքրիկ գետակ-
ները հոսում են ընդարձակ գետի մէջ զօրացնելով նրա
կատաղի ընթացքը:

Գործարանի բակը ծածկված էր խառնիձաղանձ
ամբոխով... ոտ զնելու տեղ չը կար: Իվան Գրեգորիչը
բազմութեան առաջ կանգնած կարգադրութիւններ էր
անում: Ամբոխի միջից մի քանիսը զանազան խորհուրդ-
ներ էին տալիս նրան:

—Այդ միջոցներով անհնարին է բան առաջաց-
նելը. հարկաւոր է Նօբէլի գործարանից հրաշէջ նա-
սօններ բերել տալ—ասում էր մէկը:

—Այն, այն, միայն Նօբէլի գործեքները կարող են
այդ կրակին յաղթել—աւելացնում էր մի ուրիշը:

Սրանք հարեւան գործարանատէրեր էին, որոնք
ոչ այնքան իվան Գրեգորիչը մասին էին հոգում, որքան
վախենում էին որ մի գուցէ հրդեհը մինչև իրանց գոր-
ծարանները հասնի:

Իվան Գրեգորիչը չէր լսում նրանց:

—Օքնեցէք... շուպեցէք... ես մող կը տամ...
չուր հասցրէք, ինչ էք սառել... անպիտաններ... քան-

գեցիք գուք իմ տունը, սրբկաններ... գողեր... աւազակ-
ներ—անդադար հայկուում էր նա մշակներին շուարված
այս ու այն կողմ վազլգելով:

Հրդեհը շիշելուն բացի Խվան Գրեգորիչը գործա-
րանի մշակներից օգնում էին և ուրիշ գործարանների
մշակներ ու կողմնակի մասինիկ: Միայն առաջինները
գործում էին ուղղակի կրակի դէմ ու դէմ, ամենավը-
տանգաւոր տեղում, իսկ վերջինները աշխատում էին որ-
քան կարելի է հեռուց գործել՝ խոյս տալով կատաղի
բոցի ալիքներից: Առաջինները հրաշէջ նասօնների խո-
ղովակների ծայրերից բռնած շփում էին ջուրը կրակի
դէպի գորեղ կենտրոնը, որտեղից բոցը ջրի ամենայն մի
զարկին խուլ արձագանքներ էր տալիս,—իսկ վերջին-
ների մի մասը հեռուց նասօնների կռնակներն էր պը-
տըտացնում, երրորդ մասը ջուր էր աւելացնում նա-
սօններին: Մշակների մի ուրիշ խումբ թիերով հող էր
սիրում երկու կողմերից նաւթափին մնացորդների բո-
ցավառոված պահեստի վրա:

Մի քանիսը Իվան Գրեգորիչը մշակներից անգի-
տակցաբար այն առայնան մօտացել էին կրակին, որ
ամբոխը նրանց փոխարէն սաթսափում էր: Տօթը խեղ-
դում էր նրանց, կրակի տաքութիւնը կիզում էր նրանց
կիսամերկ մարմինները, խոշոր կայծերը անձրեւ նման
հեղեղվում էին նրանց գլխին, բայց խորասուզված ի-
րանց գործի մէջ կարծեն թէ նրանք ոչինչ չէին զգում:

Ամենայն վայրի եան նըանց նաւթաթաթակացնցոտիները սպառնում էին բոցավառվել թափվող կարծերից: Մեքանի ուրիշ բանւորներ այդ թշուառներին վերջին վրտանգից ասպահովելու համար բաւական հեռուից մի փոքրիկ նասոսուլ ջուր էին սրոկում նըանց վրա:

Թեթևամեմ ամբոխը շատ ժամանակ լինաձք առաջ կատարվող ամենաոզբալը տեսարանների մէջ անգամ ինստինկտաբար ձգտում է գտնել որ և իցէ նիւթեր վայրենի զուարձութեան համար:

—Մենք էլ գնանք ուամս վերջնների վրա ջուր ածենք—ասում էին մի քանիսը ամամօթաբար ծիծաղելով:

—Գնացէք... իսկ մենք էլ այսուեղից ձեզ վրա հող կածենք, աւելացնում էին ուրիշները նոյնպէս ծիծաղելով:

—Ինչ լաւ չաղ կրակ է, տղերք, խորովածի համար—ասում էր մէկը բեխերը շփելով:

—Ոչխաներն էլ պատրաստ են խորովելու, միայն հարկաւոր է մի քեզ ևս նըանց կրակին մօտացնել—մէջ մտաւ մի ուրիշը, մատով շնչյատալով հրդեհաշէջ մշակների վրա, որոնք այդ ժամանակ բոլորովին կրակին էին հասել: Բոցը զօրանում էր... ամբոխը շը դիմանալով շոքին սկսեց աստիճանաբար հեռու ու հեռու խոյս տալ: Փախէք... փախէք... հեռացէք... պատը քանդ-

վում է—գոռաց յանկարծ միաբերան ամբոխը սեղանելով միմեանց և աւելի յետ մղվելով:

Բարձրացաւ մի խուլ որոտաձայն, մի ձայն որ նըանում էր հարիւրաւոր հրացանների միամատանակ արձակման ձայնին: Մեքայրկեանում մթնեց բոլորը և ամբոխի առաջ ամենայն ինչ կորաւ թանձր խաւարե մէջ: Բոցը, ծուխը, կրակը, մուրը և խորտակլած պատի հողափոշին խառնվելով իրարու աներևոյթացըն հրաշէջ մշակներին:

—Վայ գլուխս... վայ մէջքս կոտրվեց... մհ Աստուած... օգնեցէք... մեռայ...—լսվում էր խաւար գեհենի միջից:

—Ուերս միշրվեցին... վայ... վայ... մհ խեղդուեցի, Աստուած... օգնեցէք, գուրս բերէք ինձ այստեղից, ոչինչ չեմ տեսնում—գոռում էին մի ուրիշ կողմից:

—Զեռքս... ձեռքս... մյ... մյ... մյ... մի մօտենաք, Աստուած սիրէք... այրվում է ձեռքս... ուփ... ուփ:

Ամբոխը մոռացաւ ծիծաղը ու կատակը ամենքի երեսների վրա երևացին յուսահատութեան նշաններ... սարսափը տիրեց բոլորին, ոչ ոք չիմացաւ թէ ինչ եղան...ուր աներևոյթացան առաջի կարգի հրաշէջ մըշակները: Լսվում էին միայն աղերսանքի, ցաւի հառացանքներ, օգնութիւն խնդրող ձայներ, բայց յայտնի չէր թէ ո՞ր կողմից էին գալիս նրանք և ինչտեղ էին աղերսողները:

Յովշաննու երևակայութեան տարտարոսը անգամ չէր կարող մըցել այս երական դժոխքի հետ: Իվան Գրեգորիչի բարկութեանը ու շփոթութիւնը փոխել էին անորոշ սարսափի: մի վայրկեան առաջ նրա կատաղի դէմքը այժմ արտայալառում էր ներքին ահ ու դոզ: Անշարժ արձանի նման նա մի տեղում սառել էր և չը գետէր թէ ինչ անի, նա կամեցաւ առաջ վազել, բայց չը կարողացաւ, որովհետեւ անհնարին էր: Ծովսը ու փոշին խառնվելով մուրի, մոխրի և բոցի հետ կազմել էին նրա առաջ մի անթափանցելի խաւար տարածութիւն:

Յանկարծ ամենայն ինչ պարզվեց և նրա առաջ բացվեցաւ մի ողբալի տեսարան: Այս ու այն կողմ թաւալվել էին թւով մինչև վեց մշակների դիմակներ: Երեսում էին նոյնաէս և ոտի վրա մի քանի ուրուականանման պատկերներ, որոնցից մէկը բոցավառված, խելագարի պէս այս ու այն կողմ էր վազվզում բացականչելով.

— Օգնեցէք . . . հայ քըստոնեաներ . . . օգնեցէք . . . խղճացէք . . . մարմինս այրվում է . . . շնուտ . . . շուտ հող ածեցէք վրաս . . . ջուր . . . ջուր . . . ջուր . . . նւֆ . . . նւֆ Աստուած, սիրոս այրվում է . . . եփվեցի . . . խաշվեցի . . . խորոված դառայ:

Տեսարանը սոսկալի էր:

Սա տարիքը անցկացրած մի ծերունի էր, որի

գեւրաբորբոք ցնցոտիները բոցավառվել էին և խաշում էին նրա մարմինը կենդանի, կենդանի, լնչպէս միջնագարեան ինկվեզցեալ թշուառ զոհերեց մէկը:

Իվան Գրեգորիչը երեսը շուռ տուեց, նրա նըրացած զգերը անզօր էին դիմանալ մի այդպէսի այլանդակ պատոկերի առաջ: Ամբոխի միջեց շատերը սիրտ առնելով վազեցին առաջ: Ուժեղներեց մէկը ոտքի մի զօրեղ հարուածով բոցավառված ծերունուն գլորեց գետինը, մնացեալները սկսեցին այս ու այն կողմից հողով ծածկել նրա մարմինը կեսակենդան թաղերով ողորմելի զառամմեալին: Այդ միակ միջոցն էր, որով միայն հնարաւոր էր հանգցնել նրա այրվող ցնցոտիները:

— Խաշվեցի . . . նւֆ . . . նւֆ . . . այրվեցի . . . խուլ ձախով հաւաչում էր ծերունին հողի տակից: Նըրա դէմքը այնչափ այլանդակվել էր, որ ներկայ եղողներեց շատերը կէս սարսափով և կէս զգուանքով ծածկում էին իրանց աչքերը նրան չը տեսնելու համար:

Ուֆ . . . ալի Աստուած, շնուտ առ հոգիս . . . ազատիք տանջվելուց . . . մի շարարի—շարունակում էր ծերունին թաւալվելով հողի տակ: Բայց որդիս . . . Բէյրութը . . . նւր է նա . . . նւր ես որդիս . . . Բէյրութ դու էլ կորար: դու էլ այրվում ես . . . հօրդ նման . . . վայ . . . վայ . . . որդի . . . եկ, դու էլ խաշվում ես. վերջին անգամ հօրդ տես. նա մեռնում է . . . կինս . . . որդիքս ազգկերք . . . ջուր . . . ջուր . . . նւֆ միտս այցուց . . .

Վերջին խօսքերը արտասահնելու ժամանակ ծերունու ձայնը աստիճանաբար փոխվում էր, հետզհետէ թուլանալով:

—Այսուեղ եմ հայրիկ... դու ինչտեղ ես... որդիկ մօտդ է գալիս—գոռաց մի տասնեռութ, քսան տարեկան երթասարդ՝ ձախ ձեռքի վրայ յենած եր աչ թեր, որի այբակած կաշին պարկելով մերկացրել էր կարմիր միսը:—Այս... այս... կծկծում է սիրտս... ուփ, Աստուած սիրէք, մի մօտենաք թերիս... նա այրվում է... ուփ... ուփ... վայ... այս ով կապա ինձ... մի մոտենաք, Աստուած սիրէք... թերս... թերս... կծկծում է:

—Հեռացիր թշուառ, մի մօտենաք հօրդ. քեզ տեսնելով խեղճ ծերունին կոկծից կը մեռնի—բացացականչեցին ամբովի միջից:

—Բայց ուր է նա... Ավտուած սիրես, թոյլ տուէք ինձ նրան տեսնել... նա գուցէ մեռնում է... թող գոնէ վերջին անգամ տեսնվենք միմեանց հետ:

—Բէյրութ... Բէյրութ... եկ, այսուեղ եմ... մօտեցիր մեռնում եմ... ոհի... ոհի... այրվեցիր... պապակվեցի—բացականչեց ծերունին կամենալով ոտի կանգնել:

Մի քանի վայկեան հայր և որդի չը կարողացան ձանաշել երաբու: Ծերունու ալեոր միթուքը խանձվել է երեսում կուչկուցվել:

—Աման..., այս ինչ օրի ես ընկել, հայրիկ, ասեց

որդին խելագարի պէս արձակվելով չոքած ու ծունկերի վրա թաւալվող ծերունու վրա:

—Օ... օ... օ մի կաչիթ մարմնիս... նա այրվում է... կծկծոց է տալիս... հեռուեց... հեռուեց խօսիր:

—Կուբանան իմ աչքերը... այս ինչ եմ տեսնում ես... այս ինչ կրակ է... ուս ուս... ուս... թես... թես, մի կաչէք ինձ Աստուած սիրէք:

—Այս ինչ եմ լսում որդիս... Բէյրութ... դու էլ... ես այրվել:

Մի վայրկեան ծերունին մոռացաւ իր այրված մարմնի կոկիծը և երկու ձեռքերով մեքենաբար փաթաթվելով որդու վզին շարունակից աղերսել:

Մինչդեռ սրանք, հայր ու որդի, հեծեծելով գըրկած երաբու խմում էին անտանելի ցաւի և կոկտանքի դառն լեղին, մի քանի քայլ նրանցից հեռու կատարվում էր մի ուրիշ աւելի ողբալի տեսարան:

Իբրև գժոխային անդունդի յատակից վեց գիտաւալ մշակների միջից լսվում էին սիրտ պատուատ մորմօքաձայներ և այդ չէին նմանվում մարդկային ձայների, այլ մորթվող անտառների վերջին բառանցումներին և յուսահատ թառանչքին: Թաւալվածներից երկուսը արդէն անշնչացած էին, նրանց այրված ու այլանդակված դէմքերը այլ ևս չէին կրում երանց վրա մարդկային գէմքի ոչ մի նշան, նրանց աչքերի բերերը դուրս էին ցցվել երբեւ խորոված շագանակներ

մոխրի մէջ: Գլխի ու երեսի մագիրի ու յօնքերի հետքերը անգամ ըլ կային. Նըանց գլուխները նմանվում էին թէժ կըակի միջից դուրս բերած մսի կտորների: Չորս մարդիկ աշխատում էին սըանց գիտակները մի կողմ քաշել:

Մեր քանի քայլ հեռու այդ դիակներից մի երեսասարդ մշակ նստած գետնի վրա, եր ձեռքերը հողի մէջ տրորելով, բացականչում էր:

— Զեռքերս... ուփ... ուփ... խաշվեցին... սպասակվեցին... Տէր Աստուած... բայց ի զուր... նա մոխրի դառաւ... մեռաւ նա... իմ այրվող ձեռքերը ըլ կարողացան ազատել նըան... իմ հօրեղբօրը... ոհի այն ինչ սարսափելի մահ էր, որով նա մեռաւ... երանի... երանի... հազար երանի կը լինէր եթէ նա հինգ ասրի առաջ գիւղում... եր ընտանիքի, եր զաւակների մօտ փըշը եր հոգին սառը անկողնում... քան թէ այդ խայտառակ գէհէնի մէջ... ուփ... զուր... Աստուած սիրէք, փոքր զուր... սիրտս այրվում է... շոք է... շոք... ուփ: Նրա թէժացած աչքերից գլուխնեցին արտասուքի մի քանի կաթիլներ և նա ձեռքերը տանելով դէպի աչքերը թուշեց իր սլոկված մատերի ծայծերը: Կարծես թէ այդ աղի կաթիլները կարսող էին զովացնել նրա սիրտը:

Սըանից մի փոքր հեռու լսվում էին խուլ աղօթքի ձայներ:

— Ո՛վ միակ Աստուած և դու, Մուհամմէդ նըա

մեծ մարգարէն, տէսնում էք ձեր սուրբ աչքերով, որ մենք ինչ սարսափելի կերպով ենք տալիս ձեզ մեր հոգին, ընդունեցէք նրան և մոռացէք մեր հազար ու մի մեղքերով լի անցեալը: Մենք այրվեցինք այս աշխարհում գեալուրի պատրաստած կըակում՝ բայց գըթացէք մեզ վրա և մի թողէք, որ այն կեանքում ևս այդպէս այրվենք ու խաշուենք: Լայ... լայ, Իլլալլահ, Մուհամմէդ Բասուլ Ալլահ... Ռուհի ջեաննաթ...

Այդ պարսիկ մշակներն էին, որոնցից մէկի գըլուխը քարը ջարդելով երկու պատառ էր արել և փըշում էր իր վերջին շունչը, իսկ երկուսի նոյնակս զանազան տեղերը ջարդվել էին մահացու վէօքերով:

Ամբոխը խառնվել էր այնպէս, որ ոչ ոք այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում հրդեհի վրա, որը այդ ժամանակ սկսկել էր փոքր առ փոքր մեղմանալ:

Իվան Գրեգորիչը գոռում էր. Աստուած սիրէք... օգնեցէք... հրդեհը... հրդեհը մի մոռանաք նըան... այդ վերաւորվածներին յետոյ էլ կարելի է ժողովել, բայց գործարանս, գործարանս նա ձեռքեց գնում է. Նա պարվեց, վերջացաւ, տունս քանդվում է, և սէր Աստուածոյ խղճացէք:

Բայց Իվան Գրեգորիչը գոռոցների վրա ուշադրութիւն դարձնողներ քիչ եղան, աշխատում էին միայն նրա հարեւան գործարանատէրերի մշակները, որոնց տէրերը ստիպում էին ըլ հեռանալ գործելուց, մինչև

որ բոցը չի դադարի իրանց գովծաբաններին վտանգ սպառնալուց:

—Մենք չենք կարող այս թշուառներին անտէր, անօգնական թողնել ու հրդեհի մասին աշխատել գոռում էին ամբոխի միջից դէպի իվան Գրիգորիքը—եթէ այդքան մարդիկ զոհ են դառնում մի բոլէում հրդեհին, ուրեմն թող նա անխնայ լափէ քո անիծեալ գործանդ էլ, քեզ էլ, որ այդ թշուառ զոհերի կորստեան պատճառն էք:

—Այն, այն, դու ես դըանց այրվելու պատճառը, եթէ դու ժամանակին քո անիծեալ նաւթակաթսաները և վառարանը շնել տայիր, այդ դժբաղդութիւնը չէր սպատագի ոչ քեզ, ոչ էլ այդ խեղձերին:

Գործակատարը, որ իվան Գրիգորիքին շուաքի նման հեեւում էր ուր նա վազվզում էր. դարձաւ դէպի նա և ասեց:

—Իվան Գրիգորիք, խորհորդ եմ տալիս հեռու կանգնել այդ չարամիտներից, ով գիտէ ձեզ ինչ վնաս կը հասցնեն, նրանք մեր մշակների ընկերակիցներն են, նրանք այժմ գազանացած են և Սստուած գիտէ թէ ինչեր չեն մտածում:

Իայց իվան Գրիգորիքը բանի տեղ չէր դնում ոչ ամբոխի սպառնալիքը և ոչ էլ իր գործակատարի խորհուրդը: Նրա ուշք ու միտքը կենտրոնացած էր միայն և միայն հեղեհի վրա և նա ամբողջ մարմնով դողում

էր թէ ահա կըակը հասնելու է ֆօտօգէնով լիք տակառների պահեստին, որ մօտ հագար լիք տակառներ կացին: Սակայն այդ երկեւզը աւելորդ էր, որովհետև հրդեհը այլ ևս այնպէս սաստիկ չէր, ինչպէս տասը բուէ առաջ: Կարծես թէ նա իր վրէժը արդէն հանած հանելով կամենում էր հանգստանար:

Քամին դադարել էր, բոցը այլ ևս կատաղաբար այս ու այն կողմը չէր տարածվում, այլ հանդարտ ու ուղիղ գծով բարձրանալով վեր, լուսաւորում էր ներկայ եղող ամբոխը, ուրը գումարված թշուառների շուրջը զանազան օգնութիւն էր հասցնում այդ խեղձերին:

Այդ ժամանակ ամբոխին վազելով մօտեցաւ յանկարծ մի բարձրահասակ մարդ, որի գէմքի վրա նկատելի էին խորին յուսահատութեան և անորոշ երկեւզի նշաններ: Նրա ծունկերը ծալվում էին և դժուարութեամբ հնարանդվում նրա գնացքին:

Սա արդէն մեղ յայտնի լրաբերն էր:

—Թողէք... թողէք տեսնեմ ուր են..., ուր են որդիս, եղբայրս... Աստուած իմ... նրանք ուր են... միթէ... միթէ այրվել, վերջացել են նրանք... միթէ դեակներն էլ անդամ չեն ազաավել:

Ամբոխը ձանապարհ տուեց նրան և նա շտապով մտաւ մէջտեղ:

—Ո՞ւր էք, որտեղ էք, խօսացէք... Սարգիս... Գասուար... Ո՛ւ այս բէլըութն է, իմ եղբօր որդին...

ախ միթէ դու էլ, դու էլ ես վայրել, Բէյրութ...

—Ե՞ս... Այս... բայց իմը ոչինչ, խեղճ հայրս, ծեռունին... նա մեռաւ... ահա նա... մեռաւ նա, մինչև վերջը... իր ընտանիքի անունը լիշելով... նա վերջին շունչը փշեց քո անունդ տալով.,, «գոնէ մինչև իմ եղբօս «Մէհրաբ» վերադառնալը ապօնմ» կրկնում էր նա հոգին փշելով:

—Ո՞ւր է նա ցոյց տուր ինձ նրա դիակը, բայց իմ որդին, Սարգսը, նա որտե՞ղ է:

—Այստեղ եմ, հայր... ոհ մի մօտենար աղաւում եմ ձեռքս, նա այրվում է... կծկծում է... մի կազիք ձեռքերիս... ուՓ. ուՓ, թես:

—Վայ, իմ աչքերին, այս լինչ եմ տեսնում ես... կուրանամ ես.,. այդ լինչ են դառել քո ձեռները Գասպար...:

Մէհրանը մօտեցաւ իր որդուն, բայց վերջինը արտասուբք աչքերում ցոյց տուց նրա եղբօր՝ ծերունի Սարգսի դիակի վրա: Մի ըստէ Մէհրաբը մնաց քարացած, նրա արտասուբքից չոր ու ցամաքած աչքերը մեքենաբար դառնում էին կամ իր ծերունի եղբօր վրա, կամ որդու, Գասպարի այրված ու կուշ եկած ձեռքերի վրա, կամ իր եղբօր որդի Բէյրութի կաշուց մերկացած աջ թեւք վրա: Իսկ ամբոխի զայրացած ուշադրութիւնը նրա վըրա էր:

Այդ տարօքինակ գիրքում նրա ածխագոյն դէմքը

ու բարձր ու բարակ հասակը պատկերացնում էր մի մուալլ մարմարոնեայ արձան, որի միայն բոցավառ աշքերն էին խախարում ընդհանուր անշարժութիւնը: Երեք սուր դաշոյններ մէաժամանակ ցցվել էին նրա կուրծքի մէջ, որոնցից մէկը, եղբօր մահը, թափանցել էր մինչև սրտի խորքը խփելով արևնը գլուխը:

—Ո՞ւմ մեղքն է... ո՞լ է պատճառը այս գոհերի... ումից կարող եմ առնել վրէժը... միթէ կըակեց... բայց ինչպէս—վազել ու գլխիվայը թաւալվել նրա մէջ —ահա ինչպէս կաշելի է վրէժինդիք լինել... ահա լինչը կարող է մխիթարել ինձ...

Այս ասելով նա երկու ձեռքերով սկսեց ուժգին հարուածներ տալ իր բաց, ալեխառն մազերով ծածկված գլխին: Ամբոխի մէջ շատերի աչքերից արտասուբքը աղբեւրներ էին թափվում:

—Վայ..... բաս..... ես ինչ պատասխան տանեմ քո գաւակներին,. ես լինչ պիտի ասեմ քո պառաւ կնոջ... նրա աչքը ճանապարհին է մնացել... նա սպասում է իր ծերունի մարդուն, որը՝ հեռու քաղաք է գնացել վող վաստակել: Լաւ վաստակեցիր.... լաւ կը վայելեն քո եօթը գաւակները, որոնցից ամենամեծը ահա այստեղ անդամալոյն է դառել:

Իվան Գրիգորիչը լսելով այդ գոռողը, մօտեցաւ մի ըստէ ամբոխին:

—Ի՞նչ ես այստեղ գոռզուոց բարձրացրել ևն-

լագար... թնչ բղաւելու ժամանակ է... գործարանս ձեռից գնում է, ոու այստեղ գոռում ես. վազիր, ասում եմ, օգնիր այնտեղ:

Մէջը ոչինչ չէր լսում, նա երեսնիվայր ընկած եր եղօր գիակի վրա բառանչում էր: Ամբոխը մնաց զայրացած Խվան Գրիգորիչի անտեղի հրամանի վրա:

Նրա եղբայրը այրվել մոխիր է դարձել, նրա որդու ձեռքերը եր հօրեղոօ ազատելու ժամանակ խորվիել են, նրա եղբօր որդու աջ թևը կուշ է եկել այրված, իսկ ոու այժմ, այդ դժբաղդից օգնութիւն ես պահանջում: Անխիղճ, անսասուած. նա այդ թշուառութենում ինչպէս կարող է օգնել քո անիծված գործարանին— գոռացին ամբոխի մեջց մի քանի տաք գլուխներ:

— Մի և նոյն է, էլ այսուհետեւ նրա գոռալը օգուտ չի տայ. Թող կը կը հանդարդվի, այնուհետեւ ինչքան կամենայ կարող է գոզուալ: Վերկաց ասում եմ— դարձաւ նա Մէջը արին իր կօշիկի ծայրով մի հարուած տալով նրան:

Մէջը մեքենաբար գլուխը բարձրացրեց, դառն տանջանաց կնիքը գրոշվել էր նրա ձակատի վրա, աչքերը փայլում էին ներքին հոգեկան վշտերի կայծերով: Դէմքը արտայալում էր լսելագար բարկութիւն: Նա նմանում էր այդ դրութեան մէջ մի կատա-

ղի և յուսահատուած առիւծի, ոըը պատրաստվում էր յարձակվել եթ թշնամու վրա:

Մի վայրկեան նա այդ անշարժութեան մէջ մը-նաց: Խվան Գրիգորիչը կէս բարկացած և կէս երկեղալիք գէմքով շուարված նայում էր նրա վրա:

Յանկարծ Մէջը կայծակի արագութեամբ վեր թռուտ տեղից...


Ճա... Ճմարիտ է ասում աղման, պէտք է նրա հը-րամանը կասարել, պէտք է օգնել, ես պարտաւոր եմ աշխատել:

Նա կամեցաւ առաջ շարժել, բայց ծունկերը չը հնագանդվեցին, գլուխը ծանըութիւն արաւ և նրա վեթխարի մարմինը կայծակնահարի նման անշնչացած թաւալվեց Խվան Գրիգորիչի ոտների առաջ, իր եղբօր սկացած գիակի վրա:

— Գործարանս, գործարանս.. Աստուած սիրէք, նա փշանում է... տունս քանվեց:



100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
999
1000



15208

2013

